Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

241
Լ-51

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ

ԱՌԱՔՔ

Ս. ԱԼՓՈՆՍՈՍԻ

ՂԻԳՈՒՐԵԱՑ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

11456

276-Ա2
4936-ա
59
35468-66

ԽՐԱՏ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԿԵՆԱՑ

Ամէն շաբաթ կամ գոնէ տասնուհինգ օրն անգամ մը խոստովանէ գիտուն և բարեպաշտ խոստովանահօր մը, նախ ընդհանուր խոստովանանք մ'ըլլալով և միշտ խիղճդ ու սիրտդ իրեն բանալով նաև արտաքին բանիերուն մէջ, որպէս զի սիրտդ և խիղճդ հանդարտ ըլլայ՝ թէ Աստուծոյ կամքը կը կատարես։

Ջմռոնաս տօները սուրբ պահել, ծառայական գործերէն ու մեղք զգուշանալով, բարի գործեր կատարելով, մանաւանդ հիւանդաց այցելութեան երթալով, եկեղեցական հանդէսներու, քարոզի և ասոնց նման բաներու։

Առտու անկողնէդ ելածիդ պէս խաչելութեան կամ սրբոյ պատկերի մը առջև ծնրադիր՝ առաւօտեան աղօթքն ըսէ։

Սուրբ պատարագը տես, և պատարագի ժամանակ կամ ուրիշ ատեն կէս ժամ մը կամ քառորդ մը մտածականով անցուր (ս-ր-ա հ-մ-ր՝ ր-ե՝ ը-ն-ը-ը ր-ե՝ ս-ր-ե-ց-ն-ը-ը ր-ե՝ ս-ր-ն-ս-ը-ը լ-ե-խ-ա-ր ն-ե-ր-ս-ե-ր-ր-ե-ն ն-ը վ-ա-ղ-ը-ն-ի-ն ա-ն-ի-ն ա-ն-ը, ք-ա-յ է ա-ն-ի-ն ա-ն-ք-ա-ռ-ա-ն մ-ա-ն-ա-ւ-ո-ր ն-ե-ր-ս-ե-ր-ր-ե-ն-ի-ն)։

Ի՛նչ ցաւաքութիւն ալ զգաս, ի՛նչ գրաղանք ալ ունենաս, մտածականը զանց մի՛ ըներ, գործիդ ժամանակն ալ կրնաս ընել։ Սուրբն Ալփոնսոս Լիգուորի կ'ըսէ՝ թէ, եթէ մտածականը չթողուս, անշուշտ կը փրկուիս։

Գործի մը ձեռք զարնելէդ առաջ ըսէ։

«Տէր, քու սիրոյդ համար կ'ընեմ այս գործս. դու օրհնէ այս գործս»։

Օրուան մէջ յիշէ միշտ՝ որ Աստուած զքեզ կը տեսնէ, կը լսէ և պիտի դատէ, ու ըսէ։

«Յիսուս իմ ողորմեա՛. սուրբ Աստուածածին ողորմեա»։ Նոյնը ըսէ հեռաձգիլ՝ փորձութեանց ատեն. թէ որ փորձութիւնը չանցնի՝ դու հաւատքով ու վստահութեամբ առաջ տար աղօթքդ, և ապահով եղիր որ կը յաղթես։

Փախի՛ր դատարկութենէ և չար ընկերներէ, ու աննամեստ և եղբայրսիրութեան դէմ խօսակցութենէ։

Զգուշացիր ամենայն զգայարանացդ պահպանութեանը, մանաւանդ աչքիդ, կոկորդիդ և լեզուիդ։

Թէ որ յանկարծ մեղք մը գործես, մէկէն զղջում ըրէ. և թէ որ ծանր ըլլայ մեղքը, փութա խոստովանիլ։

վշտացդ մէջ ստէպ ըսէ.

«Ամէն բանի մէջ օրհնած և միշտ և յաւիտեան փառաւորեալ ըլլայ Աստուծոյ արդար, գերագոյն և հաճոյական կամքը», (100 օր-ան ներդրում է-ն ֆի-մ ը-ը, և լե-կո-ր՝ տ-րէ մը ը-ը)։

Կերակրէն վերջը, գոնէ տօնի օրեր, կէս ժամ մը կամ քառորդ մը հոգևոր գիրք մը կամ սրբոց վարք մը կարդա. հտքը սրբութեան ու Աստուածածնի այցելութեան գնա։

Իրիկունը ընտանիքով վարդապանը ըսէ, պատկերէն առաջ ծունկ դրած շնորհակալ եղիր Աստուծոյ, լոյս խնդրէ, խիղճդ քննէ և գղջում ըրէ,

Անկողին որ մտնես, օրհնած ջրով երեսդ խաչակնքելէդ վերջը՝ ծնոքերդ խաչածև կուրծքիդ վրայ դնելով ըսէ.

«Պիտի մեռնիմ, չեմ գիտեր ո՛ւր... չեմ գիտեր ի՛նչպէս... չեմ գիտեր ե՛րբ...»,

«Յիսուս, Յովսէփ և Մարիամ,

սիրաս եւ հոգիս ձեզի կու տամ. Յիսուս, Յովսէփ և Մարիամ, վերջի հոգեվարութեանս ատեն քովս գտնուեցէք. Յիսուս, Յովսէփ և Մարիամ, հաշտ ընդ ձեզ հոգիս աւանդեմ»։

(300 օր-ան ներդրում է-ն ա-նէ)։

Միշտ արթուն կեցիր աղօթելու. առանց աղօթքի բաւական շնորհք չենք առնուր՝ Աստուծոյ պատուիրանքները պահելու և մինչև վերջը յարատևելու. ուստի ո՛վ որ կ՚աղօթէ՝ կը փրկուի, ով որ չի աղօթեր՝ կը դատապարտուի։

Ամէն կիրակի և խոստովանանքէդ առաջ կարդա աս խրատներս և քննէ ու շտկէ քու պակասութիւններդ, և ճշդութեամբ պահէ։ «Ջայս արա և կեցցես»։

ԽՐԱՏՔ ԱՌ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՍ

Կարճ է կեանքը և մահն ատոյգ,
Իսկ մահուան ժամն անստոյգ.
Մէկ հոգի մը միայն ունիք,
Թէ ան ալ կորսուի ի՞նչ կ'ըլլայ.
Կը տեսնէ զիս Աստուած,
Պիտի դատէ զիս Աստուած,
Արքայութիւն և կամ դժոխք է
իմ բաժինս,
Թէ կորսընցնեմ այս ժամանակն
որ ունիմ,
Մահուան առնն չեմ գոներ.
Ամէն բան կը լմննայ և շուտ կը
լմննայ,
Յաւիտենականութիւնը երբեք չի
լմննար,

ԱՂՕԹՔ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԱԽՕՏԵԱՆ

Ա Ղ Օ Թ Ք

Ա Ռ Ա Ւ Ո Տ Ե Ա Ն

Յաճուն չօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ, ամէն։

Աստուած իմ, քեզ երկիր պա-
գանեմ. չնորհակալ եմ ինձի ըրած
անբաւ բարիքներուդ, և մաս-
նաւորապէս զիս այս առտու
հասցընելուդ համար։
Բոլոր սրտովս կը սիրեմ զքեզ,

և ինչ որ ընեմ ու կրեմ՝ բո-
լորն ալ քեզի կ'ընծայեմ։

Կ'առաջադրեմ ամէն մեղք
փախչիլ, և կ'աղաչեմ, ով Տէր,
որ Յիսուսի սիրոյն համար տաս
ինծի մասնաւորապէս քու կա-
մացդ հետ միանալ, և ինչ նեղու-
թիւն ալ որ իսաւրես ինծի՝ միշտ
այս ըսեմ. Տէր, քու կամքդ ըլ-
լայ։ Յիսուս, դու ձեռք տուր ին-
ծի այսօր։ Դու պահապան հրեշ-
տակս և դուք սուրբք ամենայն,
օգնեցէք ինծի։

Հայր մեր։

ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ

Ո՛վ անարատ կոյս Մարիամ,
տիրուհի և մայր իմ, կը ցանկամ
միշտ Յիսուսին ու քուկդ ըլ-
լալ։ Դու գիս ինամէ և պահէ
ամէն մեղքերէ։ Օրհնէ գիս, դուս-
տըր Հօր յաւիտենականի, և մի

թողուր որ ամենաբարի Աս-
տուածս վշտացնեմ իմ խոր-
հուրդներովս։

Օրհնէ գիս, ով մայր Յիսու-
սի, և մի՛ թողուր որ ամենա-
բարի Աստուածս վշտացնեմ իմ
խօսքերովս։

Օրհնէ գիս, ով հարսն Հոգւոյն
սրբոյ, և մի՛ թողուր որ ամե-
նաբարի Աստուածս վշտացնեմ
իմ գործերովս. մանաւանդ թէ
ամենայն սրտով սիրեմ միշտ
զինքը, և ուրիշներու ալ սի-
րել տամ, սիրելի մայր իմ
Մարիամ։

Ողջոյն քեզ։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ

Հաստատուն հաւատքով կը
հաւատամ, ինչպէս որ յայտնած
է Աստուած կաթողիկէ եկեղե-
ցւոյ, թէ Աստուած մէկ է ան-

ձինքը երեք, հաւատարք և զանազանք որ Հայր և Որդի և Սուրբ Հոգի կը կոչուին. թէ Որդին մարմնացաւ, մարդացաւ Հոգւով սրբով ի Մարիամայ կուսէն, մեզի համար խաչին վրայ մեռաւ, յարեաւ, երկինք վերացաւ, և պիտի գայ աշխարհիս եաքը կենդանիները ու մեռեալները դատելու, արդարներուն յաւիտենական արքայութիւն տալով և մեղաւորաց դժոխք: կը հաւատամ դարձեալ այն ամէն բաներուն՝ որ կը հաւատայ և կը սորվեցնէ սուրբ եկեղեցին:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԲՈՒՍՈՑ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև ամենակարող ես և ամենաբարի և ամենագութ, Ցիսուսի փըրկչին մերոյ չարչարանաց և մահուան արդեամբքը՝ կը յուսամ որ

կը պարգևես ինծի յաւիտենական կեանքը, զոր խոստացար բարի քրիստոնէից. ինչպէս որ քու օգնութեամբդ ես ալ կ'աոաջադրեմ ըլլալ:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՑ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև գերագոյն բարի ես, ամենայն սրտովս կը սիրեմ զքեզ ամէն բանէ վեր. և աւելի յանձն կ'առնում յամենայնէ զրկուիլ՝ քան թէ զքեզ դառնացնել: Քու սիրոյդ համար անձիս պէս կը սիրեմ նաև զուրիշներն ալ:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Ո՛վ Աստուած իմ, ամենաբարի ըլլալուդ, և ամէն բանէ աւելի զքեզ սիրելուս, կը զղջամ ու կը ցաւիմ ճշմարիտ սրտով՝ զքեզ

դառնացնելուս. և քու սուրբ
հնորհքովդ հաստատապէս կ'ա-
ռաջադրեմ անգամ մ'ալ չմեղան-
չել և ամենայն մեղաց առիթներէ
փախչիլ։

Հայր մեր. Ողջոյն քեզ։

3518-62
591
3841-

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԱՌԱՁՔ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ
ՎԱՍՆ ԱՒՈՒՐՑ ՆՕԹՆԵԿԻ

ԿԻՒՐԱԿԷ

Մարդուս վախձանին վրայ

Ա. *Մտածէ, հոգի քո, որ այն*
էութիւնն ու դատաստան Աստուած
տուեր է քեզի, ծառեցնելով զքեզ
ի պատկեր երկրի առանց քու ար-

դեանդ, որդեգրելով մկրտութեամբ սուրբ աւազանին, ու հօրմէ մը աւելի սիրելով զքեզ. և անոր համար ստեղծեր է զքեզ, որպէս զի սիրես ու ծառայես իրեն այս աշխարհիս մէջ, ու վայելես զինքը յարքայութեան։ Անոր համար չես ծնած՝ որ ապրիս, զուարճանաս, հարստանաս, զօրաւոր ըլլաս, ուտես ու խմես, քնանաս անբաններու պէս. այլ միայն քու Աստուածդ սիրես ու յաւիտենական փրկութեանդ հասնիս։ Եւ Աստուած իր ամէն ստեղծածները պարգևեր է քեզի, որ անոնց օգնութեամբն այդ մեծ վախճանիդ հասնիս։ Բայց ո՛հ, ես չուառականս ամեն բանի վրայ մտածեցի՝ բաց ի վախճանէս։

Հայր իմ, Յիսուսի սիրոյն համար տո՛ւր որ նոր կեանք մը սկսիմ, բոլորովին սուրբ և համաձայն ըստ ամենայնի քու աստուածային կամացդ։

բ. Մտածէ՛ թէ ինչպէս մահուանդ ատեն խիղճդ զքեզ պիտի տանջէ, թէ որ Աստուծոյ ծառայելու փոյթ չես ունեցեր։ Ի՛նչպէս սաստիկ պիտի ըլլայ սրտիդ կսկիծը կենացդ վերջի վայրկեաններուն, երբ տեսնես որ այնչափ մեծութիւններէն, փառքէն և ի հաճոյից ուրիշ բան չէ մնացած քովդ, բայց տագնապ ու խայթ խղճի։ Զարմանաս պիտի թէ ինչպէս չնչին ու անցաւոր բաներու համար, Աստուծոյ չնորհքը ու հոգիդ կորսնցուցեր ես, առանց կարենալու ճար մը ընել եղած չարեաց, և ոչ ալ ժամանակ ճնալով ուղղութեան ճամբան նորէն մտնելու։ Ո՛հ, քանի յուսահատութիւն, քանի՛ տանջանք։ Այն ատեն պիտի ճանչնաս ժամանակին յարգը, բայց ուշ. արեամբդ իսկ ուզես պիտի գնել, բայց կարելի չէ։ Ո՛վ օր դառ-

նութեան անոր՝ որ Աստուծոյ չէ ծառայած ու զԱստուած չէ սիրած։

Գ. Մտածէ թէ ո՛րչափ անհոգութիւն կ'ըլլուի այս մեծ վախճանիս։ Ուտելու, հանդէսներու, զուարճութեանց վրայ կը մտածենք, իսկ Աստուծոյ ծառայելու, հոգինիս փրկելու չենք մտածեր. ու յաւիտենական վախճաննիս բանի տեղ չենք դներ։ Եւ այսպէս քրիստոնէից մեծ մասը ուտելով, խմելով, երգով ու նուագելով դժոխք կ'երթան։ Ո՞հ, թէ գիտնային ինչ ըսել է դժոխք։ Ո՞վ մարդ, այդչափ կը Ջանաս գքեզ դատապարտելու, իսկ փրկելու համար բան մը գործել չես ուզեր։ Փրանկիսկոս Անգղիոյ թագաւորին գրագիրներէն մէկը երբոր մեռնելու վրայ էր, կ'ըսէր. Եղո՛ւկ ինձ, այնչափ թուղթ փճացուցի իմ սիրոջս նամակները

գրելու. իսկ իմ հոգւոյս հաշիւը տեսնելու համար և ոչ թերթ մը, որով կարենայի լաւ խոստովանանք մը ըլլալ։ Փիլիպպոս Գ. Սպանիոյ թագաւորը մեռնելու ատեն կ'ըսէր. Ո՜հ երանի՛ թէ բնաւ թագաւոր եղած չըլլայի։ Բայց ի՞նչ բանի կու գան այն ատեն այդ հառաչանքներն ու ողբերը, եթէ ոչ յուսահատութիւնն աւելցնելու համար։ Ուրիշին ջնասովը գոնէ փոյթ ունեցիր փրկութեանդ, եթէ չես ուզեր անոնց պէս յուսահատութեան մէջ իյնալ։ Գիտցիր որ ինչ որ կ'ընես, կ'ըսես ու կը մտածես առանց Աստուծոյ հաճութեանը, ամենքն ալ փուճ են։ Վարքդ փոխելու ժամանակն հիմայ է։ Մահուանդ օրուան կը սպասես, որ աչքդ բացուի ու սխալմունքդ ճանչնաս։ Յաւիտենականութեան դրան քով, դժոխքին բերանը կե-

ցած կ'ուզես ուղղել սխալմունք-
ներդ, երբոր հնար չկայ։

Աստուած իմ, ներէ ինծի։
Ամեն բանէ վեր գքեզ կը սիրեմ։
Ամեն չարիքներէս աւելի գքեզ
վշտացնելուս կը ցաւիմ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Մարդոցս վախճանին հաշիւ առնուելու վրայ

Ա. Մտածէ, ով մարդ, թէ
որչափ կարեւոր է, որ քու
մեծ վախճանիդ եւնէն երթաս.
ամենակարեւոր բան. վասն զի
թէ որ զայն փնտռես՝ գքեզ կը
փրկես, ու միշտ երանելի կ'ըլ-
լաս, հոգւով ու մարմնով ամէն
բարիք կը վայելես։ Բայց թէ
որ սխալիս՝ հոգիդ ալ մարմինդ

ալ կը կորսնցընես, արքայու-
թիւնն ու գԱստուած. յաւի-
տեան թշուառ կ'ըլլաս, ու միշտ
դատապարտեալ։ Ուրեմն ամե-
նէն մեծ, ամենէն կարեւոր ու
հարկաւոր տուրևառնիս է Աս-
տուծոյ ծառայել, և հոգինիս
փրկել։ Արդ այսուհետև մի՛ ը-
սեր, ո՛վ քրիստոնեայ, թէ հի-
մա կամքս կատարեմ, ու վերջը
Աստուծոյ կու տամ ինքզինքս
և կը յուսամ փրկուիլ։ Այդ
սուտ յոյսը քանիներ դժոխք
տարաւ, քանիներ ատանկ կ'ը-
սէին, ու հիմա դատապարտուած
են, և դարման չկայ իրենց չա-
րեաց։ Ո՞վ ի դատապարտելոց
կ'ուզէր դատապարտուիլ։ Բայց
Աստուած կ'անիծէ զայն որ յու-
սով Թողութեան՝ մեղք կը գոր-
ծէ. «Անիծեա՛լ մարդ որ մեղան-
չէ յուսով»։ Այս մեղքս ընեմ,
կ'ըսես, ու վերջը խոստովա-
նանք կ'ըլլամ. ո՞վ գիտէ թէ խոս-

տովանելու ատեն պիտի ունե-
նաս: Ո՞վ գքեզ կ'ապահովցընէ
որ մեղքէն վերջն իսկոյն պիտի
չմեռնիս. Թող որ այդ մեղքովդ
Աստուծոյ չնորհքը կը կորսնցը-
նես, և ո՛վ գիտէ թէ նորէն պի-
տի գտնես: Աստուած երկիւղած-
նելուն կ'ողորմի՝ ոչ թէ ալհա-
մարհողներուն. «Եւ ողորմու-
թիւն նորա ի վերայ երկիւղած-
ացց իւրոց» (Ղկ. ա. 50): Մի՛
ըսեր՝ թէ երկու մեղք խոստո-
վաներ եմ կամ երեք, նոյն բանն
է. չէ՛. վասն զի կարելի է որ
Աստուած երկուքին ներէ, բայց
երրորդին ո՛չ. Աստուած կը համ-
բերէ, բայց ոչ միշտ: Երբոր մե-
ղաց չափը լեցուի, ալ Աստուած
չի ներեր, կամ մահուամբ կը
պատժէ, կամ մեղաւորը երեսէ
կը ձգէ որ մեղքէ մեղք գժոխք
գլորտկի. պատիժ մը՝ որ մա-
հուընէ ծանր է: Ուշ դիր այս
կարդացածիդ, լմնցուր գաս-

կայ, ու գքեզ ալ Աստուծոյ
տուր: Վախցիր որ այս վերջին
ազդարարութիւնն ըլլայ՝ որ Աս-
տուած քեզի կ'ընէ: Բաւական է
այսչափ գինքը վշտացնելդ, բա-
ւական եղաւ իրեն ալ քեզի այս-
չափ համբերելը. վախցիր որ
ուրիշ մահուչափ մեղք մ'ալ որ
ընես, Աստուած ալ չնելէ քեզի:
Գիտցիր որ հոգւոյդ վրայ խո-
սիլը յաւիտենականութեան վրայ
խօսիլ ըսել է: Այս յաւիտենակա-
նութեան մեծ մտածութիւնը քա-
նինէրն անապատներու, քարան-
ձաւներու և վանքերու մէջ տա-
րաւ փակեց: Եղո՜ւկ ինձ, որչափ
վշտացած է սիրտս ըրած այն-
չափ մեղքերուս համար. հոգիս
ծանրացած, դժոխքն իմ բա-
ժինս եղած, ու գԱստուածս ալ
կորսնցուցեր եմ:

Ո՜վ Աստուած իմ, Հայր իմ,
Թո՛ղ ինձ, և կապէ գիս քու
սուրբ սիրովդ:

Բ. Մտածէ որ ինչպէս յաւիտենականութեան վրայ խիստ քիչ կը մտածենք. բաց ի փրկութենէ՝ ամէն բանի վրայ կը մտածենք: Ամէն բանի ժամանակ կը գտնենք, միայն Աստուծոյ համար չենք գտներ: Թէ որ աշխարհի մարդու մը զուրցես, թէ խորհրդոց մօտեցիր, օրը կէս ժամ մը աղօթք ըրէ, պատասխան կու տայ. տղաք ունիմ, քեռորդիք՝ եղբօրորդիք ունիմ, կալուածներ ունիմ, ինչ ընեմ: Ո՛վ Տէր. միթէ հոգի չունիս: Աստուած չընէ, եթէ դժոխքի դատապարտուիս, ինչ օգուտ ունին քեզի որդիքդ, եղբօրորդիքդ, անդաստաններդ: Մի՛ խաբեր զքեզ որ կարենաս գոհ ընել զԱստուած ու աշխարհս, արքայութիւնն ու մեղքը միանգամայն: Դիւրին բան չէ փրկուիլը, այլ պէտք է բռնադատենք զմեզ, աշխատինք ու ճգնինք, եթէ կ'ու-

զենք անմահական պսակը ձեռք ձգել: Ո՜րչափ քրիստոնեայք իրենք զիրենք խաբած են, թէ ետքը Աստուծոյ կը ծառայեն ու կը փրկուին, և հիմա դժոխքն են: Ի՜նչ յիմարութիւն. անցաւոր բանին վրայ միշտ մտածել, և յաւետենական ու անանց բանին վրայ բնաւ չմտածել: Ա՜հ քրիստոնեայդ, մտածէ անգամ մը վրադ, մտածէ որ քիչ ատենէն պիտի ելնես երթաս աշխարհէս յաւիտենականութեան տունդ: Վա՛յ քեզ եթէ դատապարտուիս. գիտցիր որ անկէ ետքը դարման չես կրնար ընել:

Գ. Մտածէ, քրիստոնեայդ, ու ըսէ. Հոգի մը միայն ունիմ, թէ որ այն ալ կորսնցընեմ, ամէն բան կորսնցուցած եմ. թէ որ աշխարհք մը վաստըկիմ հոգիս կորսնցընելով, ինչ բանի կու գայ: Թէ որ մեծ մարդ ըլլամ, բայց հոգիս կորսնցընեմ, ինչ բանի

կու գայ։ Թէ որ հարստութիւն դիզեմ, ընտանիքս փառաւորեմ, որդիքս մեծցընեմ, բայց հոգիս կորսնցընեմ, ինչ չահ ինծի այս ամէն բաներէս։ Ի՞նչ օգուտ ըրին հարստութիւնները, գուարճութիւնն ու ընդունայնութիւնները անոնց՝ որ աշխարհիս մէջ ապրեցան, ու հիմա փոսի մը մէջ փուչի դարձած, ու հոգինին ալ դժոխքին մէջն է։ Ուրեմն, եթէ հոգին իմս է, ու մէկ հոգի մը միայն ունիմ, եթէ զայն կորսնցնեմ մի անգամ՝ յաւիտեան կորսնցուցած եմ, ուրեմն լաւ մտածելու եմ որ փրկեմ։ Ասիկայ ամենակարևոր խնդիր մ'է. կամ յաւիտեան երջանիկ և կամ թշուառ ըլլալուն վրայ է խնդիրը։

Ո՛վ Աստուած իմ, կը խոստովանիմ ամօթով որ ինչուան հիմա կուրօրէն ապրեցայ, քեզմէ շատ հեռու պտըտեցայ, և

բնաւ չմտածեցի այս միակ հոգիս փրկելը։ Յիսուսի համար ըլլայ, փրկէ զիս, Հայր. գոհ կ'ըլլամ ամէն բան կորսնցընելու, միայն թէ զքեզ չկորսնցընեմ, Աստուած իմ։ Մարիամ յոյս իմ, փրկէ զիս քու բարեխօսութեամբդ։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Մահուչափ մեղաց վրայ

Ա. Մտածէ թէ Աստուածմէ ըստեղծուած ըլլալով զինք սիրելու համար, դժոխային ապերախտութեամբ ինչպէս ապըստամբեցար իրմէ. թշնամուդ պէս հետը վարուեցար, արհամարհեցիր իր չնորհքն ու իր բարեկամութիւնը: Գիտցիր թէ ասանկովդ զինքը կը վշտացնես. և սակայն գործեցիր: Մեղանչողը գիտե՞ս ինչ կ'ընէ. կռնակը առ Աստուած կը դարձնէ, մեծարանքը կը կորսնցնէ, ձեռք կը վերցնէ ապաստակ մը իյնեցընելու համար և Աստուծոյ սիրտը կը վիրաւորէ: Մեղանչողը կ'ըսէ Աստուծոյ. Հեռացիր ինծմէ, չեմ ուզեր քեզի հնազանդիլ. չեմ

ուզեր ծառայել քեզի. չեմ ճանչնար զքեզ իբրև իմ տէրս. զքեզ Աստուծոյ տեղ չեմ դներ: Իմ Աստուածս՝ հաճոյքս, շահս, վըրէժխնդրութիւնս է: Այս ըսած ես սրտովդ երբոր արարածն Արարչէն վեր կը սեպես: Սուրբն Մարիամ Մագդաղենացի հաւատալ, թէ ինչպէս քրիստոնեայ մը կրնար բաց աչքով մահուչափ մեղք մը գործել: Իսկ դու՝ որ կը կարդաս, ինչ կ'ըսես: Ո՛րչափ մահուչափ մեղք գործեր ես:

Աստուած իմ, ներէ ողորմէ ինծի: Զքեզ վշտացուցի, անհուն բարութիւն. հիմա կ'ատեմ ըզմեղս, կը սիրեմ զքեզ, և կը ցաւիմ զքեզ անարգելուս համար, ով Աստուած իմ, արժանի անհուն սիրոյ:

Բ. Մտածէ թէ մեղանչելու առենդ ինչ կ'ըսէր Աստուած քեզի, Որդեակ իմ, ես քու Աս-

տուածդ եմ, որ յոչընչէ զքեզ ստեղծեցի, արեամբս զքեզ գընեցի. կ՝արգելում որ այդ մեղքը չգործես, ապա թէ ոչ՝ կը զրկեմ զքեզ չնորհքէս։ Բայց դու մեղանչելովդ ըսիր. Տէր, ինչ ըլլայ չըլլայ, ես այս հաճոյքս կ՝ուզեմ վայելել. փոյթս չէ քեզի անհաճոյ ըլլալս, ու քու չնորհքդ կորսնցընելս։ «Ապացեր, ոչ ծառայեմ քեզ»։

Ո՜հ Աստուած իմ, աս բանս շատ անգամ ըրի. ինչպէս համբերեցիր ինծի։ Ա՛լ աղէկ է որ մեռնիմ, քան թէ այսուհետև զքեզ վշտացնեմ։ Չեմ ուզեր ասկէ վերջ զքեզ տրտմեցընել. կ՝ուզեմ զքեզ սիրել, ո՛ բարութիւն անբաւ։ Տուր ինծի յաւիտենական, ուրիշ ոտիք չեմ։

Գ. Մտածէ որ երբոր մեղքեր ուն չափը կը լեցուի, ալ Աստուած ձեռքէն կը ձգէ զմեղաւորը. «Երկայնամիտ լինի Աստուած, մինչև լցցեն զչափ մեղաց իւրեանց և եկեսցեն հասցեն ի դատաստանս անհնարինս». Բ. Մակ. Զ. 14։ Ուրեմն, սիրեցեալ, եթէ նորէն մեղք գործես, մի՛ զուրցեր թէ ետքը կը խոստովանիմ։ Թէ որ Աստուած այն ատեն զքեզ մեռցնէ, թէ որ Աստուած զքեզ ձեռքէ թողու, ինչ պիտի ըլլաս դու յաւիտեան։ Այս կերպով շատերը կորսուած են։ Անոնք ալ յոյս ունէին թողութեան, բայց մահը հասաւ, և դատապարտուեցան։ Դուք որ նոյնը չպատահի քեզի ալ։ Գթութեան արժանի չէ այն որ Աստուծոյ բարութիւնը զինքը վըշտացնելու կը գործածէ։ Իրաւամբ պէտք է վախնաս, որ յետ այնչափ ծանր մեղացդ ներելու, Աստուած մէյ մ՝ալ չներէ ասկէ ետև ընելու մահուչափ մեղացդ։ Շնորհակալ եղիր իրեն՝ որ ինչուան հիմա համբերեց քեզի, ու

հաստատուն առաջադրէ աւելի յանձն առնուլ մեռնիլ, քան թէ մեղքով մը գինքը վշտացնել։ Ասկէ վերջը միշտ ըսէ. Տէր, բաւական է այսչափ գքեզ վշտացընելս։ Մնացած կեանքս մէջ չեմ ուզեր վշտացնել գքեզ. այլ սիրել միայն ու լրած անարգանացս վրայ լալ։ Բոլոր սրտովս կը ցաւիմ, Յիսուս իմ, գքեզ սիրել կ'ուզեմ. տուր ինծի զօրութիւն։ Մարիամ, մայր իմ, օգնէ ինծի։



ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Մահուան վրայ

Ա. Մտածէ թէ ի՛նչպէս աս կեանքս պիտի լմննայ։ Վճիռն արդէն տրուած է. պէտք է որ մեռնիս։ Մահը ստոյգ է, բայց անստոյգ անոր ժամանակը։ Ի՞նչ պէտք է մեռնելու համար։ Բաւական է կաթուած մը սրտիդ, կամ կուրծքիդ երակներէն մէկուն պատռիլը, արեան կամ հիւթոց առատութիւն մը, թունաւոր կենդանւոյ խածուածք մը,

Ջերմ մը, վէրք մը, հարուած մը, Ջրհեղեղ մը, երկրաշարժ, կայծակ, փայլակ մը բաւական է կեանքդ վերցնելու համար։ Մահը վրադ կը հասնի երբոր չես մտածեր. քանիններ իրիկունը անկողին մտան, ու առաւօտը մեռած գտնուեցան։ Միթէ քեզի ալ նոյնը չի՞ կրնար պատահիլ։ Անոնք որ յանկարծական մեռան, մտքերնէն իսկ չէր անցներ որ անանկ պիտի մեռնէին, և սակայն մեռան. ու թէ որ մեզաց մէջ էին՝ ո՛ւր պիտի ըլլան յաւիտեանս յաւիտենից։ Բայց ինչ կերպով ալ ըլլայ, ժամանակ պիտի գայ որ քեզի համար գիշեր պիտի ըլլայ. օրը պիտի տեսնաս բայց գիշերուան պիտի չհասնիս։ Գիշերուան գողի պէս ծածուկ պիտի գամ, կ'ըսէ Քրիստոս։ Առաջուց կ'իմացնէ քեզի տէրդ, փրկութիւնդ ուզելուն համար, Ջանա՛ որ գործա-

կից ըլլաս Աստուծոյ. օգտուէ այս ազդարարութենէն, լաւ կերպով մեռնելու պատրաստուէ, քանի՛որ մահը չէ եկած. վասն զի այն ատեն պատրաստուելու ժամանակ չէ։ Ատոյգ է որ պիտի մեռնիս, այս աշխարհիս տեսարանը պիտի լճննայ քեզի համար, և չես գիտեր թէ երբ։ Ո՞վ գիտէ, արդեօք տարիէ՞ մը, ամսէ՞ մը, թէ վաղը։ — Ո՜վ Յիսուս Տէր իմ, ներէ՛ ինծի։

Բ. Մտածէ թէ ինչպէս մահուանդ ատեն անկողնոյ մը վրայ տարածեալ, ու քահանային քովդ կեցած, հոգիդ Աստուծոյ պիտի յանձնէ. ընտանիքդ չորս կողմդ առած վրադ պիտի լան ձեռքդ խաչ, ու քովդ նուաղ ճրագ մը վառած և դու յաւիտենականութիւն անցնելու վրայ ես։ Գլուխդ ցաւ մը, աչքերդ մութ պատած, լեզուդ ցամքած, բերանդ կծկած, սիրտդ ծանրացած, արիւնդ պա-

ղած, ու մարմինդ հալած մաշած: Մահուամբ ամէն բան պիտի թողուս, և աղքատ ու մերկ փոսի մը մէջ պիտի նետուիս, հոն փտտելու համար. որդերն ու մկներ մարմինդ պիտի կրծեն, ու չոր ցամքած ոսկրէ և քիչ մը փոշիէ զատ բան մը պիտի չմնայ: Բայց գերեզման մը և տես թէ ինչ եղեր է այն մեծ հարուստն, այն ագահն ու այն սնոտիապանծ կինն: Այդպէս կը լմննայ կեանքը: Մահուանդ ատեն սաստանայք չորս կողմդ առած, աչքիդ առջև պիտի բերեն բոլոր մեղքերդ, տղայութենէդ սկսեալ: Հիմայ գքեզ մեղաց մէջ ձգելու համար կը ծածկեն քեզմէ մեղքերդ ու իբրև չնչին և անվնաս բաներ կ'երևցնեն այն ընդունայնութիւնը, այն հաճոյքն, այն մտերմութիւնն, ու այն ոխն, իբրև թէ անոնց մէջ գէշ վախճան մը չկայ. բայց մահը մեղացդ ծանրութիւնն երևցնէ պիտի քեզի ու յաւիտենականութեան լուսով, որ առջևդ կեցած է, պիտի ճանչնաս թէ գԱստուած վշտացնել ի՛նչ մեծ չարիք է եղեր: Շուտ, հիմայ դարման տար, քանի որ կրնաս, վասն զի այն ատեն այլ ևս չես կրնար: — Աստուած իմ, լուսաւորէ զիս:

Գ. Մտածէ որ մահը վայրկեան մ'է ուսկից կը կախուի յաւիտենականութիւնը: Մարդս միշտ մահուան քովերը կը պտըտի, որով երկու յաւիտենականութեանց մէկուն մօտ է: Իսկ այն վիճակներնուս որոշմունքն՝ բերաններնուս բանալ վերջի գոցելէն կախուած է, ուսկից ետքը հոգին կամ յաւիտեան փրկեալ պիտի ըլլայ, կամ յաւիտեան դատապարտեալ: Ո՛վ վայրկեան, ո՜հ յետին փակում բերանոյ, ուսկից կախեալ է յաւիտենականութիւն մը կամ փառաց և կամ

պատժոյ, յաւիտենականութիւն մը կամ անվախճան երջանկութեան և կամ անվերջ թշուառութեան. յաւիտենականութիւն մը ամենայն բարեաց և կամ ամենայն չարեաց. յաւիտենականութիւն մը արքայութեան կամ դժոխոց: Ըսել է որ, եթէ այն միջոցին փրկուիս, ալ անկէ ետքը ցաւելու բան չունիս. իսկ եթէ դատապարտուիս, միշտ ցաւագին և յուսահատ պիտի ըլլաս, քանի որ Աստուած Աստուած է: Մահուանդ առեն պիտի ճանչնաս թէ ինչ ըսել է եղեր արքայութիւն, դժոխք, մահացու մեղք, Աստուած նախատել, Աստուծոյ օրէնքն ոտքի տակ առնել, ի խոստովանութեան մեղք ծածկել, գողօնքը չդարձնել: Եղե՛ւկ ինձ, պիտի ըսէ հոգևարքը. քանի մը վայրկենէն Աստուծոյ առջև պիտի ելնեմ. և ա՛վ գիտէ ինչ է վճիռս՝ արքայութի՞ւն թէ

դժոխք պիտի երթամ: Հրեշտակաց հետ պիտի վայելեմ, թէ դատապարտելոց հետ պիտի այրիմ: Աստուծոյ որդի՞ պիտի ըլլամ, թէ գերի սատանայի: Ինչ ատենէն կ'իմանամ: Առաջին անգամ գացած տեղս յաւիտենական տունը պիտի ըլլայ: Ո՜հ քանի մը ժամէն, քանի մը վայրկենէն ինչ պիտի ըլլայ ինծի. ինչ պիտի ըլլայ ինծի թէ որ չբժշկեմ մէկուն տուած գայթակղութիւնս, մէկալին համբաւն ու ստացուածքն ետ չդարձնեմ, սրտանց թշնամույս չներեմ, ու լաւ խոստովանանք մը չընեմ: Այն ատեն, պիտի անիծես այն օրն որ մեղանչեցիր, այն վրէժխնդրութիւնն որ ըրիր, բայց ուշ և անօգուտ. վասն զի չէ թէ Աստուծոյ սիրոյն համար պիտի ցաւիս, այլ պատժոց վախէն:

Ո՜վ Տէր, ահա այս վայրկենէս առ քեզ կը դառնամ, չեմ ուզեր

մահուանս սպասել. այս ժամէս գքեզ կը սիրեմ. ու քեզ կը պըլ-
լուիմ, և այնպէս կ'ուզեմ մեռնիլ:
Մայր իմ, Մարիամ, քու հովանա-
ւորութեանդ տակ կ'ուզեմ մեռ-
նիլ, օգնէ ինծի այն վայրկենին:

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Դատաստանին վրայ

Ա. Մտածէ որ ինչպէս մեռած
չմեռած, հոգիդ Աստուծոյ առե-
նին առջև պիտի տարուի դա-
տուելու համար: Դատաւորն՝ ա-
մենակարող Աստուած է՝ որ քեզ-
մէ նախատուեր է, ու քեզի դէմ
գայրացեր: Ամբաստանողքն՝ սա-
տանայք՝ քու մեղքերդ. վճռոյն
դէմ բողոքել չըլլար, պատիժն
ալ դժոխքն է: Ոչ ընկեր ունիս,
ոչ ազգական, ոչ բարեկամ. Աս-
տուծոյ ու քու մէջդ ամէն բան

պիտի լռինայ. այն ատեն մեղքե-
րուդ գարշութիւնը պիտի ճանչ-
նաս, ու չկարենաս պիտի գքեզ
արդարացնել, ինչպէս հիմա կ'ը-
նես: Պիտի քննուիս խորհրդով,
բանիւ, հաճութեամբ, գործով,
զանցառութեամբ, գայթակղու-
թեամբ ըրած մեղքերուդ վրայ.
Աստուծոյ արդարութեան կշռոյն
մէջ այս ամէն բան պիտի կըշ-
ռուի, և թէ մէկ հատին մէջ ալ
միայն պակաս գտնուիս պիտի
կորսուիս: Յիսուս իմ, և դա-
տաւոր հոգւոյ իմոյ, դատելէդ
առաջ ներէ յանցանացս:

Բ. Մտածէ թէ ինչպէս աս-
տուածային արդարութիւնն պի-
տի գայ ու դատէ զամէն ազգ
Յովսափատու ձորն, երբ աշ-
խարհս լռեցած՝ մարմիններն յա-
րութիւն առնեն, որպէս զի հո-
գւով և մարմնով կամ վարձա-
տրուին և կամ պատժուին ըստ
իրենց գործոց: Մտածէ թէ դա-

տապալտուելու որ ըլլաս, նորէն առաջին մարմինդ պիտի առնուս, որ թշուառ հոգւոյդ յաւիտենական բանտ մը պիտի ըլլայ։ Այս դառն միութեանս առեն, պիտի անիծէ հոգին զմարմինը. մարմինն ալ զհոգին. անանկ որ հիմա երկուքն ալ որ կը միաբանին անկարգ հաճոյքներ փընտռելու, մահուընէ վերջ չուզելով՝ պիտի միանան մէկմէկու դահիճ ըլլալու համար։ Իսկ եթէ ընդհակառակն փրկուիս, յարութիւն պիտի առնէ մարմինդ գեղեցկացեալ, ցաւերէ ազատ և պայծառացած, և այնպէս հոգւով ու մարմնով երջանիկ պիտի ըլլաս. ահա աշխարհիս տեսարանն ասանկով պիտի լմննայ։ Պիտի լմնան այն առեն աշխարհիս բոլոր մեծութիւններն ալ, հաճոյքներն ալ, ճոխութիւններն ալ, բոլորն ալ պիտի լմնան, ու քեզի կը ծնայ երկու յաւիտենա-

կանութիւն, մէկը փառաց, միւսը պատժոյ. մէկը երջանիկ, իսկ միւսը թշուառ. մէկը վայելից և մէկալը տանջանաց։ Արդարք արքայութեան մէջ, մեղաւորք ի դժոխս։ Վայ անոր որ աշխարհս սիրեր է, ու անոր ողորմելի վայելքներուն համար թէ հոգին, թէ մարմինն, զարքայութիւն ու զԱստուած կորսընցուցեր է։

Գ. Մտածէ յաւիտենական վճիռը։ Դատաւորն Քրիստոս պիտի դառնայ յանցաւորաց ու պիտի ըսէ. ուզածնիդ ըրիք, ապերախտներ, ուզածնիդ ըրիք։ Եկաւ հիմա իմ ժամս, ժամ բարկութեան ու վրէժխնդրութեան։ Այո՛, անօրէնք, սիրեցիք զանէծս, գըլուխնիդ իջնայ, անիծեալ ըլլաք այժմ և յաւիտեանս։ Կորստուեցէք երեսէս, ամէն բարիքներէ զրկուած, և յաւիտենական հրով և պատժովք լցուած։ «Եր-

թայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական»: Մատթ. Իե, 41: Եւքը Ցիսուս ընտրելոց դառնալով, պիտի ըսէ. եկէք օրհնեալ զաւակներս, եկէք վայելեցէք ձեզ համար պատրաստուած երկնից թագաւորութիւնը: Եկէք եւևէս, ոչ խաչով այլ պսակազարդ: Եկէք որ իմ հարստութիւններս ժառանգէք, դուք որ իմ փառացս ընկեր էք. եկէք որ յաւիտեան իմ ողորմութիւններս երգէք. եկէք յաքսորանաց՝ ի հայրենիս ձեր, ի թշուառութենէ՝ ի խնդութիւն. եկէք յարտասուաց՝ յուրախութիւն. ի վշտաց՝ ի հանգիստ: «Եկայք օրհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն»: Ցիսուս իմ, կը յուսամ որ ես ալ այս օրհնեալներէն մէկն ըլլամ: Ձքեզ ամէն բանէ վեր կը սիրեմ, օրհնէ զիս ի ժամուս: Եւ դու մայր իմ սիրելի Մարիամ, նոյնպէս օրհնէ զիս:

ՈՒՐԲԱԹ

Դժոխքի վրայ

Ա. Մտածէ թէ ինչպէս դժոխքն ողորմելի բանտ մ'է կրակով լեցուն: Այս կրակէ անդունդիս մէջ կը կենան մեղաւորք ամէն կողմանէ կրակով պաշարուած: Աչքին մէջ, բերնին մէջ, ամէն կողմը կրակ, և իւրաքանչիւր զգայութիւն իւր պատիժն ունի: Աչքերը մուխէն ու խաւարէն կուրցած, և դատապարտեալներն ու դևերը տեսնելէն ահաբեկած: Ականջները գիշեր ցորեկ ուրիշ բան չեն լսեր, բայց եթէ դատապարտելոց ոռնալը, լացն ու հայհոյութիւնը: Հոտոտելիքը կը տանջուի դատապարտելոց մարմնոյն գարշահոտութենէն: Ճաշակելիքը կը չարչարուի այն այրող ծարաւէն ու անյագ անօ-

թուխենէն առանց կաթիլ մը ջուր գտնելու, ու պատառ մը հաց։ Այսպէս այդ խեղճ բանտարկեալները ծարաւէն այրելով, կրակէն մաշելով, ու ամէն տեսակ տանջանքներով կը չարչարուին և կու լան, կ'ողնան, կը յուսահատին, բայց չկայ ու պիտի չըլլայ մէկն որ գիրենք մխիթարէ ու տանջանքնին թեթևցնէ։ Ո՜հ դժոխք, դժոխք. քանիներ կան որ չեն ուզեր հաւատալ քեզի, ինչուան որ գիրենք չկլլես։ Դու ընթերցող ինչ կ'ըսես։ Թէ որ հիմա մեռնելու ըլլաս, ո՞ւր կ'երթաս։ Դու որ ճրագի մը կայծին չես դիմանար, կը յուսա՞ս արդեօք դիմանալ այն կրակէ լճին որ զքեզ պիտի լափէ, և անմխիթար լքեալ թողեալ ամենէն՝ հոն պիտի ճնաս յաւիտեան։

Բ. Մտածէ թէ ինչպէս պիտի տանջուին մտաւոր կարողու-

թիւնք։ Ցիշողութիւնդ պիտի տանջուի միշտ խղճիդ խայթէն։ Դատապարտելոց ամենէն մեծ որդը պիտի ըլլայ ու գիրենք պիտի կրծէ, մտածելով թէ ինչպէս քանի մը սնոտի հաճոյից համար դատապարտուած են։ Ո՜վ Տէր, հարիւրաւոր ու միլիոնաւոր տարիներ տանջուելէ ետև, ինչպէս երևնայ պիտի արդեօք մեղաւորին իւր հաճոյից վայրկեաններն։ Այն պահուն պիտի չէ այն ժամանակն որ Աստուած տուաւ ապաշխարելու համար, փրկութեան հասնելու դիւրացուցած միջոցները, տեսած բարի օրինակներն ու իրեն բարի առաջադրութիւնները, որոնք ի գործ չէ դրած։ Այն աւեն պիտի հասկնայ որ ճար ճարակ չկայ իւր յաւիտենական կործանման։ Ո՜հ Աստուած, ո՜հ Աստուած. և այս հառաչանքն իրեն համար կրկին դժոխք մը

պիտի ըլլայ։ Ոչ բնաւ կամքին ուզածը պիտի կատարուի. այլ ընդ հակառակն միշտ չուզածները պիտի ըլլան, այսինքն ամէն տեսակ տանջանք։ Միտքը պիտի ճանչնայ իւր կորսնցուցած մեծ բարիքը, այսինքն զարքայութիւն ու զԱստուած։ — Ո՛վ Տէր, ո՛վ Տէր, ներէ ինձ Յիսուսի սիրոյն համար։

Գ. Մեղաւորդ, որ հիմա բանի տեղ չես դներ զարքայութիւնն ու զԱստուած կորսնցնելը, քու կուրութիւնդ պիտի ճանչնաս՝ երբ տեսնես երանելեաց յաղթանակն ու երկնից թագաւորութեան վայելքը. և դու իբրև հոտած շուն մը պիտի վռնտուիս այն երանեալ հայրենիքէն, Աստուծոյ զմայլեցուցիչ երեսէն, յընկերութենէ Մարիամու, և հրեշտակաց և սրբոց։ Այնատեն կատղելով պիտի սկսիս պոռալ. ո՛վ արքայութիւն անվերջ վայելից, ո՛վ

Աստուած անբաւ բարի, չես ու պիտի չըլլաս իմինս։ Չա՛պա, ձեռք զարկ ապաշխարութեան, մի՛ սպասեր որ ժամանակն անցնելով ատեն չունենաս։ Տուր զքեզ Աստուծոյ, ու անկեղծութեամբ սկսէ սիրել զինքը։ Աղաչէ զՅիսուս, աղաչէ զՄարիամ, որ գթան վրադ։

ՇԱԲԱԹ

Պատժոց յաւիտենականութեան վրայ

Ա. Մտածէ որ դժոխքը վերջ չունի. ամէն տեսակ պատժով կը տանջուին ու ամենքն ալ յաւիտենական են։ Անանկ որ հարիւր, հազար, բիւրաւոր, միլիոնաւոր տարիներ ու դարեր անցնին դժոխքը միշտ նոր կը սկսի։ Եթէ այս վայրկենիս հրեշտակ մ՚աւետիս տանի դատա-

պարտելոյ մը՝ որ Աստուած զինքը կ'ուզէ դժոխքէն ազատել, բայց ե՞րբ. երբոր այնչափ դարեր անցնին որչափ են Ջրոյ կաթիլները, ծառոց տերևներն ու ծովու և երկրիս աւազի հատիկները. կը սարսափիս դու այս ըսածէս, բայց այս ստոյգ է որ այն դատապարտեալը չատ աւելի կ'ուրախանայ այս լուրիս, քան թէ դու մեծ թագաւորութեան մը տէր ըլլայիր։ Այո՛, վասն զի ասանկ կ'ըսէ դատապարտեալը. իրաւ է որ այնչափ դարեր պիտի անցնին, բայց վերջապէս օր մ'ալ պիտի գայ որ այն դարերը լմննան։ Իսկ ընդհակառակն հիմայ, այս դարերս կ'անցնին, բայց դժոխքը միշտ նոր կը սկսի. ծովու աւազին, Ջրոց կաթիլներուն և տերևներու հաւասար դարեր կը լմննան, և դժոխքը նորէն կը սկսի։ Ամէն դատապարտեալ սիրով այս դա-

չինքս Աստուծոյ հետ կը դնէր. Տէր, որչափ որ կ'ուզես պատիժներս ստուկացուր, երկընցուր որչափ որ կ'ուզես, բաւական է որ վերջանայ, ես գոհ եմ։ Բայց այս վերջը ոչ երբեք պիտի ըլլայ։ Գոնէ այս խաբէական յոյսն ունենայինք, թէ ո՛ գիտէ, թերևս Աստուած ողորմի ու ազատէ գիս օր մը. բայց ոչ. դատապարտեալը միշտ իր ճակտին վրայ գրած պիտի տեսնէ իր յաւիտենական դատապարտութիւնն ու պիտի ըսէ. ուրեմն այս ամէն պատիժներս որ հիմա կը կրեմ, այս կրակն, այս տխրութիւնս, այս գոռում գոչումներս լմննալիք չունի՞ն։ Ոչ, պատասխան պիտի առնէ. ոչ, ո՛չ բնաւ։ Ո՞րչափ պիտի տևեն. միշտ։ Ո՞հ. ո՛չ բնա՛ւ. ո՛հ միշտ. ո՛վ յաւիտենականութիւն. ո՛վ դժոխք։ Ի՞նչպէս մարդիկ կը հաւատան այս բանիս, և դարձեալ կը մեղանչեն ու մեղքի մէջ կ'ապրին։

Բ. Եղբայր իմ, լաւ ուշ դիր. մտածէ որ քեզի ալ դժոխքը բաց է, եթէ մեղանչես։ Ոտքիդ տակը կը ծխայ արդէն այդ ահագին հնոցը, և այս կարդալու միջոցիդ քանիներ մէջը չեն գլորիր։ Մտածէ որ եթէ մէյ մը հոն իյնաս, ալ ազատում չունիս։ Եւ թէ որ երբեմն արժանի եղեր ես դժոխոց, չնորհակալ եղիր Աստուծոյ, որ գքեզ հոն չէ ղրկած, և շուտով նայէ որ կրցածիդ չափ դարման տանիս. լաց մեղքերդ և ձեռքէդ եկած միջոցները բանեցուր փրկուելու համար։ Ստէպ խոստովանէ, ամէն օր այս կամ ուրիշ հոգևոր գիրք մը կարդա. սուրբ Աստուածածնայ չերմեռանդ եղիր՝ ամէն օր պսակ կուսին ըսելով, շաբաթ օրերը ծոմ պահելով. փորձութեանց դէմ դիր, յօգնութիւն կանչելով գՅիսուս և գՄարիամ։ Մեղաց առիթներէն փախիր, ու

թէ որ ազդէ քեզի Աստուած զաչխարհք ալ թողուլ, թո՛ղ առանց մտածելու. յաւիտենական պատիժներէն ազատելու համար ինչ ալ որ ընէ մարդս, դեռ բան մը ըսել չէ, դեռ ոչինչ է։ Ուր յաւիտենականութիւնը վտանգի մէջ է՝ ապահովութիւն չկայ, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս։ Յաւիտենականութիւնն ապահովցընելու համար, բնաւ զգուշութիւն բաւական չի կրնար սեպուիլ։ Տե՛ս որչափ անապատաւորներ դժոխքէն փախչելու համար՝ քարանձաւներու մէջ ու անապատներն առանձնացան։ Իսկ դու ի՞նչ կ'ըսես, յետ այնչափ անգամ դժոխքի արժանի ըլլալէդ ետքը։ Ի՞նչ կ'ընես. ի՞նչ կ'ընես։ Տե՛ս որ գքեզ կը դատապարտես։ Տուր գքեզ Աստուծոյ, ու ըսէ. Ահաւասիկ ես, Տէր, պատրաստ եմ ընելու ինչ որ ինձմէ կ'ուզես։ Կոյս Մարիամ, օգնէ ինձի։

ՅԻՍՈՒՍԻ

ՁԱՐՁԱՐԱՆԱՑ ՎՐԱՑ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾԱԿԱՆՆԵՐ

—

Թէ ինչ սէր ցուցուց Յիսուս՝ մեզի համար քաշածներովը։

Ա. Յիսուսի գալստենէն ետքը, ալ վախի ժամանակ չէ, հապա սիրոյ. վասն զի Աստուած մըն է մեզի համար մեռնո-

ղը։ Հին օրինաց ատեն, քանի որ Յիսուս աշխարհք չէր եկած, կրնար մարդս տարակուսիլ թէ արդեօք Աստուած կը սիրէ՞ զինքն ամէն սիրով, բայց զՅիսուս մեռած, արիւնլուայ, անարգ խաչի մը վրայ կախուած տեսնելէն ետքը՝ չենք կրնար Աստուծոյ սիրոյն վրայ տարակուսիլ։ Ո՞վ կրնայ ըմբռնել Յիսուսի ամբաւ սիրոյն սաստկութիւնը, որով քաւել ուզեց մեր մեղաց պատիժը։ Սակայն ի հաւատոց է թէ՝ «Նա զմեզս մեր բառնայ և վասն մեր չարչարի». Ես ծԳ. 4։ Ամէն բան քաշեց՝ միայն զմեզ անհուն կերպով սիրելուն համար։ Մեր մեղաց պատեղութենէն զմեզ մաքրելու համար, ինքն ուզեց մեռնիլ. և իր արեամբը սրբել զմեզ։ Ո՛վ անչափ գթութիւն, անբաւ բարութիւն և անհուն սէր Աստուծոյ։

Ո՛վ փրկիչ իմ, չատ պարտա-

կան եմ զքեզ սիրելու, և մեծա-
պէս ապերախտ կ'ըլլամ, թէ որ
բոլոր սրտովս չսիրեմ զքեզ։ Յի-
սուս իմ, քու սէրդ մոռնալով
անարգեցի ես զքեզ, իսկ դու
բնաւ չմոռցար զիս. ես քեզի
երես դարձուցի. իսկ դու ինծի
մօտեցար, ես զքեզ դառնացու-
ցի, և դու ինծի ներեցիր. ես
դառնացնելէն չդադրեցայ, դու
ալ ներելէն։ Ո՜հ, Տէր իմ. այն
սիրոյդ համար ըլլայ որով զիս
խաչին վրայ սիրեցիր, քու սուրբ
սիրոյդ կապովը զիս քեզի հետ
կապէ, բայց անանկ որ ալ քեզ-
մէ չկարենամ բաժնուիլ։ Զքեզ
կը սիրեմ, ով անհուն բարու-
թիւն, և միշտ սիրել կ'ուզեմ։

Բ. Ոչ այնչափ Յիսուսի մա-
հը, ցաւերն ու նախատինքները,
որոնք զմեզ սիրելուն համար քա-
շեց, պէտք է վառեն զմեզ իր սի-
րով՝ որչափ այն քաշածներուն
վախճանը, որ է մեզի իր սէրն

յայտնել և մեր սիրտը շահիլ։
«Այսուիկ գիտացաք զսէրն, զի
նա զանձն իւր եդ վասն մեր».
Ա. Յովհ. Գ. 16։ Զմեզ փրկելու
համար հարկ չէր որ Յիսուս
այնչափ չարչարանք քաշէր ու
ինչուան մեռնէր, այլ բաւական
էր մէկ արեան կաթիլ մը կամ
մէկ արցունք մը թափէր. մար-
դացեալ Աստուծոյն արեան կամ
արտասուաց մէկ թափած կա-
թիլը՝ բաւական էր բիւրաւոր
աշխարհքներ փրկելու. բայց ին-
քը բոլոր արիւնն ուզեց թափել.
ուզեց՝ ցաւոց և անարգութեանց
ծովու մէջ ընկղմել ինքզինքը,
որպէս զի մեր վրայ ունեցած
անհուն սէրն իմացնէ մեզի եւ
փոխադարձ ստիպէ զմեզ զինքը
սիրելու. «Սէրն Քրիստոսի ստի-
պէ զմեզ», կ'ըսէ Պօղոս առա-
քեալ. Ա. Կոր. Ե. 14. չըսէր
Քրիստոսի չարչարանքները՝ մա-
հը կը ստիպեն զմեզ զինքը սի-

րելու, հապա սէրը։ Եւ ո՛վ էինք մենք, ո՛վ Տէր, որ այդչափ թանկագին ուզեցիր գնել մեր սէրը։ «Ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ որ ի վերայ նոցայն մեռաւ». Բ. Կոր. Ե. 15։ Ուրեմն փրկիչ իմ, դու մեզի համար մեռար որպէս զի մենք ալ քեզի ու քու սիրոյդ համար ապրինք։ Բայց դու, Տէր, որ այսչափ սիրելի ես, դու որ այսչափ չարչարանք քաշեցիր մարդկանց սիրելի ըլլալու համար, արդեօք քանի հոգի կը գտնուին որ զքեզ սիրեն։ Գրեթէ զամէնքը կը տեսնեմ որ մէյմէկ բան կը սիրեն, ո՛րը հարստութիւն, ո՛րը պատիւ, ո՛րը զուարճութիւն, ուրիշն ազգականները, մէկն ալ բարեկամները, կայ ալ որ կենդանիները կը սիրէ։ Բայց քանի՛ հոգի են անոնք որ ճշմարտապէս սիրեն զքեզ,

դու որ սէր ես անհուն։ Ո՛վ Տէր, խիստ քիչ են։ Բայց այս քիչերուս մէջ ես ալ կ՝ուզեմ ըլլալ ասկէ ետքը, ես՝ որ երբեմն դառնացուցի զքեզ՝ հողը քեզմէ աւելի սիրելով. բայց հիմա ամէն բանէ վեր զքեզ կը սիրեմ։ Ո՛վ Յիսուս իմ, այն կսկիծներն որ ինծի համար քաշեցիր, կը ստիպեն զիս սիրել զքեզ և աւելի սէրս կը վառի ու կը բորբոքի՝ մտածելով որ այնչափ չարչարանք կրեցիր, առ իս ունեցած սէրդ յայտնելու համար. որպէս զի ես ալ փոխադարձ զքեզ սիրեմ։ Ո՛վ Տէր իմ սիրեցեալ, սիրոյդ համար դու զքեզ բոլոր ինծի տուիր, ես ալ սիրոյս համար բոլոր քեզի կու տամ. դու իմ սիրոյս համար մեռար, ես ալ քու սիրոյդ համար մեռնիլ կ՝ուզեմ, երբ և ինչ կերպով որ կ՝ուզես։ Ընդունէ՛ ուրեմն սէրս և օգնէ՛ ինծի չնորհքովդ։

Գ. Յիսուսի չարչարանքները մտածելէն լաւագոյն միջոց չկայ զմեզ իր սիրովը վառելու։ Մէկն որ Յիսուսի չարչարանաց կը հաւատայ և անոնց վրայ կը մտածէ, անկարելի է որ դառնացընէ զինքն ու չսիրէ, մանաւանդ թէ չբորբոքի անոր սիրովն, ինչպէս ինքը մեր սիրով։ Անոր համար կ'ըսէ Առաքեալը, թէ՝ երբ հեթանոսք կը լսէին խաչեցելոյն Յիսուսի չարչարանքները՝ խենթութիւն կը կարծէին։ « Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս՝ Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն »։ Ա. Կոր. Ա. 23։ Ի՞նչպէս կարելի է, կ'ըսէին, որ ամենակարող և երջանիկ Աստուած մը, ինչպէս որ ինքն է, ուզէ արարածներու համար մեռնիլ։

Ո՛վ Տէր. դու որ այս աստիճան մարդկանց սիրով լեցուած ես, ինպէս կարելի է ըմբռնել

որ այսչափ երած բարիքներդ ու այսչափ ցցուցած սէրդ՝ մարդկանցմէ ասանկ ապերախտութեամբ փոխարինուի։ Կ'ըսուի սովորաբար թէ սիրոյ փոխադարձ սէր կը հատուցուի. բայց քու սիրոյդ ինչ սէր կրնայ փոխարինուիլ։ Քու սիրոյդ փոխարինելու համար, որ մեռնելովդ ցըցուցիր մեզի, պէտք էր ուրիշ Աստուած մը մեռնէր, քեզի համար։ Ո՛վ խաչ, ո՛վ վէրք, ո՛վ մահ Յիսուսի, կը ստիպէք զիս սիրել զՅիսուս։ Ո՛վ Աստուած յաւիտենական, սիրելի և անսահման, կը սիրեմ զքեզ ու քեզի համար միայն կ'ուզեմ ապրիլ և քեզի սիրելի ըլլալ։ Ըսէ ինչ որ կ'ուզես, պատրաստ եմ ու կ'ուզեմ ամէն ուզածդ ընել։ Դու յոյս իմ Մարիամ, աղաչէ Յիսուսի ինձի համար։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Յիսուսի արիւն քրտնելուն և պարտեզին մէջ կրած տագնապներուն վրայ։

Ա. **Յիսուսի մեռնելու ժամը մօտեցած ըլլալով՝ Գեթսեմանիի պարտէզը կ'երթայ, ուր ինքիրմէ իր դառն չարչարանքները կը սկսի զգալ. թող կու տայ որ վախ, նեղութիւն եւ տրտմութիւն գան զինքը չարչարեն։ Սկսաւ մեծ վախ մը ու նեղութիւն մը զգալ մահուընէ եւ անոր հետ գալիք չարչարանքներէն։ Ան ատեն ձաղկանքները, փշերը, գամերը, խաչը աչքին առջև կու գային զինքը չարչրելու համար. և ոչ թէ ետևէ ետև, հապա ամէնը մէկտեղ. մանաւանդ կ'երևակայէր**

այն մահն որ ամենէն պիտի թողուի, ու ոչ մարդիկներէ ոչ աստուածմէ մխիթարութիւն մը պիտի ունենայ։ Անանկ որ, այնչափ չարչարանքներն ու նախատինքները տեսնելէն գետին ինկած, կ'աղօթէր առ Հայրն երկնաւոր որ ազատէ զինքն այն վայրկենէն, «Հայր իմ եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ»։ Մտ. Ի.Զ. 42։ Բայց ինչ. Յիսուս չէ՞ր որ այնչափ կը փափաքէր չարչարուիլ ու մարդկանց համար մեռնիլ, ըսելով. «Մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զիարդ փութամ մինչև կատարեսցի»։ Ղկ. ԺԲ. 50։ Ի՞նչպէս ուրեմն հիմա չարչարանքներէ և մահուընէ ասանկ կը վախէ։ Ո՜հ, շատ իսկ կ'ուզէր ինքը մեզի համար մեռնիլ, բայց որպէս զի չկարծենք թէ իր աստուածային կարողութեամբը մեռաւ, առանց նեղութիւն մը զգա-

լու՝ անոր համար այն աղօթքն ըրաւ առ Հայր որպէս զի ցուցնէ մեզի, որ չէ թէ միայն մեր սիրոյն համար կը մեռնէր, այլ և այնպիսի դառն մահուամբ կը մեռնէր, որ գինքը մեծապէս կը զարհուրեցնէր։

Բ. Յիսուսի տագնապները ստստկացնելու համար մեծ տըրտմութիւն մ'ալ վրան կու գայ, անանկ որ կ'աղաղակէր, թէ այն իսկ բաւական է իր մահուանը. «Տրտում է ոգի իմ, մինչև ի մահ»։ Մտ. Ի՟Զ. 38։ Բայց, ո՛վ Տէր, այն մահն որ մարդիկ քեզի կը պատրաստեն, քու ձեռքդ է անկից ազատիլը՝ թէ որ կ'ուզես. ինչո՞ւ կը տագնապիս։ Ո՛հ, ոչ այնչափ չարչարանաց ցաւերը կը կըտըրտէին սիրեցեալ Փրկչին սիրտը, որչափ մեր մեղքերը։ Ինքը՝ մեղքերն աշխարհքէս ջնջելու համար եկած էր. բայց տեսնելով որ իր այնչափ չարչարանքներ

քաշելէն ետքն ալ՝ աշխարհքիս վրայ անթիւ անհամար անօրէնութիւններ պիտի գործուին, այն գինքը մեռնելէն առաջ մահուան կը մօտեցնէր, և այնչափ արեան քրտինք թափել կու տար՝ մինչև գետինը կը թրջէր. «Հոսէին ի նմանէ քրտունք իբրև գկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ ի յերկիր»։ Ղկ. Իբ. 44։ Ա՛յ, վասն զի կը տեսնէր այն ատեն Յիսուս աչքին առջև իր մահուընէն վերջ մարդկանց ընելու մեղքերը, անոնց մէկմէկու դէմ ատելութիւնները, անամօթութիւնները, գողութիւնները, հայհոյութիւնները, ըսպանութիւնները, եւ ամենայն յանցանք բոլոր իրենց գէշութիւններով իբրև անգութ գազան կու գային իր սիրտը պատռտելու։ Ուստի կ'ըսէր. Ա՞յս է ուրեմն ձեզմէ՝ ո՛վ մարդիկ, սիրոյս փոխարէնը։ Ո՛հ թէ ե-

րախտագէտ տեսնէի զձեզ ինձ, ո՛րչափ ուրախութեամբ ի մահ պիտի վազէի։ Բայց իմ այսչափ չարչարանքներէս ետքն՝ այսչափ մեղք տեսնել, այնչափ սիրոյս փոխարէն՝ այսչափ ապերախտութիւն՝ այս գիս ինչուան ի մահ պիտի տրտմեցնէ և ինձ արիւն քրտնել կու տայ։

Ուրեմն, սիրելիդ իմ Յիսուս, իմ մեղքերս էին այն ատեն որ զքեզ այնչափ տրտմեցուցին։ Թէ որ ես քիչ մեղանչած ըլլայի, դու ալ քիչ կը կրէիր։ Ո՛րչափ ախորժ առի զքեզ վշտացնելուս, այնչափ աւելի քու տագնապներդ շատցուցի։ Եւ ինչպէս հիմա ցաւէս չեմ մեռնիր մտածելով որ տրտմութիւնդ եւ ցաւերդ աւելցուցի սիրոյդ փոխարէն։ Ե՞ս ուրեմն դառնացուցի այն սիրտն, որ գիս այնչափ սիրեր է։ Արարածներու երախտագէտ եղած եմ, և քեզի միայն ապերախտ։ Յի-

սուս իմ, տո՛ւր ինձ թողութիւն, վասն զի բոլոր սրտովս կը զղջամ։

Գ. Տեսնելով Յիսուս ինքզինքը մեր մեղքերով ծանրացեալ. «Անկաւ ի վերայ երեսաց իւրոց»։ Մտ. Իգ. 39։ Երեսը գետին կը խոնարհեցնէ, իբրև թէ կ՝ամաչէ աչքերը երկինք վերցընել։ Եւ մահուան հոգեվարի մէջ, երկայն կ՝աղօթէր։ «Եւ էր ի տագնապի, եւ մտադիւրութեամբ ևս կայր յաղօթս»։ Ղկ. ԻԲ. 43։ Դու, Տէր իմ, փոխանակ իմ մեղքերուս, յանձն առնելով մեռնիլ, կ՝աղօթէիր ինձ համար առ Հայր Աստուած. որ թողու ներէ անօրէնութեանցս։

Հոգի իմ, ինչպէս ինքզինքդ այսպիսի սիրոյ մը չես նուիրեր. ինչպէս անոր հաւատալով՝ ուրիշ բան կրնաս սիրել բաց ի Յիսուսէ։ Հապա, ընկիր հոգեվարք Յիսուսիդ առքն ու լսէ. Ո՛վ Փրկիչ իմ սիրեցեալ, ինչ-

պէս կրցար սիրել զքեզ չարա-
չար դառնացնողը: Ի՛նչպէս կըր-
ցար ինձ համար մեռնիլ, տես-
նելով իմ ապերախտութիւններս:
Տուր գոնէ ինձ ալ այն ցաւէդ,
զոր կրեցիր պարտէզին մէջ իմ
մեղացս համար. կը զգուիմ արդ
անոնցմէ. ո՛վ սէր Յիսուսի դու ես
իմ սէրս: Տէր, ես զքեզ կը սի-
րեմ, զքեզ կը սիրեմ և քու սի-
րոյդ համար ամէն նեղութեան և
ամէն կերպ մահուան պատրաստ
եմ: Ա՛յն տագնապներն որ պարտի-
զին մէջ կրեցիր, անոնց արդեամբ
տուր ինձ յարատևութեան սուրբ
չնորհքը: Մարիամ, յոյս իմ, ա-
ղաչէ զՅիսուս ինձ համար:

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Յիսուսի Հրէիցմէ մատնուելուն և բանտուելուն վրայ.

Ա. Կը հասնի Յուդա ձիթե-
նեաց պարտէզն ու պագնելով կը
մատնէ իւր վարդապետը. իսկ
յանդուգն պաշտօնեայք կը յար-
ձակին Յիսուսի վրայ եւ աւա-
զակի մը պէս կը կապեն զին-
քը. «Կալան զՅիսուս և կապե-
ցին»: Յովհ. ԺԸ. 12: Աստուած
մ'է կապուածը. ինչո՞ւ, եւ ո-
րոնցմէ՞. նոյն իսկ իւր արարած-
ներէն: Հրեշտակք երկնից, ի՞նչ
կ'ըսէք: Եւ դու Յիսուս իմ, ին-
չո՞ւ կը թոյլուս որ զքեզ կա-
պեն: Գերեաց եւ յանցաւորաց
չուաններն ինչ ունին թագա-
ւորաց թագաւորին և սրբոյն
սրբոց հետ: Բայց եթէ կը յանդգն-

նին մարդիկ կապել զքեզ, դու որ ամենակարող ես, ինչո՞ւ զքեզ չես քակեր ու ազատեր այն բարբարոսաց տուած չարչարանքներէն։ Ո՛հ, այն չուաններն բան մը չեն, այլ աւ մեզ ունեցած սէրդ է որ զքեզ կը կապէ և ի մահ կը դատապարտէ։

Տե՛ս, ո՛վ մարդ, կ'ըսէ Ս. Պռնավենդուրա, տե՛ս թէ ինչպէս գէշ կերպով կը վարուին Յիսուսի հետ. ոմանք կը բռնեն, ոմանք կը նեղեն, ոմանք կը կապեն, ոմանք ալ կը հրեն։ Յիսուսին ալ նայէ, ինչպէս հեզ գառնուկի մը պէս առանց դէմ դնելու կը թողու զինքը որ մահուան տեղը տանին։ Դուք աշակերտք, ինչ կ'ընէք. ինչո՞ւ չէք վազեր ու թշնամեաց ձեռքէն զինքը ազատեր, կամ գոնէ ինչո՞ւ հետը չէք երթար ու դատաւորին դիմաց իր անմեղութիւնը պաշտպաներ։ Բայց, ո՛վ

Տէր, հազիւ թէ աշակերտներն զինքը բռնած կապած կը տեսնեն՝ կը թողուն ու կը փախչին։ «Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին՝ եւ փախեան»։ Մրկ. ԺԴ. 50։

Ո՛վ Յիսուս իմ, երեսէ ձըգուած, ո՞վ զքեզ պիտի պաշտպանէ, թէ որ ամենէն սիրելիներդ զքեզ կը թողուն։ Աւա՛ղ, այն եղած նախատինքը չարչարանքներդ մովդ միայն չլմնցաւ։ Որչափ հոգիք յետ արդեամբդ սրբըելու ու մասնաւոր չնորհքներդ ալ վայելելու՝ անարգ շահու մը, կամ մարդկային նկատման մը և կամ անարգ հաճոյից համար զքեզ կը թողուն։ Ափսո՜ս ինձ, որ ես ալ այս ապերախտներէն մէկն եմ։ Յիսուս իմ, թողութիւն տուր ինձ, ա՛լ չեմ ուզեր զքեզ թողուլ, կը սիրեմ զքեզ, և աւելի յանձն կ'առնում մեռնիլ՝ քան քու չնորհդ կորսընցընել։

Բ. Երբոր զՅիսուս Կայիափայի առջև հանեցին, հարցուց իւր աշակերտաց և իւր վարդապետութեան վրայօք։ Պատասխանեց Յիսուս, Թէ ծածուկ բան խօսած չեմ հապա ամենուն առջև, ուստի չորս կողմի կեցողներն լաւ գիտէին իւր քարոզածները։ «Ես յայտնապէս խօսեցայ, ահաւասիկ նոքա գիտեն զինչ խօսեցայ»։ Յովհ. ԺԸ. 20։ Բայց այս պատասխանիս պաշտօնեաներէն մին, իբրև լրբի մը, ծանր ապտակ մը կ'իջեցընէ, ըսելով. «Ա՞յդպէս պատասխանի տաս քահանայապետի»։ Ո՛վ համբերութեանդ, Աստուած իմ։ Ի՞նչպէս այնպիսի հեզ պատասխան մը՝ ասանկ նախատանաց արժանի սեպուեցաւ այնչափ բազմութեան՝ և նոյն իսկ քահանայապետին առջև, որ փոխանակ այն անօրէնն յանդիմանելու՝ լուութեամբն ըրածին կը հաւնի։

Ո՛վ Յիսուս իմ, ամէն բանի կը համբերես, քեզի դէմ ըրած անօրէնութիւններս քաւելու համար։ Սէր իմ, չնորհակալ եմ, այս բանիս։ Հայր երկնաւոր, Յիսուսի արդեամբք թողութիւն տուր ինձ։ Փրկիչ իմ, զքեզ քան զիս աւելի կը սիրեմ։

Վերջը հարցուց իրեն քահանայապետը Թէ՝ իրաւցնէ Աստուծոյ որդի՞ն է։ Յիսուս աստուածային անուանէն պատկառելով, հաստատեց Թէ իրաւ է, այն ատեն Կայիափա պատռեց զգեստները, ըսելով Թէ հայհոյեց Յիսուս. և ամէնքը աղաղակեցին Թէ մահուան արժանի է։ «Նոքա պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է»։ Մտ. ԻՋ. 65։

Այո՛, Փրկիչ իմ, մահուան յանցաւոր ես վասն զի իմ յանցանքներս վրադ կ'առնուս՝ որ յաւիտենական մահուան արժանի եմ։ Բայց որովհետև դու քու

մահուամբդ իմ կեանքս փրկեցիր, պէտք է որ ես ալ քեզի համար կեանքս տամ։ Ես զքեզ կը սիրեմ, և ուրիշ բանի չեմ փափաքիր՝ բայց եթէ սիրել զքեզ։ Եւ դու որ թագաւոր ես թագաւորաց և ուզեցիր իմ սիրոյս համար քան զամէն մարդ աւելի նախատուիլ, ես ալ քու սիրոյդ համար ամէն նախատինք կ'ուզեմ քաշել, ինչ ալ որ ըլլայ։ Միայն կը խնդրեմ քու նախատանացդ արդեամբը՝ տաս ինձ չնորհք համբերութեան։

Գ. Քահանայից ժողովքը մահապարտ վճռելով զՅիսուս, չարագործներու բազմութիւն մը բոլոր գիշերը կը ծեծեն, կը կրտփեն զինքը ու երեսը կը թքնեն իբրև անօրէն դատապարտելոյ մը։ «Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և կռփեցին զնա, եւ ոմանք ապտակեցին»։ Մտ. Իշ. 67։ Եւ ապա ծաղր ընելով կ'ըսէին.

«Մարգարեաց մեզ Քրիստոս, ով է որ եհարն զքեզ»։ Աւետ։ Ո՞վ սիրեցեալդ իմ Յիսուս, անոնք ապտակ կ'իջեցնեն քեզ, երեսդ կը թքնեն և դու լռուկ կը կենաս. և գառնուկի մը պէս առանց ձայն հանելու ամէն բանի կը համբերես, մեր տեղն հատուցանելու համար։ «Իբրև ոչխար ի սպանդ վարեցաւ. եւ իբրև որոշ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր»։ Ես. ծԳ. 7։ Բայց եթէ անոնք զքեզ չեն ճանչնար. ես զքեզ իմ Տէրս և Աստուածս կը դաւանիմ, կը ճանչնամ անմեղութիւնդ և գիտեմ որ բոլոր ինձ համար կը կրես։ Չնորհակալ եմ Յիսուս, եւ կը սիրեմ զքեզ բոլոր սրտովս։

Երբոր լուսցաւ՝ Պիղատոսի տարին զՅիսուս, որպէս զի մահուան դատապարտէ։ Պիղատոս անմեղ դատեց զինքը, բայց Հը-

րէից ձեռքէն ազատելու համար՝ որ աղաղակ կը բարձրացնէին, Հերովդեսի դրկեց՝ որ անոր հըրաշք ընելը կ'ուզէր տեսնել. պարզ հետաքրքրութեան համար քանի մը հարցմունք ըրաւ Յիսուսի. բայց Յիսուս արժանի չսեպելով այն չարագործը պատասխանի, լուռ կեցաւ ու պատասխան չտուաւ։

Աստր վրայ այն հպարտը՝ չատ նախատինքներ ըրաւ Յիսուսի, և մանաւորապէս խենթի ճերմակ զգեստ հագցնել տուաւ։

Ո՛վ յաւիտենական իմաստութիւն, ո՛վ Յիսուս իմ, խենթ համարուելու նախատինքը կը պակսէր քեզ։ Ո՛վ Տէր, ես ալ անցեալ կենացս մէջ Հերովդեսի պէս նախատեցի զքեզ, բայց մի՛ Հերովդեսի պէս պատժեր զիս՝ ձայնէդ զիս զրկելով։ Հերովդէս զքեզ չէր ճանչնար. ես զքեզ իմ Աստուածս կը խոստովանիմ։

Զզջաց Հերովդէս իւր զքեզ նախատելուն, ես բոլոր սրտովս կը զղջամ։ Հերովդէս զքեզ չսիրեց, ես ամէն բանէ վեր զքեզ կը սիրեմ։ Մի զրկեր զիս ձայնէդ, ըսէ ինչ որ կ'ուզես ինձմէ. քու չնորհքովդ ամէն բան կ'ուզեմ ընել։ Մարիամ, յոյս իմ, միջնորդ եղիր առ Յիսուս ինձ համար։

ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Չաղկանք.

Ա. Տեսնելով Պիղատոս թէ Հրեայք չեն դադրիր Յիսուսի մահը պոռալէն, կը մատնէ զինքը դահիճներու ձեռքը որ ծեծեն. «Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս և գան եհար»։ Յովհ. ԺԹ. 1։ կը կարծէր անիրաւ պա-

տաւորը, թէ ասով անոր թըշ-
նամիները կը լռեցնէ. և զինքը
մահուանէ կ'ազատէ: Բայց այս
գիւտը՝ շատ ցաւագին եղաւ Յի-
սուսի. երբ իմացան Հրեայք
թէ Պիղատոս այն պատժէն եւքը
պիտի թողու զինքը, ինչպէս որ
ըսաւ, «Խրատեցից զդա և ար-
ձակեցից»: Ղկ. ԻԳ. 23, կա-
շառեցին զդահիճները՝ որ այն-
պէս ծեծեն զինքը՝ որ այն տան-
ջանքին մէջ մեռնի: Մտի՛ր, հո-
գի իմ, Պիղատոսի պալատը, այն
օրն որ Փրկչին ցաւոց և նախա-
տանաց օրն էր. տե՛ս թէ ինչ-
պէս Յիսուս հոն հասած, ինքն
իր զգեստները կը հանէ, սեանը
կը պլլուի, ցուցնելով մարդկանց
իւր չարչարանքներն ու սէրը:
Տե՛ս թէ ինչպէս անմեղ Գառնը,
գլուխը խոնարհած, ամէնալէն
կարմրցած՝ տանջանաց կը սպա-
սէ: Եւ ահա դահիճները, կա-
տաղի շանց պէս, վրան կը յար-

ձակին: Տե՛ս մէկը կուրծքը կը
ծեծէ, մէկն ուսը, մէկալը կո-
ղերը. անանկ որ և ոչ իսկ սուրբ
գլուխը ծեծելէ ազատ ճնաց: Ո՜հ,
իւր աստուածային արիւնն ա-
մէն կողմէն կը վազէ, դահիճ-
ները՝ սիւնը՝ գետինը՝ բոլոր իւր
արեամբ թրջելով:

Ո՛վ Տէր, դահիճներն ալ ու-
րիշ առողջ կողմ չգտնելով, վէրք
վէրքի վրայ կ'աւելցնեն, և այն
սրբազան մարմինը պատառ պա-
տառ կ'ընեն. «Ի վէրս ցաւոց
իմոց յաւելին»: Սղ. ԿԸ. 27:
Ո՛վ անձն իմ, ի՞նչպէս կրցար
դառնացնել այն Աստուածը, որ
քեզի համար ծեծուեցաւ: Եւ դու
Տէր իմ Յիսուս, ի՞նչպէս այդչափ
ցաւոց համբերեցիր ապերախտի
մը համար: Ո՛վ վէրք Յիսուսի,
դուք էք իմ յոյսս: Ո՛վ Յիսուս
իմ, դու ես հոգւոյս միակ սի-
րելին:

Բ. Շատ չարատանջ եղաւ այն

ծեծն Յիսուսի համար, որովհետև դահիճները վաթսուն հոգի էին (ինչպէս որ Ս. Մարիամ Մագդաղենացի Բացեանին յայտնուեցաւ) մէկմէկու տեղ անցնելով։ Վայրենասիրտքն ընտրեցան այս պաշտօնին. անով ամէն հարուած վէրք կը բանար, ծեծերուն թիւն հազարաւոր, անանկ որ Յիսուսի կողերը բացուեցան (ինչպէս որ յայտնուեցաւ Ս. Պրիճիտայի)։ Եւ յիրաւի այնպիսի վէրքեր բացին, որոնցմով Պիղատոս իսկ կը կարծէր թէ կը գորովէ Յիսուսի թշնամեաց սիրտը, ուստի զինքն անոնց կը հանէ ու կ'ըսէ. «Ահա այրդ ձեր»։ Բայց Եսայի մարգարէն առաջուց գուշակեր էր Յիսուսի կրելու խեղճ ցաւերը ծեծուելու ժամանակ. ըսելով թէ բոլոր սուրբ մարմինը պիտի պատըռտի, և բորոտի մը պէս բոլոր վէրք պիտի ըլլայ։

Ո՛վ Յիսուս, չնորհակալ եմ այնչափ սիրոյդ. կը ցաւիմ որ ես ալ դահիճներուն հետ միացայ զքեզ չարչարելու։ Կ'անիծեմ իմ չար հաճոյքներս, որ քու այնչափ ցաւոդ պատճառ եղան։ Յիշեցուր միշտ ինձ, ով Տէր, վրաս ցուցած սէրդ, որպէս զի ես ալ զքեզ սիրեմ ու ոչ երբէք զքեզ դառնացնեմ։ Ինչպիսի՛ դժոխք արժանի պիտի ըլլամ, թէ որ յետ քու այնչափ առիս ցուցած սէրդ ճանչնալուս, ու յետ այնչափ անգամ ինձ ներելուդ, ողորմելիս դառնամ նորէն զքեզ վշտացնեմ ու գիս դատապարտեմ։ Ո՛հ, այդ սէրդ և այդ ներելդ՝ դժոխքին մէջ ինձ ամենէն սաստիկ պատիժը պիտի ըլլայ. չէ, սէր իմ, մի՛ թողուր գիս։ Ես զքեզ կը սիրեմ, ով ամենաբարի, և բոլոր սրտով կը սիրեմ, և միշտ սիրել կ'ուզեմ։

Գ. Մեր յանցանքներուն և մաս-

նաւորապէս անմաքրութեանցը տեղ, ուզեց Յիսուս այս ծանր չարչարանքները քաշել իւր անմեղ մարմնով։ «Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց»։ Ես. ԾԳ. 5։ Ուրեմն ո՛վ Տէր, մենք զԱստուած դառնացուցինք, և դու ուզեցիր պատիժը հատուցանել։ Օրհնեալ ըլլայ միշտ քու անբաւ ողորմութիւնդ։ Ի՛նչ պիտի ըլլար ինձ, ո՛վ Յիսուս, թէ որ դու իմ տեղս չփոխարինէիր։ Ո՛ւր էր թէ ոչ երբէք դառնացուցած ըլլայի ըզքեզ։ Բայց թէ որ մեղանչելովս սէրդ արհամարհեցի, հիմա ուրիշ բան չեմ ուզեր՝ բայց եթէ զքեզ սիրել և քեզմէ սիրուիլ։ Դու ըսիր՝ թէ զքեզ սիրողը սիրեցէք. ես զքեզ կը սիրեմ բոլոր հոգւովս, արժանի ըրէ զիս սիրոյդ։ Կը յուսամ որ արդէն թողութիւն տուած ես մեղացս

և ողորմութեամբ ալ սիրոյդ մէջ առած։ Ո՛վ փրկիչ իմ սիրեցեալ, օրէ օր աւելի զիս սիրոյդ հետ կապէ, և մի՛ թողուր որ ասկէ վերջ կարենամ քեզմէ բաժնուիլ։

Ահա զիս բոլորովին ձեռքդ կը յանձնեմ. պատժէ՛ զիս ինչպէս որ կ՚ուզես, բայց ի սիրոյդ մի՛ մերժեր։ Տուր որ զքեզ սիրեմ, եւ ապա ինչ որ կ՚ուզես ըրէ ինձ։ Մարիամ յոյս իմ, միջնորդ եղիր առ Յիսուս ինձ համար։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Փշով պսակուիլը.

Ա. Բարբարոս դահիճները գոհ չըլլալով Յիսուսի տուած քըստմնելի հարուածներով և սաստնաներէն ու Հրեաներէն գրգռուած, ծաղրական թագաւոր մը զինքը ձևացնել ուզելով՝ կար-

միր ողորմելի զգեստ մը վրան ձգեցին՝ թագաւորական վերարկուի տեղ, գաւազանի տեղ եղէգ մը ձեռքը տուին, և թագի տեղ՝ փշէ պսակ մը գլուխն անցուցին, և որպէս զի այն փուշպսակը՝ միայն նախատանաց համար չըլլայ, հապա նաև սաստիկ ցաւոց պատճառ, նոյն եղէգով փշերը՝ գլխուն մէջ կը մտցնէին: Այս պսակման տանջանքը խիստ սաստիկ եղաւ և երկայն տեւեց, վասն զի այն փշերն ինչուան ի մահ գլխուն մէջ ճնացին. ու ամէն անգամ որ պսակը գլխուն կը հանդիպէր, ցաւերը կը նորոգուէին:

Ո՛վ ապերախտ փշեր, ի՞նչ կ՚ընէք. այդպէս կը չարչրէք ձեր Արարիչը: Բայց ի՞նչ փշերը. դու հոգի իմ դու էիր որ անօրէն մեղքերովդ Տիրոջդ գլուխը վիրաւորեցիր: Յիսուս իմ սիրեցեալ, դու որ թագաւոր ես երկնից, հիմա ցաւոց ու անարգանաց թագաւոր եղեր ես: Տե՛ս թէ ոչխարացդ վրայ ունեցած սէրդ զքեզ ո՛ւր հասուց: Ո՛վ Տէր իմ, ես զքեզ կը սիրեմ, բայց քանի որ կ՚ապրիմ միշտ զքեզ կորսընցնելու՝ սէրդ արհամարհելու վտանգի մէջ եմ, ինչպէս անցեալ կեանցս մէջ: Յիսուս իմ, եթէ տեսնես որ զքեզ նորէն պիտի դառնացնեմ, հիմակուընէ առ կեանքս, հիմա որ կը յուսամ թէ չնորհացդ մէջն եմ: Մի՛ թողուր զիս որ ալ զքեզ մեղքերովս կորսնցնեմ. թէպէտ չատ արժանի եմ ես այս պատժոյս, բայց դու արժանի չես: Չէ Յիսուս իմ, ալ զքեզ չեմ ուզեր կորսնցնել:

Բ. Այն անօրէն բազմութիւնը բարբարոսաբար զՅիսուս պըսակելէն յետոյ, ծնրադրած դիմացը ծաղրելով բարև կու տային, կ՚ըսէին. «Ողջ եր արքայդ

Հրէից», ու երեսը կը թքնէին, ապտակ կը զարնէին, ու ծաղրելով կանչուրտելով կը նախատէին. «Ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին. Ողջ եր, թագաւոր Հրէից. Եւ հանէին նմա ապտակս: Մտ. ԻԷ. 28: Յովհ. ԺԹ. 3: Ո՛վ Տէր իմ, ինչ վիճակի հասեր ես. Աստուած իմ, թէ որ պատահմամբ մէկն անկէ անցնէր, եւ տեսնէր զքեզ այդպէս կերպարանափոխ, կարմիր պատուած զգեստով մը ծածկեալ, այն ձեռաց գաւազանովդ, այն փշով պսակուած, այդպէս ծաղրուած ու անարգուած այն խառնաղանճէն, ինչ պիտի կարծէր զքեզ, եթէ ոչ աշխարհիս ամենէն մեծ անօրէնն ու եղեռնագործը: Ահա Որդին Աստուծոյ բոլոր Երուսաղեմի խաղալիկ եւ ծաղր եղած:

Ո՛վ Յիսուս իմ, թէ որ արտաքին մարմնոյդ նայիմ, բաց

ի վիրաց եւ յարենէ բան չեմ տեսներ. թէ որ սիրտդ մտնեմ, ուրիշ բան չեմ գտներ՝ բայց եթէ վիշտ և դառնութիւն, որ զքեզ հոգեվարքութեան կը հասցընեն: Ո՛վ Տէր իմ ողորմութիւն ամբաւ, քեզմէ զատ ո՞վ կրնար իւր արարածներուն համար այնչափ խոնարհիլ ու այնչափ բան քաշել: Բայց որովհետև Աստուած ես աստուածաբար կը սիրես: Իւրաքանչիւր վէրքերդ որ կը տեսնեմ՝ ամէն մէկը սիրոյդ նըշաններն են: Ո՛հ, եթէ նկատէին մարդիկ աչքերնուն առջև Երուսաղեմայ մէջ կրած ցաւոցդ և նախատանաց տեսարանը, ո՞վ սիրոյդ վրայ չէր զարմանար: Տէր, ես զքեզ կը սիրեմ, և գիս բոլոր քեզ կ'ընծայեմ: Արիւնս և կեանքս ահա քեզի համար կու տամ: Ահա պատրաստ եմ չարչարուելու և մեռնելու, ինչպէս որ ուզես: Եւ ի՞նչ կրնամ

ժխտել քեզ, դու որ ինձ համար կեանքդ ու արիւնդ տուիր. ընդունէ՛ խեղճ մեղաւորի մը անձնանուէր զոհը, որ հիմա բոլոր սրտովը գքեզ կը սիրէ։

Գ. Երբ զՅիսուս Պիղատոսի առջև հանեցին, բեմի մը վրայ նստած ժողովրդեան հանեց զինքը ըսելով, «Ահա այրդ». ըսել ուզելով. ահա ձեզի այն մարդն որ ինձ բերիք, ամբաստանելով՝ թէ թագաւոր կ'ուզէ ըլլալ. ահա վախն անցաւ հիմա որ զինքը այս խեղճ վիճակին հասուցիք, ինչպէս կը տեսնէք, ալ երկայն կեանք չունենար. թողէք երթայ իր տունը մեռնի, մի՛ ստիպէք զիս անմեղ մը մահուան դատապարտել։ Բայց Հրեաներէն աւելի գրգռուած կը կանչուրտէին, «խաչեսցի, խաչեսցի։ Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց»։ Մտ։ Իէ. 25։ Բայց ինչպէս որ Պիղատոս

բեմին վրայէն ցուցուց զՅիսուս ժողովրդեան, այսպէս Հայրն երկնաւոր յերկնից կը ցուցնէ մեզ իր Որդին, նոյնպէս ըսելով. ահա այն մարդն՝ որ ձեզի փրկիչ խոստացայ, որուն այնչափ կը սպասէիք. ահա այն մարդն որ իմ մէկ հատիկ զաւակս է, զոր ինձ պէս կը սիրեմ. ահա ձեր սիրոյն համար ամենէն թշուառ ու ամենէն նախատեալ մարդը դարձեր է։ Է՞հ, նայեցէք իրեն, ու սիրեցէք զինքը։

Ո՛վ Տէր իմ, այո՛ կը նայիմ Որդւոյդ ու կը սիրեմ զինքը. բայց դու ալ նայէ անոր, եւ իր ցաւոց ու նախատանացն համար, թողութիւն տուր քեզի դէմ գործած բոլոր յանցանաց։ «Արիւն դորա ի վերայ մեր». Որդւոյդ արիւնը մեր հոգւոյն վրայ իջնայ և ողորմութեանդ արժանի ընէ զմեզ։ Կը ցաւիմ, ամբաւ բարի, զքեզ դառնացնելուս,

և զքեզ կը սիրեմ բոլորով սըրտիւ։ Բայց դու գիտես իմ տկարութիւնս, դու օգնէ ինձ. Աստուածդ իմ՝ ողորմէ ինձ։ Մարիամ յոյս իմ, միջնորդեա առ Յիսուս վասն իմ։

ՈՒՐԲԱԹ

Յիսուսի դատապարտութիւն ու Գողգոթա երթալը.

Ա. Վերջապէս Պիղատոս Օգոստոսի աչքէն իյնալու վախով, յետ այնչափ անգամ զՅիսուս արդար գտնելուն, կը դատապարտէ որ խաչին վրայ մեռնի։ Ո՜վ Աստուածդ դատապարտուած. ի՞նչ յանցանք գտաք վրան. կամ դու ո՛վ Տէր, ըսէ, ի՞նչ յանցանք ըրիր մահուան արժանի։ Գիտեմ, գիտեմ Տէր, ըրած յանցանքդ,

քու յանցանքդ զմեզ շատ սիրելդ է։ Պիղատոսէ աւելի այս զքեզ մահուան կը դատապարտէ։

Կը կարդան անօրէն վճիռը, Յիսուս մտիկ կ'ընէ, և ամենայն սիրով յանձն կ'առնու, հնազանդելով երկնաւոր Հօր կամաց, որ մեր մեղաց համար, անոր մեռնիլը կ'ուզէր և զայն խաչի վրայ. «Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի»։ Փիլ. Բ. 8։ Ո՜վ Յիսուս իմ, դու անմեղ ըլլալովդ յանձն առիր մեռնիլ իմ սիրոյս համար. ես մեղաւոր՝ քու սիրոդ համար յանձն կ'առնում մեռնիլ, երբ ու ինչպէս որ ուզելու ըլլաս։

Երբ վճիռը կարդացուեցաւ կատաղաբար բռնեցին անմեղ Գառնը, իւր զգեստները հագցուցին, և երկու տձև փայտերէ խաչ մը շինած իրեն բերին։ Զսպասեց Յիսուս որ իրենք զայն կըս-

նակը տան, ինքը գրկեց զայն, պագաւ, ու վիրաւոր ուսերուն վրայ առաւ, ըսելով. Եկո՛ւր սիրելի խաչս. երեսուներեք տարուընէ ի վեր է՝ որ զքեզ կը փնտռեմ, քու վրադ կ՚ուզեմ մեռնիլ, իմ ոչխարացս սիրոյն համար։

Ո՛վ Յիսուս իմ, դեռ ինչ կըրնայիր ընել գիս ստիպելու համար՝ որ զքեզ սիրեմ։ Թէ որ մէկ ծառաս ինքզինքն ինձ համար նուիրէր, բոլոր սէրս կը գրաւէր. ի՞նչպէս ուրեմն այսչափ տեն առանց զքեզ սիրելու կըրցեր եմ ապրիլ, գիտնալով որ դու ինձ համար մեռեր ես. բայց դու ինձ թողութիւն տալու համար մեռար։ Զքեզ կը սիրեմ, ո՛վ ամենաբարի, և որովհետև զքեզ կը սիրեմ, կը ցաւիմ զքեզ դառնացնելուս։

Բ. Ելան տեսանէն դատաւորք ու դատապարտեալք, որոնց մէջ

էր նաև Թագաւորն երկնից՝ խաչը ուսը. «Եւ բարձեալ էր ինքինին գիաչափայտն, և ելանէր ի տեղին՝ որ անուանէր գագաթան, և կոչէր եբրայեցերէն Գողգոթա»։ Յովհ. ԺԹ. 17։ Ելէք եկէք արքայութենէն սերովբէք եւ քերովբէք ընկերելու ձեր Տիրոջն՝ որ լեռ կ՚ելլէ խաչուելու։ Ո՛վ տեսիլ, Աստուած մարդկանց համար կը խաչուի։ Տես հոգի իմ, տես Փրկիչդ որ քեզի համար մեռնելու կ՚երթայ. տես թէ ի՞նչպէս գլուխը ծռած կ՚երթայ, դողդոջուն ծունկերով, բոլոր մարմինը պատըռտած՝ վէրքեր, ամէն կողմէն արիւնը կը վազէ, փշէ պսակը գլուխը, եւ ծանր փայտն ալ ուսը։ Ո՛վ Տէր, անանկ նեղութեամբ կը քալէ, որ կարծես թէ ամէն մէկ քայլին հոգին պիտի տայ։ Ո՛վ գառն Աստուծոյ, ըսէ, ո՞ւր կ՚երթաս։ Քեզի համար մեռնելու կ՚երթամ,

կը պատասխանէ։ Երբոր զիս մեռած տեսնես՝ յիշէ, կ'ըսէ, այն սէրս որ ունեցայ առ քեզ. յիշէ զիս, ու սիրէ զիս։ Ո՛վ Փրկիչ իմ, ինչպէս կրցայ այսչափ առեն ապրիլ քու սէրդ մոռցած։ Ո՛վ իմ մեղքերս, դուք դառնացուցիք իմ Տիրոջս սիրտը, այն սիրտն որ զիս այնչափ կը սիրէր։

Յիսուս իմ, կը զղջամ քեզի ըրած անիրաւութեանցս. չնորհակալ եմ ինձ ցուցած համբերութեանդ. և զքեզ կը սիրեմ, զքեզ կը սիրեմ բոլոր հոգւովս և զքեզ միայն սիրել կ'ուզեմ։ Բայց դու յիշեցուր միշտ առ իս ունեցած սէրդ, որպէս զի զքեզ սիրել չմոռնամ։

Գ. Յիսուս Գողգոթա կ'ելլէ, և զքեզ իւր եաւէն կը կանչէ։ Այո՛, Տէր իմ, դու անմեղութեամբդ առջևէս կ'երթաս խաչովդ. քալէ՛ ես զքեզ չեմ թո-

ղուր, կու գամ եաւէդ։ Տուր ինձ ինչ խաչ որ կ'ուզես, կը գրկեմ այն և ինչուան մահ անով կ'ուզեմ եաւէդ գալ։ Քեզի հետ կ'ուզեմ մեռնիլ, քեզի հետ՝ որ ինձ համար մեռար։ Կը հրամայես որ զքեզ սիրեմ. ես ալ զքեզ սիրելէն զատ ուրիշ բանի չեմ փափաքիր։ Յիսուս իմ, դու ես ու դու պիտի ըլլաս միշտ իմ մէկ հատիկ սիրելիս։ Օգնէ ինձ՝ որ քեզի հաւատարիմ մնամ։ Մարիամ յոյս իմ, միջնորդ եղիր առ Յիսուս ինծի համար։

ՇԱԲԱԹ

Խաչելութիւն.

Ա. Ահա Golgothայի վրայ աստուածային սիրոյն հանդէս կայ. ուր Աստուած կը մեռնի մեզի համար ցաւոց ծովու մէջ։ Չոն հասած չհասած, կը քաշեն կը հանեն բոնի Յիսուսի զգեստները՝ որ վիրաւոր մարմնոյն կպած էին, և գինքը խաչին վրայ կը նետեն։ Գառնն Աստուծոյ կը տալածուի այն մահուան անկողնին

վրայ, կ'երկնցնէ ձեռքերը դահճաց. և յաւիտենական Հօրը կը նուիրէ իւր կեանքը մարդկանց փրկութեան համար։ Ահա կը գամեն գինքը, և խաչին վրայ կը բարձրացնեն. տե՛ս, անձն իմ, քու Տէրդ երեք գամերով այն փայտէն կախուած, ուր հանգստեան տեղ մը չունի։ Երբեմն ձեռաց վրայ կը կոթընի, երբեմն ոտից, բայց ուր որ ալ կոթընի, ցաւերը կը սաստկանան։ Ո՛վ Յիսուս, ինչ դառն մահուամբ կը մեռնիս։ Կը տեսնեմ խաչին վրայ գրուած. Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից. բայց այս ծաղրական պատուէն զատ, ինչ ուրիշ թագաւորի նշան կայ վրադ։ Ո՜հ, այդ չարչարանաց գահոյքն, այդ գամուած ձեռքերդ, այդ խոցոտեալ գլուխդ, այդ արիւնլուայ մարմինդ, լաւ կ'իմացնեն թագաւոր ըլլալդ, բայց սիրոյ թագաւոր։ Կը մտածեմ ահա խոր-

տակուած սրտով այդ վիրաւոր ոտքերդ պագնելու։ Կը գրկեմ այդ խաչը, որուն վրայ սիրոյ զոհ եղած, մեռնիլ ուզեցիր ինձ համար։ Ո՛վ Յիսուս իմ, ինչ պիտի ըլլար ինձ արդեօք, թէ որ դու իմ տեղս աստուածային արդարութեան փոխարինած չըլլայիր։ Շնորհակալ եմ, Տէր, կը սիրեմ զքեզ։

Բ. Յիսուս խաչին վրայ չունի մէկը՝ որ գինքը մխիթարէ։ Բոլոր իր չորս կողմն առնողները՝ ոմն կը հայհոյէ գինքը, ոմն կը ծաղրէ, ոմն կ'ըսէ. «Եթէ որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ». մէկն ալ թէ «Զայլս ապրեցոյց, զանձն ոչ կարէ ապրեցուցանել»։ Աստուածածինն ալ իրաւ խաչին տակ իր հոգեվարք որդւոյն քովն էր սիրով, բայց այն ցաւագին Մօրը կերպարանքն, ոչ միայն զՅիսուս չէր մխիթարեր, այլ աւելի կը վշտացնէր, տեսնելով

իրեն համար անոր կրած ցաւերը։ Ուստի Փրկիչը Հօրն Աստուծոյ կը դառնայ։ Բայց Աստուած մարդկանց մեղքերով գինքը ծանրացած տեսնելով, որոնց փոխարէնը պիտի հատուցանէր. Չէ, որդեակ իմ, կ'ըսէ անոր, չեմ կրնար մխիթարել զքեզ. պէտք է՝ որ դեռ թողում զքեզ չարչարանացդ մէջ, թողում որ անմխիթար մեռնիս։ Այն ատենն էր՝ որ կանչեց Յիսուս. «Աստուած իմ, Աստուած իմ. ընդէ՞ր թողեր զիս»։ Մտ. ԻԷ. 46։

Ո՛վ Յիսուս իմ, ինչպէս ցաւագին կը տեսնեմ զքեզ ու տրտում տխուր։ Ո՛հ շատ իրաւունք ունիս մտածելուդ, որ այդչափ կը չարչարուիս մարդկանց սիրելի ըլլալու համար, ու եւքն այսչափ քիչ հոգի զքեզ պիտի սիրեն։ Ո՛վ գեղեցիկ հուր սիրոյ, դու որ Աստուծոյ մը կեանքը մաշեցիր, հապա կեր մաշէ բո-

լոր իմ երկրաւոր փափաքներս, և վառէ զիս միայն այն Տիրոջ սիրով, որ իմ սիրոյս համար անարգ խաչի մը վրայ ուզեց իր կեանքը տալ։ Բայց դու, Տէր, ինչպէս կրցար ինձ համար մեռնիլ. գիտնալով քեզի դէմ ընելու նախատինքներս։ Հապա, առ ինձմէ վրէժդ, տալով ինձ այնպիսի ցաւ մը, որ միշտ տրտում ըլլամ զքեզ դառնացնելուս համար։ Եկէք փշեր, գամեր և խաչ՝ որ այնչափ իմ Տէրս չարչարեցիք, եկէք իմ սիրտս ծակելու և յիշեցնելու միշտ Յիսուսի ինձ ցուցած սէրը։ Փրկէ զիս, Յիսուս. և զքեզ սիրելու չնորհք տալդ, զիս փրկելը ըլլայ. զքեզ սիրելը իմ փրկութիւնս է։

Գ. Փրկիչը՝ վերջի շունչերուն մօտեցած՝ նուաղ ձայնով մը կ'ըսէ. «Ամենայն ինչ կատարեալ է», իբրև թէ ըսէր. մարդի՛կ՝ ամէն բան լմնցաւ. ձեր փրկու-

թիւնը կատարուեցաւ. ուրեմն սիրեցէք զիս, վասն զի ձեզի սիրելի ըլլալու համար ալ բան չմնաց որ չընեմ։ Վեր նայէ, հոգի իմ, ահա Յիսուդ կը մեռնի, տես անոր մթնցած աչքերը, դեղնած դէմքը և մարմինը մահուան մօտեցած. տես ան հոգին որ մօտիկ է իր սուրբ մարմինէն բաժնուելու։ Երկինք կը խաւարի, երկիրս կը դողայ, գերեզմանները կը բացուին. նշաններ՝ թէ կը մեռնի աշխարհիս Արարիչը։ Ահա հուսկ ուրեմն, Յիսուս՝ յետ իր Հօրն յանձնելու իր սուրբ հոգին ու մեծ հառաչանք մը ցաւագին սրտէն արձակելու՝ գլուխը խոնարհեցնելով, ի նշան իր կենաց նուիրման, վերջապէս ցաւոց սաստկութենէն կ'աւանդէ հոգին, և իր սիրական Հօր ձեռքը կ'աւանդէ։

Մօտեցիր այն խաչին, ո՛վ անձն իմ, փարէ մեռեալ Տիրոջդ ոտ-

քին ու մոռաձէ թէ գքեզ սիրելուն համար մեռեր է։ Ո՛վ Յիսուս, ուր հասուց գքեզ՝ վրաս ունեցած սէրդ։ Եւ ո՞վ ինձմէ աւելի քու մահուանդ պատուէրը վայելեր է։ Հապա, ըմբռնել տուր ինձ՝ թէ ինչ ատիճանի եղած պիտի ըլլայ Աստուծոյ սէրն, որ ինձ համար մեռեր է, որպէս զի ասկէ յետոյ քեզմէ զատ ուրիշ բան չսիրեմ։ Ես գքեզ կը սիրեմ, ով ամենաբարիդ և քու ձեռքդ կը յանձնեմ հոգիս. քու մահուանդ արդեամբը՝ ցամքեցուր սրտէս ամէն երկրաւոր սէր, որ գքեզ միայն սիրեմ, վասն զի դու միայն արժանի ես բոլոր սիրոյս։ Մարիամ յոյս իմ, միջնորդ եղիր առ Յիսուս ինձ համար։

Կեցցէ սէր մեր Յիսուս

Կեցցէ յոյս մեր Մարիամ։



ԱՂՕԹՔ

ՊԱՏԱՐԱԳԻ

Տէր իմ և Աստուած, ահաւասիկ Անդանիդ առջև եկեր եմ, քահանային հետ մէկտեղ գթած Փրկչիս ու Յիսուս Որդւոյդ մարմնոյ և արեան պատարագը քեզ ընծայելու։ Այս պատարագով կը յուսամ պատուել գքեզ և անբաւ ողորմութեանդդ չնորհակալ ըլլալ, որով թէ ես և թէ բոլոր հաւատացեալք արժանի ըլլանք գթութեանդդ, մեղքերնուս թողութեան, պատիժներնուս քա-

տեթեան և չնորհացդ առատութեան։ Ասոր լուսաւորէ, Տէր, միտքս, սրբէ սիրտս՝ որպէս զի արժանապէս, մտօք և չերմեռանդն մտիկ ընեմ սուրբ պատարագը։ Օրհնէ զիս, ամենակալ Հայր և Որդի և սուրբ Հոգի, Ամէն։

Երբ քահանայն խորանին առջև կու գայ.

Ահա, հոգի իմ, Քրիստոս ի լեառն Գեթսեմանի, ուր իր դառն չարչարանքները կը սկսի։ Տես զինքը՝ առանձին տեղ մը քաշուած, և երեսը գետին խոնարհած՝ կ'ապաչէ իր երկնաւոր Հօր, որ օգնէ իրեն այն վշտալից առաջապնոց պահուն։ Նոյն առաջնէն մէկիկ մէկիկ տեսնելով իր մօտեցած մահուան չարչարանքները, կը տրտմէր, կը մաքմքէր, և արիւն կը քրտնէր... Ո՛վ Յիսուս, իմ մեղքերս են քու ցաւոց պատճառ, կը ճանչնամ յանցանքներս, որ աչքիս առջև են. կը ստկամ, կու լամ և փոխարէնը կ'ուզեմ հատուցանել քեզ։ Քու և բոլոր երկնից առջև կը խոստովանիմ զանոնք։ Գթա վրաս, Աստուած իմ ամենակարող, և թողութիւն տուր ինձ, արձակէ զիս փրկէ։ Քու Որդւոյդ արիւնն այս կը խնդրէ քեզմէ ցաւագին։

Ի չարիէ սրբոջեան.

Հոգի իմ, մտածելու է Յիսուս. տես զինքը զինուորներէն բռնուած ու անողորմաբար կապուած, կը չարչարուի ու կը համբերէ։ Տես թէ ինչպէս նախատինքներով ու չարչարանքնե-

րով։ Նայէ թէ հպարտութեանդ ու մեղքերուդ համար ինչ գին կու տայ, ինչ գնով քեզի չնորհք կը ստանայ. ըստ այնմ խոնարհ ու սուրբ եղիր։

Գիրք և Աշեւարան կարդալու առեւ.

Յիսուս Երուսաղէմ կը մտնէ. տես, անձն իմ, ոչ ծափահարութեամբ իբրև թագաւոր կ'ընդունին զինքը, այլ իբրև չարագործ մը ծաղրելով և անարգելով։ Ո՛րչափ դիւրափոփոխ են մարդուս զգացմունքներն. ուրախութենէ բարկութեան կ'անցնին, գովեստներէ պարսաւանաց, պատուէ անարգութեան։ Եւ դու, անձն իմ, կը վստահիս մարդկան... սորվէ անոնց դատաստանը բանի տեղ չդնել։...

Բայց անգամ մը ևս ուշադրութեամբ նայէ ու դիտէ զՅիսուս. չուաններով կապուած այն անօրէններէն դատաստանի կ'ելլէ, ուր կ'ամբաստանուի, կը ծաղրուի, կը ծեծուի և օգնութիւն մը չունի։ Ինչ գեղեցիկ դասեր կու տայ լռելու և թողութիւն տալու, համբերութեան և մահացուման։ Կը հասկնաս անձն իմ. ե՞րբ պիտի սորվիս զատնք, ով խեղճ ողորմելի. ե՞րբ կամաւոր մահացումամբք, կամ գոնէ ինչ վիշտ որ հանդիպի կեանդ մէջ, առաքինական համբերութեամբ տանելով պիտի պատժես սպստամբ, մեղաւոր մարմինդ. միշտ մեղանչել, ու ոչ երբեք ապաշխարել. միշտ զԱստուած դառնացնել, ու ոչ երբեք փոխարէնը հատուցանել։... Հայր յաւիտենական, ահա պատրաստ եմ ամէն վիշտ, ամէն ցաւ կրել մեղաց փոխարէն, ո-

բանք միշտ աչացս առջևն են։ Մի թողուր գիս Տէր Աստուած իմ, և մի՛ ի բացեայ առնիր յինէն։

Վերաբերութեանն միջև. ցՈՒԲԲ

ՈՒԲԲ.

Ահա Փրկիչս սեան կապուած, ու վայրենաբար կը ծեծուի և միշտ կը պատկառի։ Ո՞վ կրնայ տեսնել գինքը ու չլալ՝ սիրտն ելած։ Չրեշտակք երկնից, եկէք տեսէք փառաց Թագաւորը՝ թէ ինչպէս ուժով կապկպուած, բոլոր մարմինը վէրք ու գլուխը վիրաւոր։ Նէթ մոյլ արուած չէ ձեզի փրկել գինքը այն չարչարանքներէն, զոնէ եկէք ինծի հետ զառնապէս ողբալու։ Չայր յաւիտենական, ընդունէ այս անարատ նշխարքը անբաւ ողորմու-

թեանդ փոխարէն՝ որ ըրեր ես ինծի, անթիւ մեղաց քաւութիւն, որ քեզի պէտ գործեր եմ։ Տէր, գիս վրաս, հասիր կարօտութեանցս, և մանաւանդ պէս պարգեւէ ինձ վերջին շնորհքը։ Անարժան եմ, իրաւ է, այս խնդիրքս ընելու, ես որ այնչափ չար հաւանութեամբ Քեսուսի պատուական գլուխը փշով պսակեր եմ։ Բայց Քեսուսի արդիւնքները կ'ընծայեմ քեզի, Աստուած իմ, իր բացուած վէրքերը կ'ապաւինեն ինծի համար, ու գիւրութիւն և ողորմութիւն կը խնդրեն։

Աղերս աղերսելի ինչուան Աւեր կերեք.

Հապա, անձն իմ, գութով չարժէ Տիրոջդ վրայ. չե՞ս տեսներ քանի՜ սիրով ու փափաքով կը գրկէ Յիսուս խաչը, որուն այնչափ աւենէ ի վեր կը փափաքէր։ Ո՜րչափ ծանրացուցիր դու զայն քու մեղքերովդ. տես ու զարմացիր անոր սիրոյն և չնորհակալ եղիր։ Արուէ դուն ալ նոյն փափաքով խաչը գրկել։ Ծանրութիւնն զքեզ գետին չձգէ, ոչ մարդկանց դատաստաններն ու ոչ ամօթը. թէ որ Յիսուսի հետ համբերես, Յիսուսի հետ ալ կը թագաւորես։... Գնա՛ անձն իմ, գնա՛ Յիսուսի եւևէն՝ որ Գողգոթա կ'ելլէ։ Ո՛վ ահաւոր տեսարան, ո՛վ ցաւագին ճամբորդութիւն. Յիսուս դէպ ի մահ

կը տանին, գառի մը պէս մորթելու։ Ո՛վ Տէր, ի՞նչ ցաւալի վիճակ է իր վիճակը։ Տե՛ս զինքը բոլոր վիրաւորուած, փշէ պսակ մը գլուխը, ծանր խաչ մ'ալ կը նակը։ Տե՛ս թէ ինչպէս ծռած մարմնով կ'երթայ, դողդոջուն ծունկերով, արիւն քրտինք մըտած. և անանկ նեղութեամբ կը քալէ, որ կարծես թէ ամէն մէկ քայլին հոգին պիտի աւանդէ։ Եւ դու անձն իմ, չե՞ս օգներ իրեն։ Գնա՛ ձեռք տուր, վերցուր զինքն իր տառապանաց մէջէն, մխիթարէ իր վշտացեալ հոգին։ Ո՛վ Յիսուս իմ, ո՛վ Աստուած իմ տառապեալ, հիմա կ'իմանամ հետզհետէ մեղաց գէշութիւնը։ Կը զզուիմ անոնցմէ; և կու լամ դառնապէս։ Երանի թէ բնաւ զքեզ վշտացուցած չըլլայի։ Ո՛րչափ նախատանաց, ո՛րչափ անարգանաց, ո՛րչափ ցաւոց համբերեցիր ինձ համար, ո՛վ Յիսուս

իմ։ կ'ամչնամ առջի կեանքս մէջ պատիւ ու զուարճութիւն սիրելուս, որոնց պատճառաւ շատ անգամ չնորհքներդ ու սէրդ արհամարհեր եմ. մեծապէս կը ցաւիմ ու կ'առաջադրեմ քեզի նմանիլ, ով սիրեցեալդ իմ Յիսուս։

Առէք կերպարքեն մինչև

Հայր մեր.

Ահա բարձրացած փրկիչն աշխարհի։ Անձն իմ, տես քու Տէրդ. ահա խաչին վրայ է. անարգ փայտէ մը կախուած ու դառնակսկիծ չարչարանաց մէջ։ Մըտածէ իր նեղութիւնները։ Երբեմն ձեռաց վրայ կը կոթնի, երբեմն ոտից, բայց ո՛ւր ալ որ կոթնի՝ ցաւերը կը սաստկանան։ Վիրաւից գլուխն՝ երբեմն այս երբեմն այն դին կը դարձնէ.

դէպ ի դիմաց որ ձգէ, ձեռքերը ծանրութենէն աւելի կը պատրուտին, եթէ ուսերուն վրայ ձգէ, ուսերը փշերէն կը վիրաւորուին. թէ որ խաչին վրայ կոթնցնէ, փշերն աւելի խոր՝ գլխուն մէջ կը մտնեն։ Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս, այդ ինչ դառն մահ է՝ որ ինձ համար կը կրես։... Ո՛րչափ առատ է Աստուած ինծի. իսկ ես ո՛րչափ ագահ եմ իրեն, որ այնչափ թափած արեան տեղ և ոչ կաթիլ մ'արցունք կը թափեմ։ Ո՛վ խաչեալդ իմ Յիսուս, այդ նախատանաց ու ցաւոց գահոյիցդ վրայ, քեզ երկիր պագանեմ, և խոնարհութեամբ ու լալով կը մօտենամ ու կը պագնեմ իմ սիրոյս համար գամուած սուրբ ոտքերդ. կը գրկեմ այդ խաչը, որուն վրայ սիրոյ զոհ եղար, ու արիւնդ տուիր իմ տեղս Աստուծոյ արդարութեան։ «Չը-նազանդ լեալ մահու չափ, և

մահու խաչի»: Ո՛վ արդիւնաւոր հնազանդութիւն, որ մեր մեղաց թողութիւնը վաստկեցաւ: Ի՞նչ պիտի ըլլար ինծի, ով Տէր, թէ որ դու ինծի համար կեանքդ նըւիրած չըլլայիր: Շնորհակալ եմ, Տէր իմ, և այս գերագանց հնազանդութեանդ արդեամբքը՝ կ'աղաչեմ տուր ինձ չնորհք, որ ամէն բանի մէջ հնազանդիմ քու փոխանորդներուդ, և սրտանց թողութիւն տամ անոնց՝ որ ինձ չարիք մ'ըրած են: Կը յուսամ որ այլ գքեզ չվշտացնեմ, հապա ամենայն սրտով սիրեմ, ու միշտ պիտի սիրեմ:

Հայր մեր ուր ես հիմի և սուրբ արիւն.

Ահա վերջապէս կը մեռնի Յիսուս: Տես զինքը, անձն իմ, տես թէ ինչպէս կենացը վերջի չունչերը կու տայ, տես իր խաւարած աչքերը, դեղնած դէմքը, սիրտն՝ որ ծանր ծանր կը զարնէ, մարմինը մահու մօտեցած, և սուրբ հոգին՝ որ մօտ է վիրալից մարմնէն բաժնուելու: Ահա կը մթննայ երկինք, երկիրս կը դողայ, գերեզմանները կը բացուին. ա՜հ, ի՞նչ նշաններ են ասոնք. նշաններ են թէ աշխարհիս Արարիչը կը մեռնի: Ո՛վ անձըն իմ, մօտեցիր այն սուրբ փայտին ոտքը, որուն վրայ մեռեր է:... Մօտեցիր, ու մտածէ թէ քու սիրոյդ համար մեռեր է Յիսուս: Խնդրէ ինչ որ կ'ուզես մե-

ռեալ Փրկչէդ և ամէն բան կ'առնուս։ Տես զինքը այն խաչին վրայ ուր բոլոր իւր կերպարանքը սէր կը շնչէ և զինքը սիրելու կը հրաւիրէ. գլուխը խոնարհեցուցեր է՝ խաղաղութեան համբոյր տալու քեզ, ձեռուընները տարածեր՝ զքեզ գրկելու, սիրտը բացեր՝ զքեզ սիրելու։ Ո՛վ Փրկիչ աշխարհի, ո՛վ սիրեցեալդ իմ Յիսուս, ես գիս բոլորովին քեզ կը յանձնեմ ու քեզ կը նուիրեմ։ Ընդունէ գիս, Յիսուս Փրկիչ իմ, գորովագութ սրտիդ մէջ, և գթա վրաս, որ այսչափ ցուրտ եմ քու սիրոյդ։ Դու առողջացուր հոգւոյս վէրքերը, դու վառէ գիս քու սիրովդ, որպէս գի ասկէ ետքը ճնացած կենացս վայրկեանները զքեզ սիրելու և քու սուրբ սիրոյդ մէջ յառաջադիմելու գործածեմ։

Ե՛ս սուրբ արիւնիդ.

Ո՛վ Յիսուս Աստուած իմ, հոգւոյս միակ և գերագոյն բարին, ո՜ւր էր թէ ես ալ այն հոգիներուն երջանիկ վիճակն ունենայի, որ լի սրբութեամբ և հաւատքով ամէն օր Ջերմեռանդաբար կը մերձենան քեզ և կը ճաշակեն արքայութեան սեղանէդ։... Ի՜նչ շահ, ինչ մխիթարութիւն էր ինձ, թէ որ այս վայրկենիս կարենայի ես ալ սրբոց եռանդեամբը, ո՛վ Տէր, միանալ քեզ հետ, ընդունել զքեզ այս սիրոյ Հաղորդութեամբ, և քու կըդ ըլլալ յաւիտեան։... Անբաւ արդեանցդ համար, ազատէ գիս յանցանքներէս, որոնց վրայ սրտանց կը ցաւիմ, և արժանի ըրէ գիս քեզ։ Այն ատեն անարժան չեմ ըլլար քեզ, ո՛վ Տէր, անարժան չեմ ըլլար՝ որ իմ սիր-

տըս գաս. բայց արդ գոնէ խօսք մը միայն ըսէ, քաղցրագութ Յիսուս, և սուրբ կ'ըլլայ հոգիս: Քեզ կը յուսամ, քեզ կը հառաչեմ, զքեզ կը սիրեմ բոլոր անձովս: Յիսուս, փրկութիւն իմ և յոյս և սէր և կերակուր քաղցր:

Յետ ձաշակման

Սրբէ գիս ամենասուրբ մարմնովդ:... Զօրացուր գիս անգին արեամբդ:... Զարչարանացդ արդեամբը փրկէ գիս: Ո՛վ Յիսուս, հոգւոյս սիրական հիւրը ... ինչ հատուցում քեզի այսչափ բարեացդ փոխարէն, որ ըրիր ինձ: Պիտի սիրեմ, պիտի սիրեմ զքեզ, Տէր իմ, զօրութիւն իմ, և հրամաններդ պիտի պահեմ: Պիտի սիրեմ զքեզ, Յիսուս, ուրախութիւն իմ, առաքինու-

թիւն և երջանկութիւն: Հրեշտակաց և սերովբէից հետ քեզ երկիր պագանեմ, զքեզ օրհնեմ, չնորհակալ կ'ըլլամ, և գիս բոլոր քեզ կը նուիրեմ, քեզ կը զոհեմ. և ինձ հետ բոլոր ախտերս, և այն մանաւանդ որ տիրացած է վըրաս... ողորմութեամբդ քաւէ մաքրէ զանոնք: Հաղորդ ըրէ գիս արդեանցդ, առաքինութեանցդ, մանաւանդ անոր որ աւելի պէտք ունիմ... վերցուր վրայէս աշխարհային զուարճութիւններն ու երկրաւոր զբաղմունքները: Հաւատքս և յոյսս վառէ յաւիտենական բարեաց հասնելու, և սէրս օրէ օր բորբոքէ: Սիրտս և խիղճս անարատ ըլլան պատուիրանացդ պահպանութեանն ու իմ պարտուցս կատարմանը, որպէս զի ոչ այսօր և ոչ ուրիշ օր մեղաց մէջ չիյնամ, այլ սերտ միացեալ ըլլամ ամենասուրբ կամացդ ու քեզի հետ, Յիսուս իմ գթած:

Ֆեզմով կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ։ Ո՛հ, ո՞ւր էր թէ հիմա ալ հաղորդ ըլլայի ամենասուրբ խորհըրդոցդ, համբուրէի ջերմեռանդութեամբ սուրբ մարմինդ, ըզքեզ, և սուրբ օրհնութեանդ արժանի ըլլայի, զոր կը պաղատիմ։

Որ օրհնես զայնոսիկ.

Հայր յաւիտենական, ընդունէ այս սուրբ պատարագը՝ նշան իմ ծառայութեանս և հպատակութեանս քու երկրպագելի աստուածութեանդ, չնորհակալութիւն՝ անբաւ ողորմութեանցդ, և փոխարէն՝ մեղացս։ Օգտէ այս սուրբ պատարագը բոլոր հաւատացելոց և քաւարանի խեղճ հոգւոց։ Ո՛վ Տէր, աճեցուր իմ մէջս չնորհքներդ պիտոյից համար, զիս մի՛ թողուր ձեռքէ։ Կը խոստանամ երկնից և երկրի առջև՝

որ պատրաստ եմ աւելի կեանքս տալ՝ քան թէ զքեզ վշտացնել. միայն դու միշտ հետս եղիր ու առաչնորդէ ուղիղ այն ճամբան՝ որ դէպ ի քեզ կը հանէ, Աստուած իմ, օգնէ ինձ։



Ա Ղ Օ Թ Ք

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Ւ

Հ Ա Ղ Օ Ր Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

Պատրաստուբիւն խոստովա-

նութեան.

Խոստովանանքէն առաջ զքեզ սըր-
տանց Աստուծոյ յանձնէ՝ որպէս զի
լոյս տայ մեղքերդ ճանչնալու և ա-
նոնց ծանրութիւնն ըմբռնելու, և մի-
անգամայն ցաւ մը և ատելութիւն
անոնց դէմ և հաստատուն առաջա-
դրութիւն՝ ա՛լ ոչ եւս մեղանչելու. միչ-
նորդ բռնելով սուրբ Աստուածածինը,
Պահապան հրեշտակդ և Պաշտպան
սուրբերդ։

Հայր մեր. Ողջոյն քեզ. Փառք Հօր։
Քննութիւն ընելու համար՝ նայէ Աս-

տուծոյ և Եկեղեցւոյ պատուիրաններն՝
որ ետևը դրուած են քրիստոնէակա-
նին մէջ, մտածէ վիճակիդ պարտքե-
րը. ամբաստանէ զքեզ ինչ որ մեղան-
չեր ես խորհրդով, բանիւ, գործով և
անհոգութեամբ. ետքն ըսէ հետևեալը։

Նախ քան զխոստովանուրիւն.

Ո՛վ Աստուած իմ, անհուն բարի, ահա զքեզ մատնողն ու վշտացնողը ոտքդ ինկած՝ խոնարհաբար թողութիւն կ՚ուզէ։ Մի վոնտեր զիս, Տէր. գիտեմ թէ խոնարհ սիրտ մը չես արհամարհեր. «Զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ». Սղ. 50։ Շնորհակալ եմ որ ուշացուցիր մահս ինչուան այսօր, ու չմեռուցիր զիս մեղացս մէջ ու դժոխք չղրկեցիր, ինչպէս որ արժանի էի։ Կը յուսամ, Աստուած իմ, որ ինչպէս

դարձիս սպասեցիր, այսպէս Յիսուսի արդեամբք թողութիւն կուտաս այս խոստովանութեամբ բոլոր ըրած մեղացս՝ որոնցմով արժանի եղայ դժոխոց ու կորսընցուցի արքայութիւնը, որուն վրայ կը ցաւիմ ու կը զղջամ։ Բայց դժոխոց արժանի ըլլալը, այնչափ դառն չէ ինձ՝ որչափ զքեզ վշտացնելս, անբաւ բարիդ։ Ես զքեզ կը սիրեմ, ով գերագոյն բարի, և որովհետեւ զքեզ կը սիրեմ՝ կը ցաւիմ քեզի դէմ գործած բոլոր նախատանացս վրայ։ Ես քեզի դէմ դարձայ, զքեզ նախատեցի, բարեկամութիւնդ անարգեցի, և ուզելովս զքեզ կորսնցուցի։ Յիսուսի սիրոյն համար թողութիւն տուր մեղացս, որոնց վրայ բոլոր սրտանց կը զղջամ, կը գարշիմ ամենայնիմէ ու կը զզուիմ, ոչ միայն մահուչափներուն վրայ, այլ և ներելիներուն, որովհետև անոնք

ալ անախորժ են քեզ։ Կ'աս֊
ջադրեմ ասկէ ետքը չնորհքով
այլ ևս կամաւորապէս զքեզ
չվշտացնել։ Այո՛, Աստուած իմ,
աւելի յանձն կ'առնում մեռնիլ
քան թէ մեղանչել։

Թէ որ այնպիսի մեղք մը խոստո֊
վաններ ես՝ որուն մէջ աւելի կ'իյնաս,
պէտք է մասնաւոր առաջադրութիւն
դնել այլ ևս ան մեղքին մէջ չ'իյնա֊
լու՝ առիթներէ զգուշանալով ու խոս֊
տովանահօր սրբեցուցած միջոցները
գործադրելով. նաև քու կողմանէդ թէ
որ ուրիշ միջոց կրնաս գտնել չմե֊
ղանչելու՝ նայէ որ զանց չընես,

Խոստովանութեան ետքը.

Սիրեցեալդ իմ Յիսուս, ո՛ր֊
չափ պարտական եմ քեզ։ Քու
արեանդ արդեամբք յուսամ՝ որ
բոլոր մեղաց թողութիւն առի։
Մեծապէս չնորհակալ եմ քեզ.
յուսամ թէ օր մ'ալ երկինք կու

գամ միշտ և յաւիտեան ինձ ը֊
րած ողորմութիւններդ օրհնելու։
Աստուած իմ, թէ որ ինչուան
հիմա շատ անգամ զքեզ կորու֊
սի, ա՛լ ասկէ ետքը կորսնցնել
չեմ ուզեր։ Այս օրուընէս իրա֊
ցընէ կ'ուզեմ կեանքս փոխել։
Արդարև բոլոր սիրոյս արժանի
ես. ես ալ բոլոր սրտովս զքեզ
կ'ուզեմ սիրել. ալ ասկէ ետքը
չեմ ուզեր զիս բաժնուած տեսնել
քեզմէ։ Շատ անգամ այս խօսք
տուեր եմ քեզ, հիմա նորէն կը
խոստանամ՝ որ ասկէ վերջ աւելի
կ'ուզեմ մեռնիլ՝ քան թէ զքեզ
վշտացնել։ Կը խոստանամ նաև
մեղաց առիթներէն ալ փախչիլ,
որ մեղաց մէջ չիյնամ։ Բայց ո՛վ
Յիսուս, գիտես դու իմ տկարու֊
թիւնս, տուր ինձ չնորհք, որ ին֊
չուան մահս հաւատարիմ ծնամ
քեզ։ Ամենասուրբ կոյս Մարիամ,
օգնէ ինձ, բոլոր յոյս քու վը֊
րադ է։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

ՀԱՂՈՐԴՈՒԹԵՆԷՆ ԱՌԱՋ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ

Ո՛վ ամենասիրելի Փրկիչ իմ, դու որպէս զի այս ամենասուրբ Հաղորդութեամբ գաս միանաս ինձի հետ՝ քանի քանի դժուարին և խիստ լեռներէ պէտք եղաւ որ անցնիս։ Պէտք եղաւ՝ որ աստուածութենէդ իջնաս մարդ ըլլաս, անբաւութենէդ՝ ծառայ, Հօր Աստուծոյ ծոցէն՝ կուսի մը

Պատրաստութեան հաղորդութեան.

Մեղքերէ ազատելու և Աստուծոյ սիրոյն մէջ առաջ երթալու համար Հաղորդութենէ յարմարագոյն միջոց չկայ։ Բայց ինչո՞ւ անթիւ մարդիկ այսչափ հաղորդուելէն ետքը նոյն պատկառելի մէջ կը մնան, վասն զի ինչ պատրաստութիւն որ պէտք է՝ չեն տեսներ. լաւ պատրաստուելու համար երկու բան պէտք է. առաջինն է՝ հանել սրտէն այն փափաքները՝ որ Աստուծոյ սիրոյն դէմ են. երկրորդն է՝ մեծ փափաք ունենալ զԱստուած սիրելու։ Ինչպէս սուրբ Փրանկիսկոս Սալեզացին կ՚ըսէ. թէ Սրբութիւն առնելուն առաջին վախճանը պիտի ըլլայ Աստուծոյ սիրոյն մէջ զարգանալ։ Միայն զինքը սիրելնուս պէտք է ընդունինք զինքը սրտերնիս, ինչպէս ինքն ալ միայն զմեզ սիրելուն՝ զինքը մեզի կը պարգևէ։

ծոց, երկնքէն՝ ախոռի մը մէջ, փառաց աթոռէդ՝ նախատանաց խաչի վրայ. և այսօր երկնային աթոռէդ պիտի գաս իմ սիրտս բնակիս: Ո՞ւր հասաւ քու ողորմութիւնդ:

Ահա, անձն իմ, քու սիրելի Յիսուսդ նոյն սիրով վառուած, որով խաչին վրայ սիրեց զքեզ՝ քեզի համար մեռնելով, հիմա ալ սրբութեան մէջ ծածկուած, ի՞նչ կ'ընէ, սիրելւոյ մը պէս, փոխարէն կ'ուզէ սիրուիլ. սրբութեան նշխարքին մէջէն կը դիտէ զքեզ, որ այսօր իւր աստուածային մարմինը պիտի ճաշակես, կը դիտէ թէ ինչ կը մտածես, ինչ կը սիրես, ինչ բանի կը փափաքիս, ինչ կը փնտռես, և ինչ ընծաներ կը տանիս իրեն:

Հայպա, անձն իմ, պատրաստուէ ընդունիլ զՅիսուս. վառէ հաւատքդ ու ըսէ. Ուրեմն, Փըր-

կիչ իմ սիրեցեալ, քանի մը վայրկենէն իմ սիրտս պիտի գաս: Ո՛վ Աստուած անյայտ և ծածկեալ անթիւ մարդիկներէ, ես կը հաւատամ քեզ, զքեզ ներկայ կը դաւանիմ այս ամենակեցոյց Սրբութեան մէջ. իբրև իմ Տէրս և Փրկիչս՝ խորին խոնարհութեամբ քեզ երկիր պագանեմ. և այս ճշմարտութեանս վրայ կեանքս ալ կու տամ: Ե՛կ ուրեմն հաստատացուր զիս չնորհքներովդ և բոլորովին ընդ քեզ միացուր: Ի՞նչ վստահութիւն պէտք է ունենամ առ քեզ, ասանկ սիրով սիրտս գալուդ:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՑ

Անձն իմ, բաց սիրտդ. Յիսուս ամէն բարիք կրնայ ընել քեզ՝ որ զքեզ շատ կը սիրէ. ամէն բան կրնաս յուսալ այս տի-

ըոջմէդ, որ սէրէ չարժեալ ու բոլորովին սէր կտրած աու քեզ կու գայ։ Այո՛, սիրելիդ իմ Յիսուս, յոյս իմ, քու գթութեանդ կ'ապաւինիմ, կը յուսամ որ այս առաւօտ կը վառես իմ աղքատ սիրտս քու սուրբ սիրոյդ ջերմ բոցով, կու տաս ինձ ճշմարիտ փափաք՝ քեզ հաճոյ ըլլալու, որպէս զի այս օրէն սկսեալ ուրիշ բան չուզեմ, բայց եթէ ինչ որ դու կ'ուզես։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՑ

Ո՛վ Աստուած, Աստուած իմ, միակ և ճշմարիտ սիրող հոգւոյս, միայն ճշմարիտ բարութիւն, ալ ինչ կրնայիր ընել ինձ սիրելի ըլլալու համար։ Ո՛վ Տէր իմ, ինծի համար մեռնիլը միայն բաւական չհամարելով, սուրբ Հաղորդութեան խորհուրդն ալ հաս-

տատեցիր՝ որպէս զի ինծի պէս անմաքուր և ապերախտ արարածոյ մը տաս բոլորովին զքեզ և մէկ սիրտ ըլլաս ինծի հետ։ Ասկէ զատ, կը հրաւիրես զիս զքեզ ընդունելու, և կը փափաքիս ալ որ ընդունիմ։ Ո՛վ սէր անհուն. սէր անըմբռնելի, սէր յաւիտենական։ Աստուած բոլորովին ինքզինքն ինձ կ'ուզէ տալ։

Անձն իմ, որ կը հաւատաս ասոր, ի՞նչ կ'ընես, ի՞նչ կ'ըսես։ Ո՛վ Տէր անհուն սիրելի, դու միայն արժանի ես ամենայն սիրոյ. բոլոր սրտովս զքեզ կը սիրեմ, ամէն բանէ վեր զքեզ կը սիրեմ, ինծմէ ալ՝ կեանքէս ալ աւելի զքեզ կը սիրեմ։ Երանի՛ թէ տեսնէի թէ ամենքն ալ զքեզ կը սիրեն։ Երանի՛ թէ ամէն սրտերու կարենայի սիրցնել տալ զքեզ, որչափ որ արժանի ես։ Ես զքեզ կը սիրեմ, ո՛վ Աստուած իմ սիրեցեալ. և զքեզ սիրելու

համար՝ իմ խեղճ սիրտս սերով-
բէից և քու սրտիդ հետ միա-
ցուցած, ո՛վ Յիսուս, անով խո-
նարհաբար քեզ երկիր պագա-
նեմ։ Ձքեզ կը սիրեմ, ո՛վ ան-
հուն բարի, այն սիրով՝ որով
բոլոր երկնից հրեշտակք զքեզ
կը սիրեն, որով կը սիրէ զքեզ
քաղցր մայրդ Մարիամ. այն սի-
րով՝ որով դու ինքն Յիսուս զք-
քեզ կը սիրես. և զքեզ միայն
կը սիրեմ, որովհետև արժանի
ես։ Ելէք սրտէս ամենայն ե-
կրաւոր իղձք և ցանկութիւնք,
որ Աստուծոյ համար չէք։ Սըր-
բուհի Մարիամ, մայր սիրոյ,
դու օգնէ ինծի՝ որ սիրեմ զԱս-
տուած՝ դու որ այնչափ կը սի-
րես և կը փափաքիս ուրիշներէն
ալ սիրուած տեսնել։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Ուրեմն, անձն իմ, կ'երթաս
ահա Յիսուսի ամենասուրբ մար-
մինը ճաշակելու։ Արժանի՞ ես։
Տէր իմ, ո՞վ եմ ես, և դու ո՞վ։
Ես լաւ կը ճանչնամ ու կը դա-
ւանիմ ով ըլլալդ, որ ինքզինքդ
ինձ կը պարգևես։ Դու ալ լաւ
գիտես զիս, որ զքեզ ընդունե-
լու կու գամ։

Ի՞նչպէս կարելի է ուրեմն, ո՛վ
Փրկիչ իմ, որ դու անհուն մա-
քրութիւն ըլլալովդ, փափաքիս
իմ սիրտս գալ բնակիլ, որ չատ
անգամ քու թշնամիդ ընդուներ,
և բիւրաւոր մեղքերով աղտեղեր
է։ Կը ճանչնամ, Տէր, քու ան-
բաւ մեծութիւնդ և իմ խեղճու-
թիւնս. ու կ'ամչնամ իսկ առջեւդ
երևելու։ Պատկառելէս մէկդի եր-
թալս կու գայ քեզմէ. բայց թէ

որ քեզմէ հեռանամ, կեանք իմ, ո՛ւր երթամ, որո՛ւ դիմեմ, ի՞նչ կ՚ըլլայ ինձ: Ո՛չ, ո՛չ երբէք հեռանալ կ՚ուզեմ քեզմէ, մանաւանդ թէ միշտ աւելի մօտենալ: Դու գոհ կ՚ըլլաս՝ որ քեզ ճաշակեմ, մանաւանդ թէ դու զիս կը հրաւիրես: Կու գամ ուրեմն, փրկիչ իմ սիրեցեալ, կու գամ այս առաւօտ զքեզ ընդունելու խոնարհեալ, ցաւած և տագնապեալ՝ ըրած մեղացս համար, բայց լի յուսով՝ վրաս ունեցած գթոյդ և սիրոյդ համար:

ՆԵՐՈՐՁՈՒԹԻԻՆ ՋՂՋՄԱՆ

Ո՛րչափ կը ցաւիմ, ո՛վ Տէր հոգւոյ իմոյ, որ անցեալ կեանցս մէջ զքեզ չեմ սիրած. և փոխանակ զքեզ սիրելու, իմ փափաքներս լեցնելու համար՝ քու անբաւ ողորմութեանդ դէմ անի-

րաւեր եմ, չատ անգամ զքեզ դառնացուցեր եմ, քեզմէ երես դարձուցեր, քու չնորհդ և բարեկամութիւնդ արհամարհեր եմ. վերջապէս, ո՛վ Տէր, ես խեղճ ողորմելիս զքեզ ոչնչութեան հետ փոխեր եմ: Կը ցաւիմ, կը զղջամ, Տէր, յամենայն սրտէ: Ամէն գէշութենէ աւելի քեզի դէմ ըրած անիրաւութիւններս կ՚ատեմ, թէ՛ ծանր և թէ թեթեւ. որովհետև անոնցմով զքեզ ամենաբարիդ վշտացուցեր եմ: Կը յուսամ որ արդէն իսկ թողութիւն տուած ես ինձ. բայց թէ որ դեռ չես ներած, հիմա ներէ, ո՛վ Յիսուս, քանի որ դեռ զքեզ չեմ ընդունած, անգին արեամբդ լուա հոգիս, ուր որ քիչ ատենէն գալ բնակիլ կ՚ուզես:

ԻՂՋ

Հայպա, անձն իմ, հասեր է այն երջանիկ վայրկեանն, որ Յիսուս գայ ու աղքատ սրտիդ մէջ բնակի։ Ահա երկնից թագաւորը, ահա փրկիչդ ու Աստուածդ առ քեզ կու գայ։ Պատրաստուէ սիրով զինքն ընդունելու. փափաքով մը զրուցէ իրեն. Ե՛կ, Յիսուս իմ, եկ ի հոգի իմ որ քեզ կը փափաքի։ Դեռ դու զքեզ ինծի չպարգևած, ես կ'ուզեմ ու կ'ընծայեմ քեզ իմ ողորմելի սիրտս, ընդունէ ու փութա եկուր ժառանգէ զայն։

Եկուր շուտով, Աստուած իմ, ալ մի ուշանար, միակ և անվախճան արքայութիւն իմ և ամենայն ինչ. այն սիրով զքեզ ընդունիլ կը փափաքիմ, որով ընդուներ են զքեզ ամենաստուրբ հոգիներն ու զքեզ շատ սիրող-

ները, որով ընդուներ է զքեզ սուրբ Աստուածածին. իրենց հետ ես ալ հաղորդակից կ'ըլլամ։

Ամենասուրբ Կոյս և մայր իմ Մարիամ, ահա կը մերձենամ քու որդիդ ընդունելու. քու սիրտդ և սէրդ ունենալ կ'ուզէի, որով դու կը հաղորդուէիր. տուր ինձ այս առաւօտ Յիսուսդ, ինչպէս որ հովիւներուն և սուրբ մոգերուն տուիր։ Քու ամենամաքուր ձեռքէդ կը սպասեմ զինքն ընդունիլ։ Ըսէ իրեն՝ որ ես քու ծառայդ եմ և քեզի Ջերմեռանդ, որով աւելի քաղցր աչքով նայի վրաս և աւելի սիրով ընդգրկէ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Հաղորդութեան վերջը.

Հաղորդութենէն յետոյ, շնորհաց գանձեր վաստկելու անգին առեներն է, որովհետև ան առեներուան եղած աղօթք-

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՀԱՂՈՐԴՈՒԵԼԷՆ ՎԵՐՋԸ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ

Ահա Աստուածս ինծի այցելութեան եկաւ, ահա փրկիչս եկաւ սիրտս բնակեցաւ, ահա ներքս ինձ հետ է Յիսուս։ Եկեր է ինծի հետ միանալու, անանկ որ Յիսուս իմս է և ես իրենը։

Ո՛վ անհուն բարի, անհուն ողորմութիւն, անհուն սէր։ Աստուած եկեր է ինձ հետ միանա-

նելը, հոգին Յիսուսի հետ միացեալ ըլլալով, ուրիշ առենի եղածներէն աւելի արժանաւորութիւն և գօրութիւն ունին։ Ան առեն Աստուած հոգւոյն մէջ, իբրև ողորմութեան գահոյքին վրայ բազմեալ է և կ'ըսէ. Որդեակ, ուզէ ինծմէ ի՛նչ որ կ'ուզես. անոր համար ես քու սիրագ եկեր եմ, որ քեզի բարիք ընեմ, Ո՜հ, ի՞նչ առանձնաշնորհութիւններ չեն ընդունիր անոնք՝ որ հաղորդուելէն ետև երկայն բարակ Յիսուսի հետ կը խօսակցին։ Հայրն Աւիլա հաղորդուելէն վերջը միշտ երկու ժամ աղօթքով կ'անցնէր։ Ս. Լուիճի Կոնձակա երեք օր շնորհակալութեամբ կ'անցնէր, Եւևի ներգործութիւններն ընէ ուրեմն հաղորդուողը, և ջանայ բոլոր օրը իզձով ու աղօթքով միացեալ ըլլալ Յիսուսի հետ, զոր առաւօտն ընդունեցաւ։

լու և ինքզինքը բոլորովին ինձ տալու։ Անձն իմ, հիմայ որ ա-
սանկ միացեր ես Յիսուսի հետ,
ի՞նչ կ'ընես, բան մը չե՞ս ըսեր։
Չե՞ս խօսիր Աստուծոյդ հետ, որ
քեզի հետ է։ Չա՛պա նորոգէ հա-
ւատքդ, մտածէ որ հրեշտակք
չորս կողմդ առած երկրպագու-
թիւն կ'ընեն իրենց Աստուծոյն,
որ քու սիրտդ է։ Մէկդի ըրէ
ամէն մտածմունք, և բոլոր իղ-
ձովդ ու սրտով Աստուծոյ հետ
միացեալ, ըսէ իրենց։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ-ԹԵԱՆ

Ո՛վ Յիսուս, սէր իմ, անհուն բարիս և ամենայն ինչ, ողջամբ եկար իմ աղքատ սիրտս։ Ո՛վ Տէր իմ, ինչուան ո՞ւր հասար։ Իմ սիրտս եկար՝ որ ծնած մսէդ

աւելի գէշ է, կիրքերով, անձնա-
սիրութեամբ և անկարգ ախոր-
ժակներով լեցուն։ Ի՞նչպէս ե-
կար ուրեմն յիս բնակելու։ Կ'ու-
զեմ սրբոյն Պետրոսի հետ ըսել.
Ի բաց գնա յինէն, զի այր մե-
ղաւոր եմ ես։ Հեռացիր ինձմէ,
Տէր, որ անարժան եմ զԱստուած
զանհուն բարիդ իմ մէջս ընդու-
նելու։ Այն մաքուր սրտերուն մէջ
գնա բնակէ, որ ամենայն սրտանց
քեզ կը ծառայեն։ Բայց չէ՛,
Փրկիչ իմ, ի՞նչ կ'ըսեմ, մի՛ հե-
ռանար ինձմէ, վասն զի թէ որ
հեռանալու ըլլաս՝ ես կորսուած
եմ. կը գրկեմ զքեզ՝ կեանք իմ,
քեզ կը պլլուիմ։ Ի՞նչ խեղճու-
թիւն ու ապերախտութիւն էր
ըրածս, որ քեզմէ բաժնուեցայ,
զքեզ վռնտեցի արարածները սի-
րելու համար։ Ա՛լ չեմ ուզեր քեզ-
մէ բաժնուիլ, գանձդ իմ. կ'ու-
զեմ քեզի հետ միացեալ միշտ
ապրիլ ու մեռնիլ։

Սուրբ Աստուածածին, սերովբէք և ամենայն հոգիք՝ որ սուրբ սիրով զԱստուած կը սիրէք, տպաւորեցէք իմ մէջս ձեր իղձերը, որպէս զի ես ալ միշտ հաշտ ըլլամ սիրելի Տիրոջս հետ։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԳՈՀՈՒԹԵԱՆ

Ամենաբարի Տէր իմ, չնորհակալ եմ այս առաւօտ ինձ ըրած չնորհքիդ որ եկար ու սիրոս բնակեցար. բայց այս ըրած մեծ չնորհքիդ, համար, քեզ արժանի չնորհակալութիւն կ'ուզէի մատուցանել. այլ, ո՛վ Տէր, ի՞նչ արժանի չնորհակալութիւն կըրնամ մատուցանել խեղճ ոդոմելիս։

Կ'ըսէ Հայրն Սէնեէրի. Հաղորդուողին պատշաճագոյն իղձն է վախը՝ երբ կը մտածէ ու կ'ըսէ. Աստուած հետս է. Աստուած քովս կ'ըսէր Դաւիթ. Ջինչ տաց տիտուր Տեառն ընդ ամենայնի զոր և ետ ինձ։ Բայց ես ի՞նչ տամ քեզ, Յիսուս իմ, որ յետ այնչափ բարիքներդ ինձ պարգևելու, այս առաւօտ ինքզինքդ ալ պարգևեցիր։ Օրհնէ ապա, անձն իմ, ու գոհացիր որչափ որ կրնաս Աստուծմէդ։ .Եւ դու մայր իմ Մարիամ, պաշտպան սուրբերս, Հրեշտակդ իմ պահապան, ամենայն հոգիք՝ որ Աստուծոյ սիրուն էք բոլբոքեալ, եկէք, մտիկ ըրէք ինչ որ ըրաւ ինձ Աստուածս։

Եկէք օրհնեցէք ու գոհացէք Աստուծմէս՝ ինձ ըրած ամենամեծ չնորհաց համար, և սքանչացած փառաւորեցէք զինքը։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԸՆԾԱՅՄԱՆ

Սիրելիս իմ ինձ և ես նման.

Եթէ թագաւոր մը խեղճ հովուի մը հիւղն երթայ անոր այցելութեան, ի՞նչ կրնայ հովիւն ընծայել անոր բայց եթէ բոլոր բովանդակ իր հօտը: Ապա, ով երկնաւոր թագաւորդ իմ Յիսուս, որովհետեւ հոգւոյս խեղճ տանն այցելութեան եկար, քեզ կ'ընծայեմ ու կը պարգեւեմ հոգւոյս տունն ու զիս բովանդակ, հանդերձ ազատութեամբս ու կամօքս: Սիրելին իմ ինձ և ես նման: Դու զքեզ բովանդակ ինձ տուիր, ես ալ զիս բովանդակ քեզ կու տամ: Ջեմ ուզեր, Փրկիչ իմ, ա՛լ ես իմս ըլլալ. այս օրէս դու կըդ կ'ուզեմ ըլլալ և բովանդակ քուկդ: Եւ ի՞նչ աւելի ախորժ

կրնայ ըլլալ, կ'ըսէր Ս. Պետրոս Ալկանդարացին, քան ախորժելի ըլլալ քեզ՝ Աստուած իմ ամենասիրելի, փափաքելի և ամենաբարի: Բոլոր կարողութիւններս քեզ կը պարգեւեմ, և կ'ուզեմ որ ամենքն ալ քուկդ ըլլան: Կ'ուզեմ որ յիշողութիւնս ուրիշ բանի չծառայէ, բայց եթէ քու բարերարութիւններդ և սէրդ յիշելու: Միտքս ուրիշ բանի չծառայէ, բայց զքեզ միայն մտածելու՝ որ միշտ իմ բարիքս կը մտածես: Եւ կամքս զքեզ սիրելու ծառայէ միայն, Աստուած իմ, ամենայն ինչ իմ, և այն ուզէ միայն՝ զոր դու կ'ուզես:

Քեզ կը նուիրեմ ուրեմն և քեզ կը պատարագեմ, ով ամենաքաղցր Փրկիչ իմ, այս առաւօտ ինչ որ ունիմ, և ինչ որ եմ, զգացմունքներս, մտածութիւններս, իղձերս, փափաքներս, ախորժներս, հակամիտութիւններս, ազատու-

թիւնս, վերջապէս քու ձեռքդ կ'աւանդեմ բոլոր մարմինս ու հոգիս։

Ընդունէ, ո՛վ անհուն Տէր, այն զոհն՝ որ քեզի կը մատուցանէ աշխարհիս վրայ եղած ամենէն ապերախտ մեղաւորը, բայց հիմա բովանդակ զինքը քեզ կ'ընծայէ ու կը նուիրէ։ Ի՛նչ որ կ'ուզես ըրէ ինձ, ո՛վ Տէր, ու կարգաւորէ վրաս ինչպէս որ կ'ուզես։

Եկ, ո՛վ հուր ծախիչ, ո՛վ սէր երկնային, և այրէ իմ մէջս ինչ որ իմս է և քու ամենամաքուր աչքերուդ անախորժ է, որպէս զի այս օրէս սկսեալ ես միշտ քուկդը ըլլամ, և ապրիմ միայն կատարելու համար, ոչ միայն պատուէրներդ, այլ և փափաքներդ և ինչ որ քեզ ախորժելի է. Ամէն։

Ո՛վ ամենասբբուհի Մարիամ, ընծայէ ձեռքերովդ ամենասուրբ երրորդութեան այս իմ նուէրս, և ընդունելի ըրէ, և մինչև մա-

հըս հաւատարիմ ճնալու չնորհքը պարգևէ ինձ. ամէն։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈՒԱԾՈՑ

Անձն իմ, արդ կրնաս ընդունիլ ամենայն չնորհք՝ զոր կը խնդրես։ Չե՞ս տեսներ երկնաւոր Հայրդ, որ քաղցրահայեաց քեզ կը նայի, քու առ նա սէրդ տեսնելով։ Հեռացուր բոլոր ուրիշ մտածութիւնքդ, վառէ՛ հաւատքդ, ընդարձակէ սիրտդ, և խնդրէ՛ ինչ որ կ'ուզես։

Չե՞ս լսեր Յիսուսիդ՝ որ կ'ըսէ. Ձի՞նչ կամիս զի արարից քեզ։ Հոգի՛, ըսէ՝ ի՞նչ կ'ուզես ինձմէ։ Զքեզ հարստացնելու և գոհ ընելու համար միայն եկեր եմ. խնդրէ համարձակ, և ինչ որ կ'ուզես կ'ընդունիս։

Ո՛վ ամենաքաղցր Փրկիչ իմ, որովհետև եկար ինձ՝ չնորհք

պարգևելու համար, և կը փա-
փաքիս՝ որ ես քեզմէ խնդրեմ.
ես երկրաւոր բարիք չեմ փնտռեր,
և ոչ գուարճութիւն. տո՛ւր ինձ,
կ՚աղաչեմ, մեծ ցաւ մը՝ զքեզ
այնչափ վշտացնելուս: Մեծ լոյս
մը պարգևէ, որ ճանչցնէ ինձ
աշխարհիս ունայնութիւնը, և
քու սիրելի ըլլալուդ արժանա-
ւորութիւնը: Փոխէ սիրտս, և
զատէ ամէն երկրաւոր իղձերէ,
և քու կամացդ բոլորովին նման
սիրտ մը տուր ինձ, որ ուրիշ
բան չփնտռեմ բայց զքեզ հա-
ճեցնել. ուրիշ բանի չփափաքիմ,
բայց եթէ քու սուրբ սիրոյդ:

Թէպէտ ես արժանի չեմ այս
բանիս, ո՛վ Յիսուս իմ, բայց
դու արժանի ես, որովհետև սիր-
տըս օթևանելու եկեր ես. կը
խնդրեմ զաստնք քեզմէ քու և
ամենասուրբ մօրդ արդեանց և
երկնաւոր Հօրդ ունեցած սի-
րոյդ համար:

Հոս քիչ մը կեցիր մանաւոր խըն-
դիրքներդ ընելու Յիսուսէն՝ թէ՛ քեզի
և թէ՛ ընկերացդ համար, չմոռնաս
նաև մեղաւորներն ու քաւարանի հո-
գիները և այս գրքոյկս շինողը:

Հայր երկնաւոր, Յիսուս Քրիս-
տոս միածին որդիդ խոստացաւ
մեզ՝ թէ ինչ որ իւր անուամբ
խնդրենք քեզմէ՝ կը պարգևես:
«Ամէն ամէն ասեմ, զի եթէ
խնդրիցէք ինչ ի Հօրէ յանուն
իմ, տացէ ձեզ»: Այս ուրեմն
որդւոյդ սիրոյն համար՝ որ սիր-
տըս ընդուներ եմ, լսէ ինձ և
տուր խնդրուածքներս:

ԱՂՕԹՔ

Առաջի խաչելութեան.

Լիակատար ներողութիւն ունի ով
որ խաչելութեան պատկերի մ՚առջև
գղջացած սրտով Հաղորդութենէ ետ-
քը ըսէ.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Առ ամենասուրբ Հաղորդութիւնն.

ԱՂՕԹՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, մարդկանց վրայ ունեցած մեծ սիրոյդ համար, գիշեր ցորեկ այս սուրբ Հաղորդութեան մէջն ես՝ լի գթով և սրտով. ու կը սպասես, կը կանչես և կ'ընդունիս զանոնք՝ որ քեզ այցելութեան կու գան, կը հաւատամ

Ահաւասիկ, ով սիրելի իմ բարի Յիսուս, ես քու ամենասուրբ ներկայութեանդ առջև իյնալով, մեծ Յերմեռանդութեամբ կը խնդրեմ՝ որ սրտիս մէջ տպաւորես հաւատք, յոյս, սէր, ու ցաւ՝ իմ մեղացս համար, և առաջադրութիւն մը որ ասկէ վերջը ոչ երբէք քեզի դէմ մեղանչեմ։ Որովհետև ես բոլոր սիրով ու սաստիկ ցաւակցելով, մտածելու հետ կ'ըլլամ քու հինգ վէրքերդ, սկսելով անկէ, որ կ'ըսէ քեզի համար, ով Յիսուս, սուրբ մարգարէն Դաւիթ. «Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, թուեցին զամենայն ոսկերս իմ»։

Հայր մեր. Ողջոյն քեզ. Փառք Հօր մը զուրցէ Եկեղեցւոյ պիտոյից համար։

որ ներկայ ես խորանին վրայի Հաղորդութեան մէջ. ես՝ որ բոլորովին ոչնչութիւն եմ, քեզ երկիր պագանեմ, և չնորհակալ կ'ըլլամ այնչափ ըրած բարեացդ, մասնաւորապէս այս Հաղորդութեամբ զքեզ ինձ պարգևելուդ, Աստուածածին մայրդ ինձ փաստաբան տալուդ, և զիս այս եկեղեցին քեզ այցելութեան կանչելուդ: Կ'ողջունեմ այսօր քու ամենասիրելի սիրտդ, երեք վախճանով: Մէյմը՝ չնորհակալութեան համար այս մեծ բարեաց. երկրոդ՝ փոխարէն այն ամէն անարգանաց, որ սուրբ Հաղորդութեան պատճառաւ ընդուներ ես անհաւատներէ, հերձուածողներէ և գէշ քրիստոնեաներէ. և երրորդ՝ կ'ուզեմ այս այցելութեամբս երկրպագել քեզ աշխարհիս ամէն կողմը, ուր որ քիչ պատիւ կուտան Սրբութեան և առանց այցելութեան կը ձգեն:

Յիսուս իմ, բոլոր սրտովս զքեզ կը սիրեմ. կը ցաւիմ որ անցեալ կենացս մէջ չատ անգամ քու անհուն բարութեանդ դէմ գործեր եմ. կը խոստանամ չնորհքովդ ալ ասկէ վերջ զքեզ չվշտացնել. և հիմա խեղճութեամբս հանդերձ զիս բոլորովին քեզ կը մատուցանեմ, քեզ կը պարգևեմ և կը հրաժարիմ բովանդակ կամքէս, իղձերէս, փափաքներէս և ամէն բաներէս: Այս օրէս՝ զիս ալ, ունեցածներս ալ ինչ որ կ'ուզես ըրէ: Զքեզ միայն կը փնտռեմ, քու սուրբ սէրդ, յետին յարատևութիւն, և կամացդ անթերի կատարումը միայն կ'ուզեմ: Քեզ կը յանձնեմ քաւարանի հոգիքը և մասնաւորապէս ամենասուրբ Հաղորդութեան և սուրբ Աստուածածնայ Ջերմեռանդները: Քեզ կը յանձնեմ բոլոր խեղճ մեղաւորները: Եւ վերջապէս, փրկիչ իմ սիրելի, բո-

լոր իղձերս քու ամենասիրով լը-
ցեալ սրտիդ ըղձից հետ միացը-
նելով՝ կ՝ընծայեմ յաւիտենական
Հօրդ, և քու անուամբդ կը խընդ-
րեմ, որ քու սիրոյդ համար
ընդունի և հաճի անոնց հետ։

Հոս եաւի դրած հոգևորական Հա-
ղորդութեան ներգործութիւնը ըրէ։



ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Շատ օգտակար է ո՛վ որ հաւատով,
խոնարհութեամբ ու սիրով ատեպ կ՝ընէ։

Կը հաւատամ քեզ, փրկիչ իմ,
ամենասուրբ Հաղորդութեան մէջ-
ը, կը սիրեմ զքեզ և կը ցան-
կամ ընդունիլ զքեզ խեղճ սրտիս
մէջ։ Ե՛կ զղջացած ու խոնարհ
սրտիս մէջ...։ Իբրև արդէն իսկ
եկած, քեզ կը պլլուիմ և զիս
բոլորանուէր քեզ կը մատուցա-
նեմ. տո՛ւր ինձ քու սէրդ և յա-
րատևութիւն և ինծմէ մի՛ բաժ-
նուիր։ Զիս ալ մի՛ թողուր՝ որ
բաժնուիմ քեզմէ։

ԱՁՁԵԼՈՒԹԻՒՆ

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱՂՕԹՔ

(Այս աղօթքները իւրաքանչիւր օր ըսողին 300 օրուան ներողութիւն՝ իսկ ամիս մը ըսողին լիակատար ներողութիւն),

ԿԻՐԱԿԻ

Աղօթք առ սուրբ Աստուածածին մեղաց թողութիւն գտնելու համար.

Անհաւասիկ, մայր Աստուծոյ, խեղճ մեղաւոր մը ոտքդ ինկած՝ քեզի կը դիմէ և քեզ կ'ապաւի-

ՆՈՒԷՐ

Սրտին Յիսուսի պատկերի մը առջև ընելու.

Ես Ա. Ա. քեզի երախտագէտ ըլլալու և առաջին անհատատարմութիւններս քաւելու համար՝ քեզ կը մատուցանեմ սիրտս, և գիս բովանդակ քեզ կը նուիրեմ, Յիսուսդ իմ ամենասիրելի, և քու չնորհքովդ կ'առաջադրեմ ալ չմեղանչել։

Ներողութիւն մէկ անգամ ըսողին, և լիակատար ամիս մը ըսողին, խոստովանելով և հաղորդուելով։

նի. ես չեմ արժանի՝ որ վրաս նայիս, բայց գիտեմ որ դու տեսնելով Որդիդ, որ մեռաւ մեղաւորները փրկելու համար՝ շատ կ'ուզես օգնել անոնց: Ո՛վ մայր ողորմութեան, նայէ անգամ մը իմ խեղճութեանս վրայ, ողորմէ ինձ: Ես կը լսեմ որ ամէնն ալ քեզի համար կ'ըսեն Ապաստան մեղաւորաց, Յոյս յուսահատելոց, Օգնական անկելոց. եթէ անանկ է՝ դու ես իմ ապաստանս, իմ յոյսս, իմ օգնութիւնս. պէտք է որ դու քու բարեխօսութեամբդ գիս փրկես. հասիր ինձ Յիսուսի սիրոյն համար. տուր ձեռքդ խեղճ ընկածի մը, որ քեզի է յանձնուած: Եւ գիտեմ որ քեզ մխիթարութիւն է մեղաւորի մ'օգնել երբոր կրնաս. եթէ այդպէս է՝ հիմա որ կրնաս՝ օգնէ ինձ. ես իմ մեղօքս կորսնցուցի աստուածային չնորհքը ու իմ հոգիս, հիմա ես գիս քու ձեռքդ կը

յանձնեմ. ըսէ ինչ ընեմ որ նորէն Աստուծոյ չնորհաց մէջ ըլլամ, չուտ մը կ'ուզեմ այն բանն ընել: Տէրն իմ գիս քեզ կը դրկէ որ ինձ օգնութեան հասնիս. կ'ուզէ որ ես քու գթութեանդ ապաւինիմ. որպէս զի ոչ միայն քու որդւոյդ արդիւնքն այլ նաև քու բարեխօսութիւնդ իմ փրկութեանս օգնական ըլլայ: Ուստի ես քեզ կը դիմեմ. դու ինծի համար աղաչէ Յիսուսի. ճանչցուր այն բարիքն, որ քեզ ապաւինողաց կ'ընես: Ասանկ կը յուսամ, ասանկ ըլլայ:

Երեք Ողջոյն քեզ Մարիամ ըսէ այն հայհոյանքներուն տեղ՝ որ իրեն դէմ կ'ընեն.

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Աղօթք առ ամենասուրբ Կոյսն սուրբ յաբատևուբիւնն ընդունելոյ համար.

Ո՛վ երկնաւոր թագուհի, ես որ ատեն մը գերի եղած էի սատանայի, հիմայ քեզ ծառայ կ'ըլլամ մշտնջենաւոր, կը նուիրեմ ինքզինքս քեզ պատուելու, քեզ ծառայելու բոլոր կենացս մէջ. ընդունէ զիս ու մի՛ մերժեր, ինչպէս որ արժանի եմ: Ո՜վ մայր իմ, բոլոր յոյս քու վրադ եմ դրած: Կ'օրհնեմ, չնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ՝ որ իրեն ողորմութեամբը կը չնորհէ ինձ քեզի ապաւինիլ: Իրաւ է, որ անցած ատենները մեղաց մէջ ընկայ չապրեցայ, բայց կը յուսամ որ անոնց թողութիւնն առի Յիսուսի Քրիս-

տոսի արդեամբ ու քու բարեխոսութեամբդ, բայց այս հերիք չէ, մայր սուրբ, մէկ մտմտուք մը զիս կը տանջէ, երբ կը մտածեմ որ՝ կրնամ նորէն իյնալ, աստուածային չնորհքը կորսնցնել. վտանգները չեն պակսիր, թշնամիք չեն քնանար, նոր նոր փորձութիւնք վրաս կ'ելլան: Ո՛վ Տիրուհի, դու ուրեմն պաշտպանէ զիս. դժոխային յարձակմանց դէմ օգնէ ինձ. մի՛ թողուր որ նորէն կորսնցնեմ հոգիս, արքայութիւնն ու զԱստուած: Այս չնորհքս քեզմէ կը խնդրեմ, ո՛վ սուրբ կոյս Մարիամ, այս կ'աղաչեմ, ասոր համար դու բարեխօս եղիր ինչպէս որ կը յուսամ. Ամէն:

Երեք Ողջոյն քեզ ըսէ ինչպէս որ վերն ըսինք:

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Աղօթք առ աստուածուրբ կոյսն Մարիամ, յարի մահ ոչնչացուցանել.

Ո՛վ ամենաստուրբ կոյս Մարիամ, ինչ պիտի ըլլայ իմ մահս. ես միտքս բերելով իմ մեղքերս, միտքս բերելով մեռնելու վայրկեանս և իմ յաւիտենական փըրկութիւնս կամ դատապարտութիւնս, կը դողամ, կը սարսափիմ. իմ յոյսս դրեր եմ միայն Յիսուսի արեան և քու բարեխօսութեանդ վրայ, ո՛վ մայր քաղցրագութ մխիթարիչ վշտացելոց, գիս երեսէ մի՛ ձգեր այն ատեն. մի՛ թողուր գիս առանց մխիթարելու այն սոսկալի նեղութեանս ատեն: Թէ որ հիմա ասանկ կը տանջէ գիս խղճմտան-

քըս, միտքս բերելով ըրած մեղքերս, որոնց համար թողութիւն գտեր եմ արդեօք չեմ գիտեր, նորէն իյնալու վտանգը, աստուածային արդարութեան խըստութիւնը, ինչ պիտի ըլլայ ինձ այն ատեն: Ո՛վ Տիրուհի, մահս վրայ չհասած՝ տուր ինձ չնորհք սաստիկ ցաւելու գործած մեղացս համար. գիս իրաւցնէ ուղղելու, ճնացած կենացս մէջ հաւատարիմ ճնալու Աստուծոյ: Իսկ երբ մեռնելուս ատենը հասնի, ո՛վ յոյսդ իմ սրբուհի Մարիամ, օգնական եղիր ինձ այն սաստիկ նեղութեանս ատեն՝ որուն մէջ պիտի գտնուիմ. սիրտ տուր ինձ՝ որ չյուսահատիմ մեղքերս տեսնելով, որոնք սատանան աչքիս առջև պիտի դնէ: Տո՛ւր որ՝ այն ատեն չատ անգամ կարենամ քու անունդ կարդալ, որպէս զի քու քաղցր անունդ բերանս առնելով՝ և քու որդուդ ամենաստուրբ ա-

նունն Յիսուսի՝ անանկ հոգիս աւանդեմ։ Քու այնչափ չերմեռանդներուդ այս չնորհքն ըրեր ես. ես ալ կը փափաքիմ ու կը յուսամ որ կ'առնում. Ամէն։

Երեք Ողջոյն։



ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԱՂՕԹՔ

Առ արեւնաստղըդ կոյսն Մարիամ,

դժոխքէ ազատեղոյ հաւատար.

Ո՛վ մայր Աստուծոյ ամենասուրբ կոյս Մարիամ. չնորհակալ եմ, որ այնչափ անգամ զիս դժոխքէ ազատեցիր, որչափ անգամ որ ես իմ մեղքերովս անոր արժանի եղայ։ Կարելի է որ ա-

ռաջին մեղք ընելուս դատապար-
տութեան վճիռս կտրուած կ'ըլ-
լար ու ես խեղճ ողորմելիս այն
բանտին մէջ հիմա դատապար-
տուած կ'ըլլայի, թէ որ դու
գթութեամբդ օգնութեան չհաս-
նէիր ինձ. առանց իմ աղաչա-
նացս՝ այլ միայն քու ողորմու-
թեամբդ բռնեցիր աստուածա-
յին արդարութիւնը, եւքն ալ
իմ խստասրտութիւնս կտրելով՝
սիրտս չարժեցիր քեզ ապաւինե-
լու: Արդեօք քանի՛ քանի ուրիշ
մեղաց մէջ ալ պիտի իյնայի՝
թէ որ դու, մայր սիրելի, չը-
պահէիր զիս չնորհօքն՝ որ ինձ
համար առիր. բայց, ո՛վ թա-
գուհի երկնաւոր, բոլորովին զիս
դժոխքէն ազատէ. ինչ օգուտ
կ'ընէ քու գթութիւնդ ու օգնու-
թիւնդ՝ որ ինձ ըրիր, երբ ես զիս
կորսնցնեմ: Ատեն մը թէ որ ես
զքեզ չսիրեցի՝ հիմա Աստուածմէ
վերջ ամէն բանէն վեր զքեզ կը

սիրեմ. ուրեմն թող մի՛ տար որ
ես քեզմէ ու Աստուածմէ բաժնը-
ւիմ, որ քու միջնորդութեամբդ
այնչափ ողորմութիւն ըրած է
ինձ: Ո՛վ Տիրուհի սիրելի, մի՛
թողուր որ դժոխոց մէջ իյնա-
լովս՝ զքեզ միշտ աւող ու անի-
ծող ըլլամ: Ի՞նչպէս կրնայ դի-
մանալ սիրտդ դատապարտուած
տեսնելով մէկ ծառայդ՝ որ զքեզ
կը սիրէ: Մայր սուրբ Մարիամ,
ի՞նչ կ'ըսես ինձ համար՝ արդեօք
ես զիս պիտի կորսնցնեմ. իրաւ-
ցընէ կը կորսնցնեմ, թէ որ զքեզ
թողում. բայց ասկէ յետոյ ո-
րո՞ւն սրտէն կ'անցնի զքեզ թո-
ղուլ. ո՞վ կրնայ մոռնալ այն
սէրն, որ ինձ ցուցիր: Չէ՛, ով որ
հաւատարմութեամբ առ քեզ կ'ա-
պաստանի քեզ կը դիմէ՝ չի կոր-
սուիր: Ապա, ո՛վ մայր իմ սի-
րելի, զիս իմ ձեռքս մի՛ թողուր.
եթէ թողուս՝ ես զիս կը կոր-
սընցնեմ, այլ տուր որ միշտ քեզ

դիմեմ. փրկէ զիս, ո՛վ յոյս իմ, փրկէ զիս դժոխքէն, և ամենէն առաջ մեղքէն՝ որ կրնայ զիս դժոխք դատապարտել։

Երեք Աղջոյն։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ա Ղ Օ Թ Ք

Ա՛ռ ամենասուրբ կոյսն Մարիամ, արքայուհին ամենայոց հարևար.

Ո՛վ Թագուհի երկնից արքայութեան, որ հրեշտակաց դասերէն վեր կը նստիս, աւելի մօտիկ Աստուծոյ, ես ողորմելի մեղաւորս այս խեղճ աշխարհիս մէջ կեցած՝ քեզ ողջոյն կուտամ, զքեզ կ՝աղաչեմ. ինձ դարձուր միանգամ քու գթութեան աչուըներդ, որոնք ո՛ւր նային՝ չնորհք կը սփռեն հոն. տե՛ս նայէ, քանի քանի վտանգաց մէջ ընկած եմ և պիտի գտնուիմ քանի որ ողջ եմ այս աշխարհիս վրայ. անանկ վտանգներ, որ կրնամ

կրսնցնել հոգիս ալ, արքայու-
թիւնն ալ, Աստուած ալ. բոլոր
յոյս քու վրադ դրած եմ, ո՛վ
տիրուհի. ես զքեզ կը սիրեմ,
կը հառաչեմ չուտով քովդ գա-
լու, զքեզ տեսնելու, զքեզ փա-
ռաւորելու արքայութեան մէջ:
Ե՞րբ պիտի լլլայ այն օրը, մայր
սուրբ, կոյս Մարիամ, որ ես
գիս փրկուած տեսնեմ ոտքիդ
առջև նստած, երբ պիտի համ-
բուրեմ այն ձեռքը, որ այնչափ
չնորհքներ տուեր է ինձ: Իրաւ
է, մայր սուրբ, որ ես իմ կենացս
մէջ շատ ապերախտ եղեր եմ քե-
զի դէմ, բայց թէ որ արքայու-
թիւն հասնիմ, հոն զքեզ պիտի
սիրեմ ամէն վայրկեան մինչև
յաւիտեան, հոն հաւտուցում պի-
տի ընեմ իմ ապերախտութեանս
տեղ՝ միշտ օրհնելով ու չնորհա-
կալ ըլլալով: Ես հիմա չնորհա-
կալ կ'ըլլամ Աստուծոյ՝ որ ինձ
ասանկ յոյս, համարձակութիւն

կու տայ Յիսուսի Քրիստոսի ա-
րեանն ու քու հզօր բարեխօսու-
թեանդ վրայ. ասանկ յոյս դրած
ունէին քու ճշմարիտ չերմեռանդ-
ներդ և անոնցմէ մէկն ալ չխա-
բուեցաւ. ապա ուրեմն ես ալ պի-
տի չխաբուիմ: Ո՛վ սուրբ կոյս
Մարիամ, բարեխօս եղիր քու
որդւոյդ Յիսուսի, որ հաստա-
տուն պահէ ու աւելցնէ այս իմ
յոյսս, ինչպէս որ ես ալ կը
խնդրեմ իրեն քաշածներուն ար-
դեանց համար. Ամէն:

Երեք Ողջոյն:

ՈՒՐԲԱԹ

ԱՂՕԹՔ

Աւ առնեցասուքը կոյսն Մարիամ, իրեն և Յիսուսի սիրով բորբոքելու համար.

Ո՛վ սուրբ կոյս Մարիամ, դու ես ստեղծուածոց մէջ ամենէն ազնիւը, ամենէն գերազանցը, ամենէն մաքուրը, ամենէն գեղեցիկը և ամենէն սուրբը։ Ինչ ազէկ կ'ըլլար, ով Տիրուհի, թէ որ ամէնն ալ գթով սիրէին ինչպէս որ արժանի ես. բայց ասով կը մխիթարուիմ, որ այնչափ երանելեաց հոգիք երկնից մէջ, այնչափ արդարք երկրիս վրայ կ'ապրին սիրելով գնալէվով դու ապնուութեանդ ու փառաւորութեանդ վրայ։ Ամենէն աւելի ինձ ուրախութիւն այն է՝ որ նոյն ինքն Աստուած ալ գթով միայն աւելի կը սիրէ՝ քան թէ ամէն մարդիկ ու հրեշտակները միանգամայն։ Ո՛վ թագուհի սիրելի, ես ողորմելի մեղաւորս ալ գթով կը սիրեմ, բայց այս իմ սէրս շատ քիչ է. կ'ուզեմ շատ աւելի ու սրտանց սէր ունենալ քեզ. այս չնորհքը դու պիտի առնուս ինձ համար. այո ապա մեծ սէր մը դէպի Յիսուս Քրիս-

*աս, ան այս չնորհքն ինձ հա-
մար, դու որ կ'առնուս Աստուծմէ
ինչ որ կ'ուզես։ Ես չեմ խնդրեր
քեզմէ երկրաւոր բարիք, ոչ պա-
տիւ, ոչ հարստութիւն, այլ կը
խնդրեմ այն բանն՝ որ քեզի
աւելի բաղձալի է, որ է միայն
սիրել զԱստուածն իմ, կրնայ
լլալ որ չհասնիս չկատարես այս
իմ բաղձանքս՝ որ այնչափ քու
իսկ ուզածդ է, գիտեմ թէ կը
հասնիս ու կը խնդրես։ Կ'ապա-
չեմ սուրբ կոյս Մարիամ, խնդրէ
ու խնդրելէ մի դադրիր ինչուան
որ գիս արքայութեան մէջ չտես-
նես, ուր ապահով կ'ըլլամ ժա-
ռանգել ու սիրել միշտ զԱստուա-
ծըն իմ քեզի հետ, մայր սիրե-
լի։ Ամէն։*

Երեք Ողջոյն։

ՇԱՐԱԹ

ԱՂՕԹՔ

*Ան աւետիսուրբ կոյսի Մա-
րիամ, իրեն պաշտպանութիւնը
խնդրելու համար.*

*Ո՛վ աստեղաւոր մայր, կը
տեսնեմ, չնորհքներդ, որ դու ը-
րեր ես ինձ, և կը տեսնեմ ա-
պերախտութիւնս՝ որ ես ըրեր եմ
քեզ, գիտեմ որ ապերախտ մար-
դըն արժանի չըլլար բարերա-
րութեան, բայց անանկ ալ չեմ
կարեր յոյս քու ողորմութենէդ,
որ ապերախտութենէս մեծ է։
Ո՛վ հզօր փաստաբան իմ, նայէ՛
ողորմէ վրաս, դու ես գանձա-
պետ ամէն չնորհաց, որ Աստուած
կու տայ մեզի խեղճ մեղաւորա-
ցըս, այս բանիս համար Աս-
տուած գքեզ ասանկ կարող, ա-*

սանկ առատաձեռն ու բարերար ըրաւ, որպէս զի հասնիս մեզի։ Ես կ'ուզեմ փրկուիլ, անոր համար քու ձեռքդ կը յանձնեմ իմ յաւիտենական փրկութիւնս, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս, քու առանձին ծառաներուդ մէջ կ'ուզեմ գրուիլ. զիս դուրս մի հաներ։ Ողորմելիները կը փընտռես դու մխիթարելու համար, ապա զիս ողորմելի մեղաւորս մի՛ ձգեր երեսէդ, որ քեզ եմ ապաւինած. ինձ համար բարեխօս եղիր. դու ինչ որ ուզես կը կատարէ որդիդ, ա՛ռ զիս քու պաշտպանութեանդ ներքև, հերիք է ինձ այսչափս. թէ որ դու զիս պաշտպանելու ըլլաս՝ ես բանէ մ'ալ չեմ վախնար, ոչ իմ մեղքերս, որովհետև կը յուսամ թէ դու անոնց համար թողութիւն կ'առնես Աստուծմէ. ոչ սատանաներէն, որովհետև դու բոլոր դժոխքէն ալ զօրաւոր ես. և ոչ

արդար դատաւորէն Յիսուսէ, որ քու մէկ խնդիրքդ լսելու ըլլայ՝ կը զիջանի կը հաշտուի։ Ա՛ռ պաշտպան եղիր ինձ, մայր ստուրբ. թողութիւն ա՛ռ իմ մեղաց համար, սէր դէպի Յիսուս, ստուրբ յարատևութիւն, բարի մահ, և յետոյ արքայութիւն. մանաւանդ ա՛ռ ինձ համար՝ միշտ զիս քեզի յանձնելուս։ Իրաւ է որ ես չեմ արժանի այս չնորհաց. բայց թէ որ դու խընդրելու ըլլաս Աստուծմէ ինձ համար՝ այն ատեն կ'առնուի. ապա խնդրէ Յիսուսէն ինձ համար, ո՛վ ստուրբ կոյս Մարիամ Թագուհի. քեզի եմ ապաւիներ, քու վրադ յոյս դրած կեցեր եմ, և այս յուսով մեռնիլ կ'ուզեմ. Ամէն։

Երեք Ողջոյն՝ ինչպէս վերը. և շաբաթ ըլլալով՝ լիթանիան ալ ըսէ, որուն համար 300 օրուան ներողութիւն կայ։

Ա Ղ Օ Թ Ք

ԾԱՌԱՑԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ Տ. ՎԻՆ-
ԿԵՆՏԻՈՍԻ ՊՈՂՂՈՏԵԱՑ

Աստուածպաշտութեան և հա-
շատոց աձման համար.

Հայր երկնաւոր, քու անբաւ ողորմութեանդ, և Յիսուս որդւոյդ անհուն արդեանց համար, ճանչցուր և սիրցնել տուր զքեզ ամենուն, որովհետև ամենուն փրկութիւնը կ'ուզես: Փառք Հօր:

Բան յաւիտենական, մարմնացեալ Փրկիչ աշխարհի, դարձուր քեզ զամենքը, վասն զի անոնց համար ինչուան խաչ ելլալու հնազանդ եղար: Փառք Հօր:

Սուրբ Հոգիդ երկնային, Յիսուսի չարչարանաց և մահուան անբաւ արդեանց համար, լեցուր քու Ջերմ և ամենակարող սիրովդ ամենուն սիրտը, որով բոլոր աշխարհ մէկ հօտ և մէկ հովիւ ըլլայ, որպէս զի ամենքնիս ալ արժանի ըլլանք գալ երկինքն օրհնել յաւիտեան քու ողորմութիւններդ. Ամէն: Փառք Հօր:

Ա. Դ. Օ Թ Բ

Ա՛ո աւետաւորբր կոչեաւ Մարիամ բագուհի Աւաքելոց.

Անարատ կոյս Մայր Աստուածոյ, թագուհի առաքելոց, կը ճանչնամ աստուածային պատուէրն որ կը հրամայէ ինձ սիրել զընկերն իբրև զանձն, կը պարտաւորէ միանգամայն ընկերոջս փրկութեան համար ալ ամէն կերպով աշխատիլ։ Բայց կը խոստովանիմ որ իմ մեղացս համար, անարժան եմ հարկաւոր եղած շնորհքներն ընդունելու. որպէս զի աւելի լաւ և հաստատուն կերպով թէ՛ իմ, թէ՛ ազգականացս, թէ մերձաւորացս հոգւոյն յաւիտենական փրկութեան համար աշխատիմ, և մա-

նաւանդ բարի գործոց օգնելով, և հաւատքը կենդանացնելու և քրիստոնէից մէջ սէրը վառելու հոգևոր և նիւթական միջոցներն աճեցնելով և այդ երկնային սէրը բոլոր աշխարհ տարածելով։ Դու ապա, մայր իմ, աւո ինձ համար այս շնորհքս Աստուծմէ իր ողորմութեան և Յիսուսի անհուն արդեանց համար. և քեզ և բոլոր երկնից արքունեաց և ամէն արդարոց հետ՝ որ են ու պիտի ըլլան սուրբ եկեղեցւոյ մէջ, կը նուիրեմ միշտ Յիսուսի արդիւնքներն շնորհակալութեան համար՝ իբրև թէ արդէն իսկ ընդունած ըլլայիր թէ՛ ինձ, թէ՛ ամենուն համար։ Ուստի ես քու հզօր միջնորդութեանդ վստահացած, կը խոստանամ այս վայրկենէն որ եթէ պարգևէ ինձ Աստուած իշխանութիւն, հանճար, գիտութիւն, երկրաւոր բարիք, արուեստ, առողջութիւն,

ցաւ և նեղութիւն, ասոնց ամենէն ալ մեծ օգուտ հանեմ Աստուծոյ փառաց և իմ հոգւոյս և ընկերաց փրկութեան համար, մասնաւորապէս աստուածպաշտութիւնն ու հաւատքը բոլոր աշխարհ տարածելու աշխատիմ։ Եթէ գործել չկարենամ, գոնէ աղօթելէն պիտի չդադրիմ, որ բոլոր աշխարհ մէկ հօտ և մէկ հովիւ ըլլայ, և այնպէս կը յուսամ որ գամ արքայութիւն ու յաւիտեան վայելեմ զՅիսուս քրոզելուս արդիւնքը. Ամէն։

Երեք Ողջոյն և. Փառք Հօր։

Ջերմեռանդական դիտաւորութիւնք օրուան մէջ ատեպ կրկնելու համար.

Աստուած իմ, քու սիրոյդ համար ամբաւ բարի գործեր և այնչափ առաքինութիւն ըրած կը

համարիմ և յաւիտեանս յաւիտենից ընել կ'ուզեմ որչափ որ դու արժանի ես. և ամէն բան անանկ կատարեալ ընել կ'ուզեմ ինչպէս որ դու կ'ուզես. ասոր համար կ'ընծայեմ քեզ նաև Յիսուսի պատուական արիւնը, չնորհակալ ըլլալով՝ որ անով իբրև հիմակուընէ սուրբ և կատարեալ ըրեր ես զիս՝ նման Հօր երկնաւորը, իբրև հիմակուընէ ամէն արքայութիւնը պարգևեր ես ինձ առանց քաւարան երթալու, իբրև հիմակուընէ ամէն բան չնորհեր ես ամենուն, այժմ և յաւիտեան։

Ա Ղ Օ Թ Ք

ԾԱՌԱՑԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ Հ. ԲԵՌՆԱՐԴՈՍԻ ԿԼԱԻՍԵՆԱՑ

Առ աւեւնատուրբ Երրորդութիւնն.

Հայր յաւիտենական, ահաւասիկ խեղճ ողորմելի արարած մը անկարող ամենայնի՝ կը ճանչնայ իւր յետին անկարութիւնը և քու անհուն կարողութիւնդ. և այս իրեն պիտոյից համար քու կարողութեանդ կ'իյնայ, կը յուսայ և կը վստահի։ Դու հոգա զինքը։ Փառք Հօր։

Որդիդ յաւիտենական ահաւասիկ խեղճ ողորմելի արարած մը անկարող ամենայնի՝ կը ճանչնայ իւր յետին անկարութիւնը և քու անհուն իմաստութիւնդ, և այս իւր պիտոյից համար քու իմաստութեանդ կը դիմէ, կը վստահի և ինքզինքը կը յանձնէ։ Փառք Հօր։

Հոգիդ սուրբ յաւիտենական, ահաւասիկ ողորմելի և ապերախտ արարած մը, որ բանի մ'արժանի չէ, կը ճանչնայ իւր յետին ապերախտութիւնը և քու անհուն ողորմութիւնդ, քու գթութեանդ կը դիմէ ու կը պլլուի, քեզ կ'ապաւինի, քեզ կը վստահի. դու զինքն հոգա։ Փառք Հօր։

Հոգւոյ մը կատարեալ սրբութիւնը և կատարեալ ըլլալը՝ զՅիսուս մեր Աստուածը, մեր անհուն բարին, մեր Փրկիչը՝ սիրելուն մէջն է։ Ուստի բոլոր մեր հոգը պէտք է ըլլայ ստանալ ճըշմարիտ սէր առ Յիսուս (Ս. Լիկուորի)։

Ա Ղ Օ Թ Ք

Շատ օգտակար է ամէն օր ըսելը, մանաւանդ բարեկենդանի մէջ փոխարէն մարդկանց մեղքերուն։

Հայր յաւիտենական, քեզ կը մատուցանեմ Յիսուսի ամենասուրբ սրտին սէրը, փառքը, վշտերը, իղձերը և բոլոր փափաքները, փոխարէն մարդկան մարմնաւոր և երկրաւոր մեղաց և քեզի դէմ, ուզածներուն համար։ Հայր մեր։ Ողջոյն։ Փառք Հօր։

Հայր յաւիտենական, քեզ կը մատուցանեմ Յիսուսի անմեղ բերնին բոլոր կրթութիւնները, իւր զգուշաւորութիւնը, կերակուրի և խօսելու չափաւորութիւնը, իւր աղօթքը և քարոզութիւնը, որոնցմով այնչափ աշ-

խատեցաւ մարդուս փրկութեան համար՝ փոխարէն այն մեղաց՝ որ բոլոր Եկեղեցւոյ մէջ կ'ըլլան, բերանով, խմելով, հայհոյութեամբ, և այնչափ դատարկ և վնասակար խօսքերով։ Հայր մեր։ Ողջոյն։ Փառք Հօր։

Հայր յաւիտենական, քեզ կը մատուցանեմ Յիսուսի ամենասուրբ մարմնոյն բոլոր կրթութիւնները և բոլոր կրած դառն չարչարանքներն ու մահը, փոխարէն այն ամէն մեղաց որ կ'ըլլան մարդիկ չար սովորութեամբ մարմնոյ, քու աստուածային օրինացդ և իրենց յաւիտենական փրկութեան դէմ։ Հայր մեր։ Ողջոյն։ Փառք Հօր։

Ա Ղ Օ Թ Ք

Սաստիկ վշտաց և նեղութեանց միջոց հաւատքին աչեր բորբոքելու համար.

Աստուած իմ, Հայր ողորմութեան և աղբիւր մշտնջենաբուխ ամենայն մխիթարութեան, ես թէպէտ անանկ սաստիկ դժուարութեանց, նեղութեանց և փորձութեանց ծովի մէջ կը գտնուիմ, որ ընկղմելու մօտ եմ, սակայն չեմ ուզեր յուսահատիլ կամ լքանիլ, այլ արիութիւնը և վստահութիւնը ձեռք առած՝ կ'ուզեմ յուսալ բոլորովին և յանձնել զիս քու ամենաքաղցր ողորմութեանդ, որ անսպառ է, և գիտեմ թէ անհուն բարերար և գթած ես։

Անանկ որ եթէ տեսնեմ զքեզ

որ սուր մը ձեռքդ զիս սպաննելու և կտոր կտոր ընելու կուգաս, սակայն և այնպէս կը յուսամ ի քեզ որ զիս անանկ կտրատելէդ ետքն ալ կ'ողջնցնես քու կարողութեամբդ։ Եւ թէպէտ բիւր անգամ դարձեալ փշրես ու կտոր կտոր ընես, բիւր անգամ ի քեզ կը յուսամ, որ յետ զիս կտրտելուդ ու ոչնչացնելուդ, դարձեալ կը յարուցանես. վասն զի դու կը մեռցնես ու կ'ողջընցնես, կը խոնարհեցնես ու կը բարձրացնես, կը թողուս՝ որ ինչուան ժխտին սահմանը մօտենայ մարդ և ետքը գթութեամբդ արքայութեան ճամբան զինքը կը մտցնես, և ալէկոծութենէ ետքը՝ քու մէջդ կը հանդարտեցնես, Աստուած իմ, Հայր, Որդի և Սուրբ Հոգի։ Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան։

ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱՉԻ

ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՂԷՈՆԱՐՏՈՍԻ

(Ի ԲՈՐԴՈՑ ՄԱՀՐԻՑԻՈՑՂ)

Ճանապարհ խաչի ընողները նոյն ներողութիւնները կ'առնուն ինչ որ Երուսաղեմայ սուրբ տեղեաց այցելութիւն ընողները։

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂՋՄԱՆ

Փրկիչ իմ գթած, որովհետև ամենաբարի ես և ողորմած, ամէն բանէ վեր զքեզ կը սիրեմ, և կը զղջամ բոլոր սրտանց զքեզ իմ բարերարս վշտացնելուս համար, ընծայելով այս սուրբ ճանապարհ խաչին՝ ի պատիւ այն կրկնծելի ճանապարհին, որ դու ըրիր

անարժան մեղաւորիս համար. և յուսամ որ կ'ընդունիմ սուրբ ներողութիւնները, և կ'աղօթեմ միայն այն վախճանաւ ու պատճառաւ՝ որուն համար որ չնորհուած է այսպիսի մեծ գանձ մը. դարձեալ խոնարհաբար կ'աղաչեմ զքեզ՝ որ օգտակար ըլլայ ինձ՝ այս աշխարհիս վրայ քու գթութեանդ հանդիպելու, և անդին՝ յաւիտենական փառաց։ Ամէն։

Ա.

ՀԱՆԳԻՍՏ

Յիսուս վահուան կը դատապարտուի.

Երկրպագեմք քեզ Քրիստոս և օրհնեմք զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհ։

(Այսպէս գուրցէ ամէն հանգստեան սկիզբը)։

Ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, ի՛նչ անբաւ սէր է քու ունեցածդ, որ

անարժան ստեղծուածոյ մը համար կը համբերես բանտի, կապանաց, ձաղանաց և ինչուան այն աստիճան անարգ մահուան դատապարտուելու։ Ա՛հ, բաւական է այսչափը սիրտս վիրաւորելու, և առել տալու ինձ մեղքերս, որ այդ քաշածներուդ պատճառ եղան. անանկ որ կը զգուիմ անոնցմէ և դառնապէս կու լամ, և բոլոր այս ճանապարհը պիտի կատարեմ լալով, հառաչելով՝ պաղատելով։ Յիսուս ողորմեա ինձ, ողորմեա ինձ Յիսուս։ — Հայր մեր։ Ողջոյն։ Ողորմեա մեզ Տէր, ողորմեա մեզ։

(Այսպէս ըսէ ամէն հանգստեան վերջը)։

Բ.

Ցիսուս խաչը ուսը կ'առնուր.

Փրկիչ իմ Ցիսուս, ես արժանի եմ այդ խաչին, ոչ թէ դուն Ո՛վ ամենածանր խաչ, զոր իմ անբաւ ծանր ծանր մեղքերս չինեցին։ Հապա, Փրկիչ իմ սիրելի, տուր ինձ զօրութիւն ամէն խաչի սիրով պլլուելու՝ որոնց արժանի եմ ամենածանր մեղօք. մանաւանդ թէ տուր որ սուրբ խաչին պլլուած հոգիս աւանդեմ, և խաչին սիրով վա-

ռուած բիւր ու բիւր անգամ կրկնեմ Ս. Թերեզայի հետ. «կամ կրել, կամ մեռնիլ. կամ կրել, կամ մեռնիլ»։

Գ.

Յիսուս իր ամենասուրբ մօրը կը հանդիպի.

Ո՛վ երկնաւոր Որդիդ Մարիամու, ո՛վ ամենասուրբ մայր փրկչին իմոյ Յիսուսի, ահաւասիկ ես խոնարհաբար և զղջացեալ ձեր ոտքն ինկած. ես եմ այն մատնիչն՝ որ մեղօք ցաւոց սուրը չինեցի, որ ձեր փափուկ սիրտը մտաւ: Ա՛հ, ո՛րչափ սըրտանց կը ցաւիմ, և երկուքէդ ալ գթութիւն և թողութիւն կը խնդրեմ. գթութիւն, Փրկի՛չ իմ,

Գ.

Յիսուս իր ամենասուրբ մօրը կը հանդիպի.

Փրկիչ իմ ամենասիրելի, ահաւասիկ ոտքդ ինկած աչխարհիս ամենէն կոյուսեալ մեղաւորը: Ո՛հ, ո՛րչափ անգամ ինկեր, ո՛րչափ անգամ մեղաց անդունդի մէջ գլորեր եմ: Ա՛հ, տո՛ւր ինձ սուրբ ձեռքդ, օգնէ ինձ, Յիսուս, օգնէ ինձ, որպէս զի ալ կենացս մէջ մահուչափ մեղաց մէջ չիյնամ, և մահուանս ատեն ապահով ըլլայ յաւիտենական փրկութենես:

գթութիւն, ամենասուրբ կոյս Մարիամ, գթութիւն. ու ձեր գթութեամբն ալ չմեղանչեմ և գիշեր ցորեկ ձեր ցաւերն ու կըսկիծները մտածեմ։



Ե.

Սիմոն Կիրենացին Յիսուսի կ'օգնէ.

Ո՛վ ամենասիրելիդ իմ Յիսուս, չնորհակալ եմ այնչափ աղէկ առիթներ տալուդ՝ որ քեզի համար համբերեմ, և ինձ համար արդիւնք շահիմ։ Տո՛ւր, Տէր, որ համբերութեամբ կրելով աշխարհիս վրայ չար երևցածներն, անդին յաւիտենական բարիք դիզեմ. և այս աշխարհիս վրայ քեզի հետ ըլլալով, արժանի ըլլամ երկնից արքայութեան մէջ քեզի հետ մէկտեղ թագաւորել։

Բ.

Յիսուս երկրորդ անգամ կ՚իյնայ

Ո՛վ ամենասուրբ փրկիչ իմ, թէպէտ զքեզ ինկած կը տեսնեմ, բայց կը խոստովանիմ որ ամենակարող ես, կ՚աղաչեմ զքեզ, խոնարհեցուր իմ հպարտ, ամբարտաւան և ինքնահաւան մտածութիւններս, որպէս զի միշտ գլուխս գետին խոնարհած քալելով, սրտանց ընդգրկեմ նախատինք ու արհամարհանք. և այս ճշմարիտ ու անկեղծ խոնարհութեամբս՝ որ շատ սիրելի է քեզ, այդ ցաւագին անկմանէդ վեր հանեմ զքեզ։

Զ.

Վերոնիկա Յիսուսի քրտինքը կը սրբէ.

Փրկիչ իմ չարչարեալ, տպաւորէ, կ՚աղաչեմ, այդ սրբազան դէմքդ սրտիս մէջ, որ գիշեր ցորեկ զքեզ մտածեմ, և քու դառնակսկիծ տանջանքներդ աչքիս առջև դրած՝ լամ միշտ իմ ծանր ծանր մեղքերս, խոստանալով՝ որ ինչուան ի մահ ցաւով ու ապաշաւանօք ապրիմ, ատելով միշտ իմ գէշ վարքս։

Ը.

Յիսուս կը վիճիրարէ զկանայս

Փրկիչդ իմ ամենասիրելի, ինչու՛ բոլոր սիրտս ճշմարիտ ապաշխարութեան արցունքով չլեցուցիր: Արցունք կը խնդրեմ քեզմէ Յիսո՛ւս, ցաւոց և կարեկցութեան արցունքներ, որպէս զի արտօսրալից աչքերով և ցաւագին սրտիւ արժանի ըլլամ այն գթութեանդ՝ զոր ցուցիր այն խեղճ կանանց: Ո՛հ, տո՛ւր ինձ այս մէկ հատիկ մխիթարութիւ-

նը, որ ողջութեանս ատեն գոթովալից աչօք վրաս նայելովդ՝ ապահով ըլլամ մեռած վայրկեանս զքեզ տեսնելու:



Թ.

Յիսուս երրորդ անգամ կ'իյնայ.

Աստուած իմ ամենակարող, որ մէկ նայուածքով երկինքն ու երկիրս հաստատուն կը բռնես, ո՞վ գքեզ ատանկ խեղճ կերպով գետին կը ձգէ, վայ ինձ. իմ անդադար մեղաց մէջ գլորիլներս ու անօրէնութիւններս, որ մեղք մեղքի վրայ դիզելով չարչարանքներդ աւելցուցի: Բայց արդ ցաւոց մէջ ընկղմած ոտքդ կ'իյնամ. հաստատապէս խոստանալով ալ դադրիլ մեղքէ, և լա-

ցովս և հառաչանքներովս բիւրիցս բիւր անգամ կը կրկնեմ, ալ չեմ մեղանչեր, Աստուած իմ, ալ չեմ մեղանչեր:



Ժ.

Կը հանուհցնեն գՅիսուս ու
ղեղի կը խաչեեն.

Փրկիչ իմ տառապեալ, ինչ ա-
հաւոր տարբերութիւն է այս:
Դու բովանդակ արեանդ մէջ
թաթախուած, բովանդակ վէրք,
բովանդակ լեղի, ես բոլորովին
ուրախութեանց, զուարճութեանց
ու քաղցրութեանց մէջ: Ա՛հ, չէ,
քայլերս աղէկ չեն. ա՛հ, փոխէ
վարքս. և անանկ դառնացուր
ինձ ապագայ կենացս քաղցրու-

թիւնները, որ այս օրէս ուրիշ
բանէ ախորժ չառնելով, բաց ի
քու ամենասուրբ չարչարանքնե-
րէդ, արժանի ըլլամ հասնիլ քե-
զի հետ արքայութեան զուար-
ճութիւնները վայելելու:

ԺԲ.

Յիսուս խաչին վրայ կը բարձրանայ ու կը մեռնի.

Փրկիչ իմ Յիսուս ամենաողորմ, որ ինձ համար խաչուեցար, հարուածէ այս իմ խստացեալ սիրտըս սուրբ սիրովդ ու վախով. և որովհետև մեղքերս եղան այն անգութ գամերն, որ ծակեցին զքեզ, տո՛ւր որ ցաւս ալ՝ իմ դահիճս ըլլայ, որ ծակէ ու գամէ բոլոր իմ անկարգ կիրքերս. որպէս զի լաւ ապրելով և քեզի հետ մէկտեղ խաչեալ մեռնելով աշխարհիս վրայ, կարենամ գալ ու թագաւորել քեզի հետ մէկտեղ յերկինս։

ԺԳ.

Յիսուս խաչին վրայ կը բարձրանայ ու կը մեռնի.

Փրկիչ իմ ամենասիրելի, կը ճանչնամ որ իմ ծանր ծանր մեղքերս եղան քու ամենէն անգութ դահիճներդ՝ որ կեանքդ վերուցին քեզմէ. անանկ որ թողութեան իսկ արժանի չեմ, ես ըլլալով այն մատնիչն՝ որ զքեզ խաչեցի. բայց երբ կը լսեմ, որ զքեզ խաչողներուն համար կ'աղօթես, ո՜հ, ո՛րչափ կը մխիթա-

րուի սիրտս։ Ի՞նչ ուրեմն կրնամ ընել քեզի, որ ինձ այսչափ չնորհք տուիր։ Ահաւասիկ, կը ներեմ ես ալ՝ ով որ ինձ չարիք մը ըրեր է։ Այո՛, Աստուած իմ, քու սիրոյդ համար ամենուն կը ներեմ, զամենքը կը սիրեմ, ամենուն բարիքը կ'ուզեմ. որով կը յուսամ վերջին վայրկենիս լսել քեզմէ. Այսօր ընդ իս իցես ի դրախտին։

ԺԹ.

Յիսուս խաչին վար կ'առնուի.

Ո՛վ Թագուհի մարտիրոսաց, երբ պիտի արժանի ըլլամ ըմբռնել քու վշտերդ ու ցաւակից ըլլալ քեզ, միշտ աչքիս առջև ու սրտիս մէջ ունենալով զանոնք։ Տո՛ւր, հզօր Տիրուհի, որ գիշեր ցորեկ լամ այնչափ ծանրակշիռ մեղքերս, որ քեզի ասանկ ցաւ պատճառեցին. որպէս զի լալով, սիրելով, յուսալով ու վրադ ցաւակցելով մեռնիմ, քեզի հետ յաւիտեան ապրելու համար։

ԺԹ.

Յիսուս սուրբ գերեզմանին
վէջ կը դրուի.

Յիսուս իմ գթած, որ իմ սիրոյս համար միայն յանձն առիր այսպիսի ցաւալից ճամբայ մը ընել, քեզ երկիր պագանեմ թաղեալ և եղեալ ի սուրբ գերեզմանի. բայց կ'ուզէի միանգամայն, որ իմ սրտիս մէջ ամփոփուէիր. որպէս զի քեզի հետ միացեալ՝ այս սուրբ կրթուածէն նոր կեանքի չնորհաց վե-

րադառնամ, և սուրբ յարատեւութեամբ կարենամ չնորհաց մէջ մեռնիլ: Տո՛ւր ինձ ապա՝ որ քու ամենասուրբ չարչարանացդ արդեամբք՝ որ ինչուան հիմա մատնեցի, իմ յետին կերակուրս վերջի վայրկենիս քու աստուածային մարմինդ ըլլայ. իմ վերջին բառերս, Յիսուս և Մարիամ ըլլան. վերջին շունչս խաչին վրայէն ինձ համար աւանդածիդ հետ միաւորի: Այս կերպով՝ կենդանի հաւատքով՝ հաստատուն յուսով, վառ սիրով մեռնիմ քեզի հետ ու քեզի համար, և գամ քեզի հետ թագաւորեմ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա Ղ Օ Թ Ք

Ս. Բոնաւենդուրայի.

Ապա ուրեմն Յիսուս, որ ինձ համար և ոչ իսկ քեզի ներեցիր, տպաւորէ՛ յիս քու չարչարանքներդ, որպէս զի ուր որ դառնամ քու վէրքերդ տեսնեմ, և ուրիշ տեղ հանգիստ չգտնեմ՝ բայց քեզի և քու քաշած վըշտացդ մտածման մէջ։

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԵԱՆ

ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ

Ամէն օր առաւօտ, ցորեկ, իրիկուն երբոր Հրեշտակ Տեառն աղօթքը կ'ընենք սրտով Յիսուսի սիրոյն հետ միաւորեալ՝ ըսենք.

Վառեալդ ի մեր սէր՝ սիրտ աստուածեղէն,
Ի սէր քո վառեա ըզսիրտս համօրէն։

ՎԱՐԴԱՐԱՆ

Ի պատիւ սրտին Յիսուսի.

300 օրուան ներողութիւն կ'ընդունի ամէն անգամ ըսողը, և լիակատար՝ ամիս մը ըսողը։

Ա.

Սիրելիդ իմ Յիսուս, երբոր քու ազնիւ սիրտդ կը մտածեմ և կը տեսնեմ զքեզ լի գթութեամբ ու քաղցրութեամբ առ մեղաւորս, ուրախութիւն կը զգամ սրտէս, և վստահութեամբ կը լեցուիմ որ զիս սիրով կ'ընդունիս։ Վա՛յ ինձ, որչափ մեղք եմ ըրեր։ Բայց հիմա Պետրոսի ու Մագդաղենացւոյ նման կու լամ դառնապէս ու կ'ատեմ, որովհետև քեզի՝ անհուն բարւոյդ դէմ են։ Այո՛ այո՛, տո՛ւր ինձ թողութիւն, և ո՜հ մեռնիմ նախ, այս կը խընդրեմ ազնիւ սրտիդ համար, մեռնիմ նախ՝ քան թէ սիրտդ վիրաւորեմ. և զքեզ սիրելու համար միայն ապրիմ։

Մէկ Հայր մեր և հինգ Փառք Հօր՝ Յիսուսի հինգ վիրաց և սրտին պիտանի զուրցէ։

Ո՛վ քաղցրագութ սիրտ Յիսուսիս,
Ի սէր քոյին վառեա՛ և զիս։

(Այսպէս ըսէ ամէն հանգամանաւ վերջ).

Բ. Կ'օրհնեմ ու կը փառաւորեմ, փրկիչ իմ Յիսուս, քու խոնարհ սիրտդ. և չնորհակալ կ'ըլլամ, որ ինձ զայն օրինակ տալովդ, չէ թէ միայն ամէն փութով կը յորդորես անոր նմանիլ, այլ և անհուն խոնարհութեամբ ճամբան ալ կը ցուցնես, կը չտկես ու կը դիւրացնես։ Որչա՜փ յիմար և ապերախտ գըտնուեր եմ։ Ո՛հ, որչափ մոլորեր եմ. թո՛ղ ինձ։ Ոչ եւս հպարտութեամբ, այլ խոնարհ սրտով ու խոնարհ գործովք կ'ուզեմ ետևէդ գալ և խաղաղութիւն ու փրկութիւն ստանալ, Դու զիս զօրացուր, որ օրհնեմ յաւիտեան քու սուրբ սիրտդ։ Հայր մեր։ Փառք Հօր։ Ով քաղցրագութ։

Գ. Կը հիանամ Յիսուս համբերող սրտիդ, և չնորհակալ եմ այնչափ հրաշալի օրինակներուն համար՝ որ թողուցիր մեզ անյաղթ համբերութեամբ։ Կը ցաւիմ, որ պարապ տեղ կը յանդիմանեն անոնք իմ չափազանց փափկութիւնս, որով պզտիկ նեղութեան մ'ալ չեմ համբերեր։ Ո՛վ սիրելի փրկիչ իմ Յիսուս, լեցուր սիրտս վառ և հաստատուն սէր՝ նեղութիւն քաշելու, խաչ կրելու, մահանալու, ապաշխարելու, որպէս զի Գողգոթա քեզի հետ մէկտեղ ելլելով՝ հասնիմ քեզի հետ փառաց և երկնից ուրախութեան։ Հայր մեր։ Փառք Հօր։ Ով քաղցրագութ։

Դ. Քու ամենագթած սիրտդ տեսնելով, սիրելի փրկիչ իմ, կը տոկամ իմ սրտէս, որ բոլորովին քուկինիդ հակառակն է։ Թեթև բան մը, կերպ մը, պզտիկ հակառակ խօսք մը զիս

իսկոյն կը խռովեն ու անհանգիստ կ'ընեն։ Ո՜հ, թո՛ղ իմ յանցանքներս, և տուր ինձ չնորհքդ, որ ասկէ վերջը ո՛ր և իցէ դժկամակութեանց մէջ քու անխռով հեզութեանդ հետևիմ, և անանկով յաւիտենական սուրբ խաղաղութիւնը վայելեմ։ Հայր մեր։ Փառք Հօր։ Ով քաղցրագութ։

Ե. Թող նուագներ երգուին, Յիսուս, քու ամենաառատ սրտիդ, որ յաղթող է մահու և դժոխոց, վասն զի արժանի է։ Իսկ ես իմ երկչոտութիւնս տեսնելով՝ շփոթած մնացեր եմ, որ ամէն խօսքէ, ամէն մարդկային նկատմունքներէ կը վախեմ. բայց ա՛լ ասանկ պիտի չըլլամ։ Կը խընդրեմ քեզմէ այնպիսի արիութիւն մը, որ աշխարհիս վրայ պատերազմելով ու յաղթելով, ուրախութեամբ երկինքը քեզի հետ պսակուիմ։ Հայր մեր։ Փառք Հօր։ Ով քաղցրագութ սիրտ։

Դարձիր առ Մարիամ, և զքեզ աւելի կերպով մը իրեն նուիրելով, և իր մայրենի սիրոյն վստահացած, ըսէ՝

Քու ամենաքաղցր սրտիդ մեծամեծ արդեանց համար, տուր ինձ, ով մայր Աստուծոյ և մայր իմ, ճշմարիտ և հաստատուն սէր և Յերմեռանդութիւն՝ Յիսուսի որդւոյդ սրտին, որուն մէջ ընկղմած բոլոր իմ խորհուրդներով և իղձերով, լաւ կատարեմ ամէն պարտքերս. և զուարթ սրտով միշտ ծառայեմ Յիսուսի, մանաւանդ այսօր։

ԱՂՕԹՔ

Առ սուրբ սիրտն Յիսուսի.

Ինչուան ո՞ւր հասաւ քու անհուն գթութիւնդ, Փրկիչ իմ՝ ամենասիրելիդ Յիսուս։ Անգին

արեամբդ ու մարմնովդ երկնային սեղան մը պարգևեցիր ինձ, զքեզ բոլորովին ինծի տալու համար։ Ո՞վ զքեզ ստիպեց այս աստիճան սիրոյ, բայց եթէ քու անբաւ սէրդ։ Ո՛վ երկրպագելի սիրտ Փրկչին իմոյ Յիսուսի, վառարան մշտավառ աստուածային սիրոյն, ընդունէ՛ հոգիս ամենասուրբ ձեռքերուդ մէջ, որպէս զի այն սիրոյ դպրոցին մէջ սորվիմ սիրել նորէն այն Աստուածն, որ հրաշալի նշաններ տուած է ինձ իր սիրոյն. Ամէն։

100 օրուան ներողութիւն շնորհուած է Պիոս Ը. սրբազան Պապէն։

Հինգ Փառք Հօր. աւելի Փառք Հօրին պէտք է կրկնել. Ո՛վ քաղցրագութ սիրտ Յիսուսիս, ի սէր քոյին վառեա և գիս։

ԵՕԹՆ ՆՈՒԻԷՐՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԳԻՆ ԱՐԵԱՆ

300 *օրուան ներողութիւն կ'առնու ամէն անգամ ըսողը, և լիակատար՝ ամիս մը ըսողը։*

Ա. Ո՛վ Հայր յաւիտենական, *ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արդիւնքը, որ քու սիրելի Որդիդ է և իմ աստուածային Փրկիչս, սիրելի մօրս սուրբ եկեղեցւոյ տարածման ու փառաւորութեան համար, և անոր երևելի գլխոյն՝ Յիսուսի փոխանորդին կենաց և յաջողութեան համար, նոյնպէս*

եկեղեցական իշխանաւորաց, եպիսկոպոսաց, հոգւոց հովիւներուն և ամէն սրբութեան պաշտօնէից համար։ Փառք Հօր։ Օրհնեալ և բարեբանեալ ըլլայ միշտ Յիսուս, որ իւր արեամբն զմեզ փրկեց։

Բ. Ո՛վ Հայր յաւիտենական, *ես կը մատուցանեմ Յիսուսի պաշտուական արեան արդիւնքը, որ քու սիրելի Որդիդ է և իմ աստուածային Փրկիչս, թագաւորաց և ուղղափառ իշխանաց խաղաղութիւն և միաբանութիւն պարգևելու, սուրբ հաւատոյ թշնամեաց ճնշուելուն և քրիստոնէից երջանկութեան համար։* Փառք Հօր. և այլն։

Գ. Ո՛վ Հայր յաւիտենական, *ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արդիւնքը, որ քու սիրելի Որդիդ է և իմ աստուածային Փրկիչս, անհաւատները լուսաւորելու, հերետի-*

կոսնելը դարձնելու և մեղաւո-
րաց ալ դարձ տալու համար։
Փառք Հօր. և այլն։

Դ. Ո՛վ Հայր յաւիտենական,
ես կը մատուցանեմ Յիսուսի
պատուական արեան արդիւնքը,
որ քու սիրելի Որդիդ է և իմ
աստուածային Փրկիչս, ամենուն
համար՝ պարտական եմ և կ'ու-
զես որ աղօթեմ։ Փառք Հօր։

Ե. Ո՛վ Հայր յաւիտենական,
ես կը մատուցանեմ Յիսուսի
պատուական արեան արդիւնքը,
որ քու սիրելի Որդիդ է և իմ
աստուածային Փրկիչս, այս օ-
րուան ամէն մեռնողներուն հա-
մար, որպէս զի փրկես դժոխոց
պատժէն և ընդունիս քու փա-
ռացդ ժառանգութեան մէջ։
Փառք Հօր։

Զ. Ո՛վ Հայր յաւիտենական,
ես կը մատուցանեմ Յիսուսի
պատուական արեան արդիւնքը,
որ քու սիրելի Որդիդ է և իմ

աստուածային Փրկիչս, անոնց
համար՝ որ այս անգին գանձը
կը սիրեն, և ինձ հետ երկրպա-
գութեամբ կը պատուեն զնոյն,
և կ'աշխատին անոր Ջերմեռան-
դութիւնը տարածելու։ Փառք
Հօր։

Է. Ո՛վ Հայր յաւիտենական,
ես կը մատուցանեմ Յիսուսի
պատուական արեան արդիւնքը,
որ քու սիրելի Որդիդ է և իմ
աստուածային Փրկիչս, իմ ա-
մէն հոգևոր և ժամանակաւոր
պիտոյից համար, քաւարանի
հոգւոց օգնութեան համար, և
աւելի անոնց՝ որ մեծապէս Ջեր-
մեռանդ եղեր են Յիսուսի սուրբ
արեան՝ որ մեր փրկութեան գինն
է և սուրբ Աստուածածնայ ե-
թը խոցին։ Փառք Հօր։

Օրհնեալ ըլլայ արիւնն Յի-
սուսի. այժմ և յաւիտեանս յա-
ւիտենից. Ամէն։

ԱՂՕԹՔ

Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ

Առ սուրբ Հոգին.

Ե՛կ արդ, ով աստուածային Ս. Հոգի, մխիթարութիւն սըրտից և թեթևութիւն ի նեղութեան: Ե՛կ, ով սրբութիւն մեղաւորաց. վարդապետ խոնարհաց, հայր գթած՝ որբոց, ամրութիւն տկարաց և քաջալերութիւն աղքատաց: Քու չնորհացդ զօրութեամբ հոգւոյս խորերը թափանցէ, ձեռք տուր տկարութեանս քու ամենազօր ձեռօքդ, վառէ գաղջութիւնս քու սուրբ սիրովդ, փրկաւէտ կերպով խոցէ սիրտս քու ամենաքաղցր գըթութեանդ նետով, տուր ինձ ճաշակել երկնաւոր քաղցրութեանդ

մէկ կաթիլը, որպէս զի ասկէ վերջ զգուիմ ամէն զգայական զուարճութիւններէ և միայն հոգւոյ ուրախութիւնները վայելեմ. Ամէն:

Եօթը Փառք Հօր, որպէս զի Հոգին Սուրբ իւր շնորհքները մեզի պարգևէ:

ՀԱՄԱՌՕՏ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ի պատիւ ցաւագին սրտին

Մարիամայ.

Ա. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն վշտաց համար՝ որ քու փափուկ սիրտդ կրեց Սիմէոն Ծերունւոյն մարգարէութենէն։ Սիրեցեալ մայր՝ այսպէս ցաւագին սրտիդ համար՝ տուր ինձ խոնարհութեան առաքինութիւնն և Աստուծոյ սուրբ վախը։ Ողջոյն քեզ։

Բ. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն վշտաց համար, որ քու զգայուն սիրտդ կրեց Եգիպտոս փախչելուդ ու բնակութեանդ միջոց։ Սիրեցեալ մայր, այդ ցաւագին սրտիդ համար՝ տուր ինձ առատաձեռնութեան առաքինութիւնը, մանաւանդ աղքատաց, և կարեկցութեան չնորհքը։ Ողջոյն քեզ։

Գ. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն վշտացդ համար, որ դիւրագորով սիրտդ կրեց՝ զՅիսուս սիրական Որդիդ կորսնցուցած ատենդ։ Սիրեցեալ մայր, այդ խռոված սրտիդ համար, տուր ինձ մաքրութեան առաքինութիւնը, և գիտութեան չնորհքը։ Ողջոյն քեզ։

Դ. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն կսկծիդ համար, որ զգաց քու մայրենի սիրտդ՝ երբոր հանդիպեցար Յիսուսի՝ որ խաչը ուսը կ'երթար։

Սիրեցեալ մայր, քու ազնիւ սըրտիդ համար՝ որ այդչափ վիրաւորեցար, տուր ինձ համբերութեան առաքինութիւնը, և ապրիլութեան չնորհքը: Ողջոյն քեզ:

Ե. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն մարտիրոսութեանդ համար, որ քու մեծ սիրտդ կրեց Յիսուսի հոգեվարութեան ներկայ եղած ժամանակդ: Սիրեցեալ մայր, քու այդպէս մարտիրոսացած սրտիդ համար լլայ, տուր ինձ զգաստութեան առաքինութիւնը, և խոհականութեան չնորհքը: Ողջոյն քեզ:

Զ. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն խոցիդ համար, որ քու գթած սիրտդ զգաց՝ երբոր տիգաւ խոցեցին զՅիսուս և իւր ամենասիրելի սիրտը վիրաւորեցին: Սիրեցեալ մայր, քու սրտիդ համար որ այնպէս վիրաւորեցար՝ տուր ինձ եղբայրական

սէր, և հանճարեղ ըլլալու չնորհքը: Ողջոյն քեզ:

Է. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ցաւագին Մարիամ, այն կսկծին համար, որ քու սիրելի սիրտդ զգաց՝ Յիսուսի թաղման ժամանակ: Սիրեցեալ մայր, քու սրբազան սրտիդ համար՝ որ չափազանց կսկիծներով լեցուեցար, տուր ինձ Ջանասիրութեան առաքինութիւնը, և իմաստութեան չնորհքը: Ողջոյն քեզ:

Մայր ցաւագին, աղաչեմ վասն մեր, զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Եօթը Ողջոյն զուրցէ, ամէն Ողջունեն ետքն աւելցնելով. Արքունի մայր, Յիսուսի վերքերը արտիս մէջ տպաւորէ, 300 օրուան ներողութիւն կ'առնու անգամ մը ըսողը, իսկ ամիս մը ըսողը՝ լիակատար:

Ա Ղ Օ Թ Ք

Առ ամենասուրբ Կոյսն.

Կարելի՞ է արդեօք, թագուհի սուրբ, սիրեցեալ մայր իմ Մարիամ, որ քեզմէ չնորհք մը չընդունիմ։ Դու չե՞ս, ով տիրուհի, որ Աստուծոյ մայր եղար և թագուհի երկնից, որպէս զի օգնես խեղճերուն, թշուառաց, տառապելոց և ամենէն մեծ մեղաւորաց։ Դու չե՞ս փաստաբան և ապաստան խեղճ մեղաւորաց, ով ամենասուրբ մայր։ Ուրեմն հաւատամ որ չես ուզեր ու պիտի չուզես օգնել ինձ և ազատել զիս ամէն նեղութիւններէս, խեղճութիւններէս ու տառապանքներէս և զիս իմ անօրէնութեանս անդունդին մէջ պիտի թողուս։ Ո՜րչափ չնորհք, ո՛րչափ գթու-

թիւն և հրաշքներ ըրեր ես, կ'ընես ու պիտի ընես ինչուան վերջին դատաստանին ահաւոր օրը, ով ամենագթած մայր իմ Մարիամ։ Որչափները մեծամեծ վտանգներէ փրկեր ես. որչափները մահուընէ ազատեր ես. որչափներուն յարութիւն պարգեւեր ես. որչափները դժոխքէն ազատեր ես, ապա ի՞նչպէս հաւատամ որ չես ուզեր օգնել ու ազատել զիս։ Ա՜հ, թագուհի ամենասուրբ, ի՞նչպէս հաւատամ թէ կ'ուզես՝ որ այս ձայնն ըլլայ, թէ կը ձգես ու չես օգներ խեղճերու, նեղելոց ու տառապեալ մեղաւորաց։ Ո՜հ, չըլլայ թէ այս բանս ըսուի, թէ խեղճ ողորմելի, նեղեալ և յետին տառապանաց մէջ, և ահաւոր փորձութիւններէ պաշարուածին մէկը՝ անգամ մը անհամար արցունքով և ցաւով սրտի աղաչեց զքեզ, և չուզեցիր ազատել զինքը,

և ոչ իսկ ձայնին լսել: Ո՜հ, ա-
մենասուրբ կոյս, ինչպէս հաւա-
տամ թէ կ'ուզես որ լսուի, թէ
փոխուեր ես և անգթութեամբ
հետս կը վարուիս, և թէ ալ
ասկէ վերջը մայր ողորմութեան
և գանձարան ամենայն չնորհաց
չես: Լսես պիտի թէ՛ թող լսեն
որ չուզեց ոչ մտիկ ընել, ոչ ա-
զատել՝ վասն զի ապերախտ ու
մեղաւոր էր խնդրողն: Իրաւ է
և ամենաիրաւ, ով ամենագթած
մայր իմ Մարիամ, որ ապերախտ
եմ և ամպարիշտ և ամենէն գէշ
մարդն որ աշխարհ եկեր է և կամ
ասկից ետքը պիտի գայ. բայց
դու Տիրուհի և մայր գթութեան,
ըսէ, որո՞ւն վրայ աւելի պէտք
է գութ ցուցնես՝ թէ՛ ոչ մեղա-
ւորաց: Մանաւանդ թէ այս բա-
նիս համար՝ որ ապերախտ ու
ամպարիշտ գտնուեր եմ և Ո-
դիդ անհուն կերպով վշտացու-
ցեր եմ, պէտք չէ՞ աղաչես ինձ

համար և օգնես ինձ, և մայ-
րենի և ողորմած պաշտպանու-
թեանդ տակ զիս առնուս: Ա՜հ,
մայր իմ գթած, պիտի երթամ
ասկէ, առանց քեզմէ խնդիրքս
ընդունելու: Թողո՞ւս պիտի, որ
երթամ առջևէդ՝ առանց մխի-
թարելու զիս և ազատելու այս
ահաւոր նեղութիւններէս և ար-
տաքին ու ներքին փորձութիւն-
ներէս. ուրեմն պիտի վռնտե՞ս զիս
երեսէդ առանց առատաձեռնու-
թեամբդ ամէն չնորհք ամէն գը-
թութիւն և ողորմութիւն ինձ հա-
մար առնելու, որոնց պէտք ու-
նիմ: Է՜հ, չըլլայ երբէք այս բանս.
քու և Յիսուս որդւոյդ պատուոյն
համար կ'աղաչեմ, իրեն վիրաց,
թափած անգին արեան, սիրելի
և ողորմած սրտին, իրեն ձաղա-
նաց, փշով պսակուելուն, ցաւա-
գին խաչելութեան, խաչին վը-
րայի հոգեվարութեանն ու մեռ-
նելուն համար ըլլայ:

Ազատէ զիս, մայր գթութեան, ոես տառապանքներս որ անանկ ծանր են՝ որ ալ չեմ կրնար վերցնել, ազատէ՛ զիս, Մարիամ, ազատէ զիս, մայր իմ, դուստր հնազանդ՝ երկնաւոր Հօր, գերագոյն մայր յաւիտենական Բանին մարմնացելոյ, հարսն ամենասքուր՝ Հոգւոյն Սրբոյ, կենդանի տաճար ամենասուրբ Երրորդութեան, թագուհի կուսաց, մեծափառ Տիրուհի երկնի և երկրի, մայր գթութեան, ապաստան ապահով, փաստաբան և նեցուկ Ադամայ տառապեալ խեղճ և մեղաւոր որդւոց, գանձապետ ամենայն շնորհաց: Արդէն իսկ գիտես, որ թէպէտ ուշանաս ազատել զիս, օրէ օր վըստահութիւնս կ'աւելնայ վրադ, անոր համար կը յորդորեմ բոլոր արարածները շնորհակալ ըլլալ քեզ այժմ և միշտ՝ իբրև արդէն թէ ինձ թէ ուրիշներու

համար առած ըլլայիր ամէն հոգևոր և ժամանակաւոր շնորհքները, ի մեծ փառս Աստուծոյ, և ի կատարեալ սրբութիւն իմ անձիս և ազգականաց և մտերմաց յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ա Ղ Օ Թ Ք

Առ Միքայէլ հրեշտակապետ.

Փառաւորեալ սուրբ հրեշտակապետ Միքայէլ, պաշտպանէ՛ զիս այս աշխարհիս մէջ, և մահուանս ատեն սատանային որոգայթներէն. աւ ինձ համար շնորհք խոնարհութեան, որպէս զի հպարտութիւնը զիս դժոխք չտանի:

Ա Ղ Օ Թ Ք

Առ պահապան հրեշտակն.

Սուրբ հրեշտակդ իմ պահապան՝ ճշմարիտ բարեկամս, ազատէ զիս զԱստուած վշտացնելու վտանգներէն։ Ո՛հ գթած օգնէ ինձ և պատրաստէ զիս արժանաւոր կերպով ընդունելու սուրբ Հաղորդութիւնը։ Ընդունէ՛ ինձ համար չնորհք Հաւատոյ, Յուսոյ, Սիրոյ և խոնարհութեան սրտի, որպէս զի գամ քեզի հետ մէկտեղ օրհնեմ ու վայելեմ յերկինս զԱստուած։

ՅԱՒՔ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՔ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՍԵՓԱՅ.

Ա. Ցաւակից կ'ըլլամ քեզ, ով փառաւորեալ սուրբ Յովսէփ, մաքուր փեսայ սրբոյ կուսին Մարիամու. ինչպէս որ սաստիկ եղաւ սրտիդ հոգն ու նեղութիւնն երբոր կասկածի մէջ ինկար արձակելու համար քու անարատ հարսդ, ասանկ ալ անպատմելի եղաւ ուրախութիւնդ՝ երբոր հրեշտակն յայտնեց քեզ մարդեղութեան գերագոյն խորհուրդը, կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, աղաչելով զքեզ՝ որ ընդունիս ինձ համար սուրբ մահ։ Փառք Հօր։ Սուրբ Յովսէփ, հոգեվարքիս ատեն քովս գտնուէ Յիսուսի ու Աստուածածնայ հետ։

Բ. Յաւակից կ'ըլլամ քեզ, ով փառաւորեալ սուրբ Յովսէփ, մաքուր փեսայ սրբոյ կուսին Մարիամու, այն ցաւոցն համար՝ որ քաշեցիր այնչափ աղքատութեամբ ծնած տեսնելով զմանկացեալ Յիսուս: Բայց կը միխիթարուիմ այն ուրախութեանդ համար, որ ունեցար երբոր լսեցիր հրեշտակաց բազմութեան երգը, ու երբ տեսար այն ամենապայծառ գիշերուան փառքը. կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կ'աղաչեմ որ ընդունիս ինձ համար չնորհք, որ այս աշխարհիս վրայ Յիսուսի սիրոյն համար վշտաց համբերելէս վերջ, գամ ընդ քեզ վայելեմ յիրկինս: Փառք Հօր. Սուրբ Յովսէփ:

Գ. Յաւակից կ'ըլլամ քեզ, ով մեծ նահապետ սուրբ Յովսէփ, այն ցաւոց համար՝ զոր զգացիր Սիմէոն ծերունւոյն մարգարէութենէն՝ լսելով Յիսուսի ու Մարիամու կրելիքները, բայց ուրախութեամբ լեցուեցար այնչափ բազմութեան փրկութիւնը լսելով, կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կ'աղաչեմ որ առնուս ինձ համար չնորհք մինչև ի մահ յարատևելու բարութեան մէջ: Փառք Հօր. Սուրբ Յովսէփ:

Դ. Յաւակից կ'ըլլամ քեզ, հաւատարիմ պահապան Յիսուսի Ս. Յովսէփ, այն զգացած ցաւոդ համար՝ երբ հարկ եղաւ որ յԵգիպտոս փախչիս. կը միխիթարուիմ այն ուրախութեամբդ որ ունեցաւ սիրտդ՝ տեսնելով Եգիպտացւոց կուռքերուն կործանիլը. կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կ'աղաչեմ որ ընդունիս ինձ համար չնորհք համակերպութեան Աստուծոյ կամաց

և այս աշխարհիս բարիքներէն հրաժարելու։ Փառք Հօր. Սուրբ Յովհան։

Ե. Յաւակից կ'ըլլամ քեզ հրեշտակ ի յերկրէ, սիրեցեալ սուրբ Յովսէփ, այն ցաւոց համար՝ որ սիրտդ կրեց Եգիպտոսէն դառնալու ատենդ Արքեղայոսին վախէն. բայց հրեշտակէն ապահովցած Յիսուսի ու Մարիամայ հետ Նազարէթ դարձար մեծ ուրախութեամբ. կ'օրհնեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կը խնդրեմ քեզմէ՝ որ ընդունիս ինձ համար խաղաղութիւն խղճի թէ՛ բոլոր կենացս մէջ և թէ ետ առաւել մահուան վայրկենիս։ Փառք Հօր. Սուրբ Յովհան։

Զ. Յաւակից կ'ըլլամ քեզ օրինակ ամենայն սրբութեան՝ նահապետ փառաւորեալ սուրբ Յովսէփ, այն ցաւոց համար՝ որ խոցեց սիրտդ երբ Յիսուս անեղրևութեացաւ, բայց մեծապէս ու-

րախացար երբոր երեք օրէն տաճարին մէջ գինքը գտար. կ'օրհնեմ ու կը փառաւորեմ ամենասուրբ Երրորդութիւնը, և կ'աղաչեմ քեզի՝ ընդունէ՛ ինձ համար աւելի մահ՝ քան թէ Աստուծոյ չնորհքը անգամ մ'ալ կորսնցնեմ։ Բայց թէ որ մեծ դժբաղդութեամբ մը կորսնցնելու ալ ըլլամ, տուր որ բարի ու սուրբ խոստովանութեամբ մը չուտով նորէն ձեռք ձգեմ, որպէս զի ետքը քեզի հետ յերկինս վայելեմ։ Փառք Հօր. Սուրբ Յովհան։

Է. Խոնարհութեամբ առջեւդ ինկած, ո՛վ ամենամաքուր փեսայ աստուածամօր կուսին Մարիամու, կը հիանամ գերազանց սրբութիւնդ տեսնելով, դու, ո՛վ սուրբ Յովսէփ, չուշան ես ամենայնապայծառ, դու ես պահապան այն տիրոջ՝ որ յերկնից յերկիր իջաւ յանձն առնելով մարդ ըլ-

լալ և իմ փրկիչս։ Կ'ուրախանամ տեսնելով զքեզ այսչափ ամենաստուրբ երրորդութենէն պատուեալ և սիրելի եղած։ Բոլոր սրտովս կը սիրեմ զքեզ, զիս քեզ կ'ընծայեմ, ու քեզ կը յանձնեմ։ Դու իմ փաստաբանս եղիր հրեշտակաց թագուհւոյն և քու անարատ հարսիդ առջև. ընդունէ՛ անոր Որդիէն թողութիւն իմ ամէն մեղացս. քովս գտնուէ մահուան վայրկենիս և առաջնորդէ՛ ինձ երկնից արքայութիւնը գալու վայելելու. Ամէն։

Աղաչեա վասն մեր, սուրբ հայր Յովսէփ, զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի։

Պիոս Թ պապը 100 օրուան ներողութիւն շնորհեց անոնց՝ որ հիւանդութեան առենին այս աղօթքը կ'ընեն, իսկ չորեքշաբթի օրն ընողին 300 օրուան, և լիակատար՝ ամիս մը և սրբոյն ոտնին ընողին. քաւարանի հոգւոց դիտմամբ ալ կրնայ ըլլալ։

Ա Ղ Օ Թ Ք

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՍ

Պետրոս և Պօղոս.

Ո՛վ փառաւորեալ գլուխ առաքելոց Պետրոս և Պօղոս, մեծաւ ջերմեռանդութեամբ կ'աղաչենք ձեզ, որ ընդունիք մեզի համար ի Հոգւոյն սրբոյ կենդանի հաւատք, հաստատուն յոյս, և կատարեալ սէր առ Աստուած և առ մարդիկ։ Ձեզ կը յանձնենք սուրբ եկեղեցին և անոր գլուխը, և հոգւոց զարձը, որպէս զի շուտով ըլլայ մի հօտ և մի հովիւ։

ԱՂՕԹՔ

Առ Ս. Ստանիսլաւոս.

Ծանր նեղութեանց, և ամենակա-
րևոր պիտոյից մէջ, և մանաւանդ
խաւտացեալ մեղաւորները դարձնելու
համար շատ օգտակար է սրբոյն Ստա-
նիսլաւոսի պաշտպանութիւնը խնդրել:
Պիոս Է և Լևոն ԺԱ քահանայա-
պետները՝ որպէս զի աւելի յորդորեն
հաւատացեալները այս սրբոյս ջեր-
մեռանդութեանը՝ ներողութիւններ ըն-
ծին,

Հայր երկնաւոր, երկնից ար-
քունեացդ և ամէն արարածոց
հետ այժմ և միշտ և յաւիտեանս
քեզ կը մատուցանենք Յիսուսի
անգին արիւնն ի չնորհակալու-
թիւն այնչափ բարեաց՝ որ պար-
գևեր ես քու հաւատարիմ ծա-

ռայիդ և մեր պաշտպանին սըր-
բոյն Ստանիսլաւոսի, և մանա-
ւանդ այն կարողութեանն հա-
մար՝ որով զօրացուցիր զինքը
և որով միշտ արիաբար յաղթող
եղաւ ամէն աներևոյթ թշնա-
մեաց. անանկ չնորհակալ կ'ըլ-
լանք իբրև թէ մեզի ամենուս
պարգևած ըլլայիր բոլոր այս
չնորհքները: Փառք Հօր:

Բան յաւիտենական մարդ ե-
ղած, բոլոր երկնից արքունեաց
և ամէն արարածոց հետ՝ այժմ
և միշտ և յաւիտեանս քեզ կը
մատուցանենք քու հարսիդ սուրբ
եկեղեցւոյ արդիւնքները քու ան-
բաւ արդեանցդ հետ խառնած՝ ի
չնորհակալութիւն այնչափ բա-
րեաց՝ որ պարգևեցիր քու հաւա-
տարիմ ծառայիդ և մեր պաշտ-
պանին սրբոյն Ստանիսլաւոսի,
և մասնաւորապէս այն իմաս-
տութեանն համար՝ որով լուսա-
ւորեցիր զինքը, որպէս զի սի-

րով քու սրբազան վարքիդ նմանի, որով եղաւ քու կատարեալ պատկերդ, որ մեր սիրոյն համար խաչուեցար. այնպէս չնորհակալ կ'ըլլանք՝ իբրև թէ մեզի ամենուս չնորհած ըլլայիր նոյն պարգևները: Փառք Հօր:

Սուրբ Հոգի, բոլոր երկնից արքունեաց և բոլոր արարածոց հետ՝ այժմ և միշտ և յաւիտեանս քեզ կը մատուցանենք Յիսուսի տեառն մերոյ անհուն արդիւնքն ի չնորհակալութիւն այնչափ բարեաց՝ որ պարգևեցիր քու հաւատարիմ ծառայիդ և մեր պաշտպանին սրբոյն Ստանիսլաւոսի, մասնաւորապէս այն սիրոյն համար՝ որով զինքը վառեցիր, և աշխարհիս վրայ քու սիրովդ ապրելով ժառանգեց երկնից արքայութիւնը կատարեալ սիրով միշտ զքեզ սիրելու. այնպէս չնորհակալ կ'ըլլանք՝ իբրև թէ մեզի ամենուս չնորհած ըլլայիր

նոյն պարգևները: Փառք Հօր:

Ո՛վ կատարեալ հետևող Յիսուսի, ճշմարիտ ջերմեռանդ մեր մօրը Աստուածածնայ, և մեր փառաւորեալ փաստաբանը սուրբ Ստանիսլաւոս, թէպէտ անարժան ենք մենք առ քեզ դիմելու, բայց քու կարեկցութեանդ վրայ վստահացած՝ այժմ և միշտ կ'աղաչենք զքեզ, որ սուրբ Աստուածածնայ արդեամբքն և միջնորդութեամբ, բոլոր հրեշտակաց և սրբոց, և մանաւանդ Յիսուսի Տեառն մերոյ անհուն արդեամբը և քու ընդունելի միջնորդութեամբդ ընդունիս մեզի համար ամենայն չնորհք և կարևոր պարգևները, որպէս զի ամենքնիս սուրբ և կատարեալ ըլլանք ինչպէս Հայրն երկնաւոր, և Հաղորդութեան գերագոյն պարգեւէն օգուտ քաղենք, որով կարենանք գալ երգել երկինքն ի յաւիտեանս Աստուծոյ գերագոյն

ողորմութիւնը: Հայր մեր: Ողջոյն: Փառք Հօր:

Աղաչեա վասն մեր սուրբ Ստանիսլաւոս, զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:



ԱՂՕԹՔ

Առ սուրբ Լուիձի Կոնձակա.

Ո՛վ սուրբ Լուիճի, հրեշտակային վարքով զարդարեալ, ես քու անարժան ջերմեռանդդ՝ քեզ կը յանձնեմ մասնաւոր կերպով հոգւոյս ու մարմնոյս անբիծ մաքրութիւնը: Կ՝աղաչեմ քու հրեշտակային մաքրութեանդ համար՝ յանձնէ զիս անարատ գառինն Յիսուսի, և իւր ամենասուրբ մօր՝ որ է կոյս կուսանաց, և պահէ զիս ամէն ծանր մեղքերէ: Մի թողուր՝ որ թեթև իսկ անմաքրութեան արատ մ՝ըլլայ վըրաս. այլ երբ փորձութեանց մէջ զիս կը տեսնես կամ մեղանչելու վտանգի մէջ, հեռացուր սրտէս ամէն երկրաւոր խորհուրդներն, և յաւիտենականու-

թեան ու Յիսուսի խաչեցելոյ յիշատակը սիրտս զարթուցանելով՝ տպաւորէ՛ սրտիս մէջ Աստուծոյ սուրբ վախը ու վառէ զիս Աստուծոյ սիրով, որպէս զի քեզի նմանելով երկրիս վրայ՝ արժանի ըլլամ քեզի հետ վայելել զԱստուած յերկինս. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն։

100 օրուան ներողութիւն ունի։

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՎԱՐԴԱՐԱՆԻ

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Երկուշաբթի և Հինգշաբթի

Առաջին խորհուրդ ուրախութեանն է՝ թէ ի՛նչպէս սուրբ Աստուածածին Գաբրիէլ հրեշտակէն աւետիս ընդունեցաւ՝ թէ զՅիսուս պիտի ծնանի։ — Պէտք է խնդրել Ս. Աստուածածնէն՝ որ մեզ համար Յիսուսի սէրն ընդունի։

Երկրորդը՝ թէ ի՛նչպէս սուրբ Աստուածածին՝ երբոր լսեց Ս. Եղիսաբեթի յղի ըլլալը մէկէն գնաց առնա, և երեք ամիս անոր տունը կեցաւ։ — Պէտք է խնդրել՝ որ մեզի ալ այցելութիւն ընէ, և իր սէրը մեզի պարգևէ։

Երրորդը՝ թէ ի՛նչպէս ծննդեան ժամանակը հասած ըլլալով Աստուածածին ծնաւ զՓրկիչն մեր Բեթղեհեմի

մէջ կէս գիշերին և դրաւ զինքը խան. ձարուրի մէջ։ — Խնդրելու է արհամարհութիւն աշխարհի։

Չորրորդը՝ թէ ի՛նչպէս Աստուածածին գՅիսուս մեր Տէրը տաճար տարաւ, և Սիմէոն ծերունւոյն գիրկը յանձնեց։ — Խնդրելու է խղճի մաքրութիւն։

Հինգերորդը՝ թէ ի՛նչպէս Աստուածածին կորանցնելով Աստուածորդին՝ երեք օր փնտռելէն վերջը՝ տաճարին մէջ գտաւ զինքը, որ քահանայից հետ կը վիճէր, դեռ տասնըմէկ տարեկան։ — Խնդրելու է շնորհք շուտով խոստովանելու՝ թէ որ մեղաց մէջ իյնանք։

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՅԱԽՈՑ

Երեքշաբթի և Ուրբաթ.

Առաջին ցաւոց խորհուրդն է՝ թէ ի՛նչպէս Յիսուս պարտիզին մէջ ազօթելով արիւն քրտնեցաւ։ — Խնդրելու է շնորհք ազօթից, և ցաւ՝ գործած մեղքերուն համար։

Երկրորդը՝ Յիսուսի Պիղատոսին պալատը ծեծուիլը։ — Աղքութիւն, և մեռուցումն զգայարանաց։

Երրորդը՝ թէ ի՛նչպէս Յիսուս սայրասուր փուշերով պսակուեցաւ։ — Խոնարհութիւն ամենուն հետ։

Չորրորդը՝ թէ ի՛նչպէս Յիսուս մահուան դատապարտուեցաւ, և առաւելագոյն նախատանաց ու ցաւոց համար՝ խաչափայտը կռնակը ծանրաբեռնեցին։ — Սէր խաչի։

Հինգերորդը՝ թէ ի՛նչպէս Յիսուս Գողգոթա լերան գլուխն ելլելով՝ խաչին վրայ գամուեցաւ սուր բևեռներով, ուր հոգին աւանդեց ցաւագին մօրն առջև։ — Յիշել Յիսուսի և Աստուածածնայ քաշածներն, և ջանալ մեռնիլ աշխարհի համար։

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՓԱՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Զորեքշաբթի, Շաբաթ և Կիրակի.

Առաջին փառաւորութեան խորհուրդն է՝ թէ ի՛նչպէս Յիսուս իր չարչարուելէն ու մեռնելէն երեք օր ետքը՝ փառաւոր ու յաղթական կերպով յարութիւն առաւ — Սուրբ կենօք կեանդանանալ։

Երկրորդը՝ թէ ի՛նչպէս Յիսուս յարութիւն առնելէն քառասուն օր վերջը՝ հրաշալի յաղթանակաւ երկինք վերացաւ, իր ամենասուրբ մօր և բոլոր աշակերտաց առջև, — փափաք աշխարհէ բաժնուելու և արքայութեան հասնելու։

Երրորդը՝ թէ ի՛նչպէս Յիսուս իր Հօրն աջակողմը նստելով դրկեց ըզ-Սուրբ Հոգին վերնատունը, ուր ժողովուեր էին առաքեալք Աստուածածնայ հետ, — խնդրել Հոգւոյն Սրբոյ շնորհքները։

Չորրորդը՝ թէ ի՛նչպէս սուրբ Կոյսը Յիսուսի համբարձմանէն քանի մը տարի ետքը կնքեց կեանքը և հրեշտակներուն հետ երկինք վերացաւ — Բարի մահ։

Հինգերորդը՝ թէ ի՛նչպէս սուրբ Կոյսը պսակուեցաւ երկինք իր Որդիէն, և միանգամայն մտածելու է ամենայն սրբոց փառքը։ — Յարատեւութիւն ի բարին՝ յաւիտենական փառաց հասնելու համար։

ՊԱՂԱՏԱՆՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ

Տէր ողորմեա։
Քրիստոս ողորմեա։
Քրիստոս լուր մեզ։
Քրիստոս ունկնդիր մեզ։
Հայր երկնաւոր Աստուած, ո՛ղորմեա մեզ։
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեա մեզ։
Հոգի Սուրբ Աստուած, ողորմեա մեզ։
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողորմեա մեզ։

Սրբուհի Մարիամ Աղաչեա վասն մեր։
Սուրբ Աստուածածին, Աղաչ.
Սուրբ կոյս կուսանաց, Աղաչ.
Մայր Քրիստոսի, Աղաչ.
Մայր Աստուածային շնորհաց, Աղաչ.
Մայր մաքրութեան, Աղաչ.
Մայր գթասրտութեան, Աղաչ.
Մայր անարատ, Աղաչ.
Մայր անբիծ, Աղաչ.
Մայր սիրելի, Աղաչ.
Մայր սքանչելի, Աղաչ.
Մայր արարչին, Աղաչ.
Մայր Փրկչին, Աղաչ.
Կոյս իմաստուն, Աղաչ.
Կոյս գերյարգոյ, Աղաչ.
Կոյս գերահռչակ, Աղաչ.
Կոյս կարող, Աղաչ.
Կոյս բարեգութ Աղաչ.
Կոյս հաւատարիմ, Աղաչ.
Հայելի Արդարութեան, Աղաչ.
Աթոռ իմաստութեան, Աղաչ.

Պատճառ մերոյ խնդուԼթեան. Աղաչ.
Անօթ հոգևորականն. Աղաչ.
Անօթ պատուականն. Աղաչ.
Անօթ չքեղ եւանդեան. Աղաչ.
Վայրդ խորհրդական. Աղաչ.
Աշտարակ դաւթեան. Աղաչ.
Աշտարակ փղոսկրեայ. Աղաչ.
Տաճար ոսկեղէն. Աղաչ.
Տապանակ ուխտի. Աղաչ.
Դուռն երկնից. Աղաչ.
Աստղ առաւօտեան. Աղաչ.
Բժշկութիւն հիւանդաց. Աղաչ.
Ապաստան մեղաւորաց. Աղաչ.
Մխիթար վշտացելոց. Աղաչ.
Օգնական Քրիստոնէից. Աղաչ.
Թագուհի հրեշտակաց. Աղաչ.
Թագուհի նահապետաց. Աղաչ.
Թագուհի մարգարէից. Աղաչ.
Թագուհի առաքելոց. Աղաչ.
Թագուհի մարտիրոսաց. Աղաչ.
Թագուհի խոստովանողաց. Աղաչ.
Թագուհի կուսանաց. Աղաչ.
Թագուհի ամենայն Սրբոց. Աղաչ.

Թագուհի զերծ ի սկզբնական մեղաց. Աղաչ.
Թագուհի խաղաղութեան. Աղաչ.
Պահպանիչ որդեգրաց. Աղաչ.
Գառն Աստուծոյ՝ որ բառնաս զմեղս աշխարհի. խնայեա ի մեզ Տէր։
Գառն Աստուծոյ՝ որ բառնաս զմեղս աշխարհի. Լուր մեզ Տէր։
Գառն Աստուծոյ՝ որ բառնաս զմեղս աշխարհի. Ողորմեա մեզ։
Քրիստոս լուր մեզ։
Քրիստոս ունկն դիր մեզ։

Ա Ղ Օ Թ Ք

Աստուած, որ անճառելի ողորմութեամբ քո՝ ոչ միայն մարդ այլ և որդի մարդոյ լինել հաճեցար, և առ ի կուսէն ծնընդեամբ, անժամանակ, ծնունդդ Հօր ի յերկինս ընտրեցեր քեզ մայր ի յերկրի։ Տո՛ւր մեզ աղաչեմք սրտի մօտք փառաւորել գյիշատակ նորա, և հրաշափառ մայրութեան նորա լինել գովաբանողք, և խոնարհութեամբ հպատակ կալ նորին գերահրաշ մեծութեանն, որ զքեզ Հոգւով Սրբով յղացաւ, և կուսութեամբ ծնաւ. որում հնազանդ կացեր յերկրի, տէր մեր Յիսուս Քրիստոս, որ թագաւորես ի յերկինս ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն ի յաւիտեանս. Ամէն։

Երեք Փառք Հօր առ ամենասուրբ Երրորդութիւնն, երեք Ողջոյն քեզ առ սուրբ Աստուածածին, և Հրեշտակ Տեառն. Հայր մեր մը պաշտպան սուրբերուն. Հայր մեր մը քաւարանի հոգւոց համար։

Անկողին մտնելէն առաջ.

Շնորհակալ եղիր Աստուծմէ՝ առած շնորհքներուդ համար, ջննութիւն խըղճի մտաց ըրէ և զղջում, և ըսէ 11–13 երեսները դրուած Հաւատոյ, Յուսոյ, Սիրոյ և զղջման ներգործութիւնները։

ԱՂՕԹՔ

Բարի մահ ուսնելուց առաջ.

Անկողին երթալուդ ըսէ՝

Տէր իմ Յիսուս, Աստուած բարութեան, Հայր ողորմութեան, քու առջեդ կ'իյնամ խոնարհ սրտիւ, զղջմամբ և պատկառանօք, քեզ կը յանձնեմ իմ եղքի օրս և ինչ որ անոր ետևէն կու գայ։

Երբ ուսուըներս անշարժ ծնալով՝ ինձ իմացնեն, որ այս աշխարհի կեանքս լմննալու մօտիկ է, ողորմած Յիսուս խղճայ վըրաս։

Երբ ձեռուըներս դողդողալով, թմրելով ալ չկարենան խաչելութիւնը բռնել, և ականջս ձեռքէս իյնայ ցաւոց մահճիս վրայ, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ աչուըներս մթնցած, ու այլայլած մեռնելու վախէն՝ քու վրադ դարձնեն իրենց խեղճ ու կիսամեռ նայուածքը, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ շրթունքներս պաղած՝ դողդոջելով քու սուրբ անունդ վերջի անգամուն գուրցեն, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ երեսս դեղնած ու կապոյտցած քովի եղողներուս ցաւ ու վախ բերէ, մազերս ալ մահուան քրտինքով թրջած տընհուան գլխուս վրայ, մահուանս կուին գլխուս վրայ, մահուանս մօտիկնալը հասկցնելով, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ ականջներս գոցուելու ըլլան, մարդու խօսք չլսեն, այլ քու ձայնդ լսելու բացուին՝ որ

անդառնալի վճիռը պիտի տայ, որով պիտի որոշուի յաւիտենական վիճակս, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ միտքս տակնուվրայ եղած ահեղի ու զարհուրելի մտածմունքներով՝ մահաբեր տրտմութեան մէջ իյնայ, և հոգիս ալ ալէկոծեալ ըլլած յանցանքներուս համար, և քու արդարութեանդ վախէն խաւարային հրեշտակին հետ կոուելու՝ յուսահատութեան անդունդը չիյնալու համար, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ խեղճ սիրտս հիւանդութեանս ցաւերէն ճնշուած՝ մեռնելու վախով բռնուի, և յոգնի թշնամւոյս դէմ պատերազմելէն, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ վերջին արցունքս թափեմ՝ նշան մեռնելուս, քաւութեան զոհի տեղ ընդունէ որպէս զի իբրև ողջակէզ մ'ա-

պաշխարութեան՝ աւանդեմ հոգիս. և այն ահաւոր վայրկենին՝ ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ ազգականներս ու սիրելի բարեկամներս քովս շարուած՝ խղճան ցաւագին վիճակիս վրայ, և պաղատին առ քեզ ինձ համար, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ ամէն զգայարանքներս կորսնցնեմ, բոլոր աշխարհ աչքիս առջև աներևոյթ ըլլայ, ես ալ վերջի հոգեվարութեան մէջ և մահուան տագնապով տանջուիմ, տքամ, ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ սրտիս ետքի հառաչանքները բռնադատեն հոգիս մարմնէս ելլելու, ընդունէ իբրև նշան մը իմ կարօտիս՝ որ ունիմ առ քեզ գալու, և դու ողորմած Յիսուս խղճայ վրաս։

Երբ հոգիս մարմնէս բաժնուի և գմարմինս թողու դեղնած, պաղած, անկենդան, այս իմ

քայքայումս ընդունէ իբրև նըւէր մը, որ ես կ'ընծայեմ աստուածութեանդ, և այն աւեն ոդորման Յիսուս խղճայ վրաս։

Վերջապէս, երբ հոգիս երևնայ քու առջևդ, ու տեսնէ աստուածութեանդ անմահ փառքը, մի՛ ձգեր զիս քու երեսէդ. արժանի ըրէ՛ ոդորմութեան թևերդ տարածել ինձ, որպէս զի յաւիտեան երգեմ գովասանքդ. ոդորման Յիսուս խղճայ վրաս։



ԱՂՕԹՔ

Տէր Աստուած, որ մեզի մեռնելու վճիռ տալով՝ ծածկեցիր մեզմէ վայրկեանն ու ժամը, տուր որ կենացս ամէն օրը արդարութեամբ ու սրբութեամբ անցնելով՝ արժանի ըլլամ քեզ սիրելի եղած ելլել այս աշխարհէս, արդեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ կեայ և թագաւորէ ընդ քեզ և ընդ Հոգւոյդ Սրբոյ. Ամէն։

100 օրուան ներողութիւն մէկ անգամ ըսողին. լիակատար ներողութիւն՝ ամիս մը ամբողջ ըսողին։

Հայր յաւիտենական, քեզ կը մատուցանեմ Յիսուսի անգին արիւնն ի պէտս եկեղեցւոյ։

100 օրուան ներողութիւն ունի իւրաքանչիւր անգամ ըսողը։

ՀԱՄԱՌՕՏ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ո՞վ ստեղծեր է գքեզ ու աշխարհ դրեր։

Պ. Աստուած։

Հ. Աստուած ո՞վ է։

Պ. Տէր և արարիչ երկնի և երկրի։

Հ. Ի՞նչ վախճանաւ ստեղծեր է գքեզ Աստուած։

Պ. Այս աշխարհիս մէջ գինքը ճանչնալու, սիրելու և ծառայելու համար, և յետոյ արքայութեան մէջ գինքը վայելելու։

Հ. Աստուած ո՞ւր է։

Պ. Երկինքը, երկիրս ու ամէն տեղ է։

Հ. Աստուած մի՞կ է թէ չատ։

Պ. Աստուած մէկ է, բայց անձինքն երեք. Հայր, Որդի և Հոգի Սուրբ, Երրորդութիւն աննուաճմբ։

Հ. Այս երեք անձինքն՝ երե՞ք Աստուած են։

Պ. Ո՛չ, այլ մէկ Աստուած. վասն զի երեքն ալ նոյն աստուածային էութիւնն ու գոյութիւնն ունին։

Հ. Այս երեք անձանց մէջէն ո՞րն աւելի մեծ է և ամենակարող։

Պ. Ըստ ամենայնի երեքն ալ հաւասար են։

Հ. Երե՞ք անձանց մէ՞ ո՞րը մարդ եղաւ։

Պ. Երկրորդը, որ է Որդին։

Հ. Մարդ ըլլալու համար ի՞նչ ըրաւ։

Պ. Մեզի պէս մարմին և հոգի առաւ յարգանդի սրբոյ կուսին Մարիամու՝ Հոգւով Սրբով։

Հ. Ի՞նչ անուն առաւ Որդին Աստուծոյ՝ երբ մարդ եղաւ։

Պ. Յիսուս Քրիստոս փրկիչ մեր, ճշմարիտ Աստուած և ճշմարիտ մարդ։

Հ. Ինչո՞ւ մարդ եղաւ։

Պ. Իր մահուամբը զմեզ կորըստենէ ազատելու և յաւիտենական կենաց արժանի ընելու համար։

Հ. Հիմա ո՞ւր է Յիսուս։

Պ. Իբրև Աստուած՝ ամէն տեղ է, իսկ իբրև Աստուած ու մարդ՝ երկինքն ու ամենասուրբ Հաղորդութեան մէջ է։

Հ. Ի՞նչ է սուրբ Հաղորդութիւնը։

Պ. Հացի և գինւոյ տեսակաւ՝ Քրիստոսի մարմինն ու արիւնն, հոգին և աստուածութիւնն է։

Հ. Ի՞նչ կը հասկնաս հացի և գինւոյ տեսակ ըսելով։

Պ. Այս ինքն՝ արտաքին տեսքը, գոյնը, համը, հոտն և քանակը։

Հ. Սրբագործուած նշխարին մէջ հացի էութիւն կա՞յ։

Պ. Ո՛չ՝ որովհետև. Առէք կերայք խօսքերով բոլորովին փոխուած ու Յիսուսի մարմին եղած է։

Հ. Հաղորդութիւնը կոտրելով՝ Յիսուսի մարմինն ալ կը բաժնուի՞։

Պ. Ո՛չ, այլ միայն հացին տեսակը կամ երեւոյթը կը կոտրի։

Հ. Եթէ մարմինը չի բաժնուիր, ո՞ր կտորին մէջ կը ճնայ։

Պ. Ամէն մասին մէջ ալ կատարեալ կը ճնայ։

Հ. Աղէկ կերպով հաղորդուելու համար ի՞նչ պէտք է։

Պ. Ա. Հաղորդուողը ծոմ պէտք է ըլլայ կէս գիշերէն։ Բ. Թէ որ մահուչափ մեղք ունի՝ խոստովանի։ Գ. Հաւատոյ, յուսոյ, խոնարհութեան և սիրոյ ներգործութիւններն ընէ առ սրբագործեալն Յիսուս։

Հ. Լաւ խոստովանելու համար քանի՞ բան պէտք է։

Պ. Հինգ. ա. Պէտք է լաւ մը քննել խիղճը։ բ. Զղջալ՝ զԱստուած վշտացնելուն համար։ գ. Խոստանալ ալ չվշտացնելու զԱստուած։ դ. Պարզ գուրցել խոստովանահօր բոլոր մեղքերը։ ե. Խոստովանահօր դրած ապաշխարանքը կատարել։

Հ. Ով որ առանց զղջման խոստովանի կամ ամչնալով մահուան չափ մեղք մը պահէ, ի՞նչ մեղք ըրած կ'ըլլայ։

Պ. Սրբապղծութիւն, այնպէս որ եթէ նորէն չխոստովանի նոյն խոստովանանքը, դժոխք կ'երթայ։

Հ. Ո՞վ կ'երթայ դժոխք։

Պ. Ով որ մահուչափ մեղաց մէջ կը մեռնի։

Հ. Ի՞նչ կ'ընեն դժոխքին մէջ։

Պ. Ահաւոր տանջանքներ կը քաշեն, Աստուծմէ զրկեալ, և

դևերուն հետ մէկտեղ յաւիտեան կրակի մէջ կ'այրին։

Հ. Որո՞նք արքայութիւն կ'երթան։

Պ. Անոնք՝ որ Աստուծոյ՝ չնորհաց մէջ կը մեռնին և քաւարանին մէջ քաւելու մեղք մը չունին։

Հ. Ի՞նչ կ'ընեն արքայութեան մէջ։

Պ. Հրեշտակաց և սրբոց հետ յաւիտեան զԱստուած կը վայելեն։

Հ. Արքայութիւն երթալու համար ի՞նչ բանի պէտք է հաւատայ քրիստոնեայ մը։

Պ. Այն ամէն բանին՝ որ կը հաւատայ կաթոլիկէ ուղղափառ սուրբ եկեղեցին։

Հ. Ի՞նչ բաներ պարտական է սորվիլ։

Պ. Ինչ որ Հաւատամքին, Աստուծոյ և Եկեղեցւոյ պատուիրանաց և Հայր մեր-ին մէջ կայ։

Հ. Ի՞նչ պարտական է ընել։

Պ. Աստուծոյ և եկեղեցւոյ պատուիրանները պահել։

Հ. Քանի՞ և որո՞նք են Աստուծոյ պատուիրանները։

Պ. Տասն են. ա. Ես եմ քու տէր Աստուածդ, չըլլայ թէ ինծմէ զատ ուրիշ Աստուած ունենաս։ բ. Կուռք չչինես և չպաշտես։ գ. Պարապ տեղ Աստուծոյ անունը բերանդ չառնես։ դ. Տօնները սուրբ պահէ։ ե. Հայրդ և մայրդ պատուէ։ զ. Մի սպաննաներ։ է. Մի շնար։ ը. Մի գողնար։ թ. Մի սուտ վկայեր։ ժ. Մի ցանկար ընկերիդ կնոջ և անոր ունեցած բաներուն։

Հ. Քանի՞ և որո՞նք են եկեղեցւոյ պատուիրանները։

Պ. Վեց են. ա. Ամէն կիրակի և տօնի օրեր պատարագ տեսնել։ բ. Հրամայեալ պահքերն ու ծոմերը պահել։ գ. Տարին գոնէ մի անգամ խոստովանիլ։ դ. Գո-

նէ մի անգամ Ջատկի տօնին հաղորդուիլ։ ե. Ընչից տասանորդը տալ եկեղեցւոյ։ զ. Արգիլեալ ժամանակներուն հարսնիք չկատարել։

Հ. Ի՞նչ պէտք է ընել քրիստոնեայն սուրբ ըլլալու համար։

Պ. Պէտք է իւր կրից յաղթէ Հոգւոյն Սրբոյ շնորհօք. և անոնց հակառակ առաքինութիւնները գործէ Յիսուսի օրինակին նման միայն Աստուծոյ շնորհօք, որ շարունակ աղօթքով և սուրբ Հաղորդութեան ստէպ մօտենալով կրնանք ստանալ։ Պէտք է յաղթէ, նախ ա. հպարտութեան՝ Աստուծոյ վախովը և խոնարհութեամբ. բ. Ագահութեան՝ խորհրդոց շնորհօք և առատաձեռնութեամբ. գ. Անառակութեան՝ չնորհիւ իմաստութեան և մաքրութեամբ. դ. Բարկութեան՝ շնորհիւ գիտութեան և համբերութեամբ. ե. Որկրամոլութեան՝

չնորհիւ մտաց առաջնորդութեան և սակաւապետութեամբ. զ. Նախանձու՝ գթութեամբ և եղբայրական սիրով. է. Ծուլութեան՝ արիութեամբ և չանսիրութեամբ։

Հ. Քանի՞ են սուրբ խորհուրդները, և ի՞նչ արդիւնք ունին։

Պ. Եօթն են. ա. Մկրտութիւնը՝ քրիստոնեայ կ'ընէ մարդը։ բ. Դրոշմը՝ չնորհք կու տայ կատարեալ քրիստոնեայ ըլլալու։ գ. Հաղորդութիւնը՝ հոգին կը սնուցանէ, և Աստուծոյ չնորհաց մէջ կը պահէ։ դ. Ապաշխարութիւնը՝ մեղքերը կը քաւէ։ ե. Հիւանդաց օծումն՝ ոյժ կու տայ աղէկ մեռնելու, և շատ անգամ մարմնոյ առողջութիւն ալ կը չնորհէ։ զ. Քահանայութեան կարգը՝ իշխանութիւն կու տայ աստուածային պաշտամունքը կատարելու։ է. Պսակը՝ չնորհք կու տայ խաղաղութեամբ և սըրբութեամբ ապրելու, և քրիստոնէաբար որդիները մեծցնելու։

Հ. Ի՞նչ պէտք է ընել Աստուծոյ ողորմութեան արժանի ըլլալու համար։

Պ. Պէտք է ողորմութեան գործերը կատարել, որովհետև այսպէս կ'ըսէ Յիսուս. Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։ Այս գործերէն եօթը՝ մարմնաւոր են. եօթն ալ հոգեւոր։ Մարմնաւորներն են. ա. անօթիներու հաց տալ. բ. ծարաւներու ջուր տալ. գ. զգեստ չունեցողները հագուեցնել. դ. օտարներու բնակութիւն տալ. ե. հիւանդաց այցելութիւն ընել. զ. բանտարկելոց այց ելլել. է. մեռեալները թաղել։ — Հոգեկաններն են. ա. խորհուրդ տալ տարակուսելոց. բ. տգիտաց սորվեցնել. գ. մեղաւորները խրատել. դ. վշտացեալները մխիթարել. ե. անիրաւութեանց համ-

բերութեամբ տանիլ. զ. աղօթել առ Աստուած՝ կենդանեաց և մեռելոց համար:

Հ. Ի՞նչ պէտք է ընել չմեղանչելու համար:

Պ. Նախ պէտք է առիթներէն փախչիլ, պահել զգայարանքները, և ստէպ խոստովանիլ: Բ. Ստէպ աղօթել, մանաւանդ փորձութեան մէջ: Գ. Մահ, դատաստան, դժոխք ու արքայութիւն մտածել, և այս մտածութեամբ բոլոր գործերն ընել:

Ի Ղ Զ Ֆ

Առ Մարիամ Կոյս անարատ.

Ո՛վ սիրելիդ Մարիամ,
Իմ բերկրութիւն և հեշտանք,
Ցամենայն ժամ զքո զանուն
Կամիմ կոչել անմոռաց:
Կամիմ կըրել զայդ անուն
Ըզցանկալին Աստուծոյ
Տըպաւորեալ ի հոգիս,
Տըպաւորեալ ի սըրտիս:
Կամիմ կարդալ Մարիամ
Յայգուն յերկինըս ծագել,
Եւ յարևուն մըտանել
Կամիմ կարդալ տակաւին:
Ո՛վ անուշակ Մարիամ,
Դու ես դու իմ մայր քաղցրիկ.
Եւ ես զանուն քո կալայց
Ցամենայն ժամ ի շըրթունս:

Եթէ անձն իմ վըշտահար
Կայցէ ի բիւր տառապանս,
Բոլոր բարիքս և հանգիստ
Ձո տուրք անուն եղիցին։
Թէ թողութեան են յերկուանք
Ահ և դողումն ի սըրտիս,
Ինձ յանուանէդ եկեսցէ
Անդորր և Ջեր գեղեցիկ։
Դըժոխային թէ ոտիս
Ջանձն իմ մարտիւ փորձեսցէ,
Ձայնեալ ըստէպ Մարիամ՝
Հալածեցից ի փախուստ։
Եւ յամենայն ի վըտանգս
Ցեղյեղեցից Մարիամ.
Մայր է ինձ նա, ես որդի,
Ըզնա երբէք թողից ոչ։
Արիագոյն իմ խրախոյս
Ցետին ազգս տագնապի
Լիցի գոչել Մարիամ,
Ձայն կարդալով մեռանել։
Ըզսիրատարփ զայն անուն
Ցամենայն ժամ կարդալով
Ուրախ եղէց կենդանեաւս,
Ուրախութեամբ և մեռայց։

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

Հայոց կաթողիկոսի ողբերգութիւն անձին գղջացելոյ, և տողք խրատական յիւրոյ դիմի խոստովանութեան։

Աչխարհ ամենայն,
Ան իս նայեցեալ
Ախտակից լերուք։
Բանամ ըզշըրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէս.
Տէր ողորմեա. տէր ողորմեա.
տէր ողորմեա։

Գող եղէ մեղաց,
Գլուող կոըլոտեան,
Գութ ինձ փորեցի։
Գաւեցի զանձն իմ,
Գաւաճանեցի,
Գարան գործեցի. տէր ողորմեա։

Երեմն էի լոյս,
Եւ այժմ եմ խաւար
Եւ քաւութիւն մահու։
Զհամբոյր պատմեցից
Զթիւ մեղաց իմոց,
Զի բազում են յոյժ. ահա ոչ
Երկինք և երկիր,
Ներկայ ոչիրեք
Տեսիլն զանձն իմ։
Ընտրեցի լռչարն,
Ընկալայ կամաւ
Զգեցայս մեղաց. ահա ոչիրեմ
Թաքուսիմ ոչիրեմ.
Թաւալիմ ի մեղս,
Թօթափել չկարեմ։
Ժանտ սխտիս լըցեալ
Ժահահոտ եղէ
Ժամանակ բազում. ահա ոչիրեմ
Ի բաց մեկնեցայ
Ի սուրբ խորհըրդոց,
Ի բարեաց գործոց։
Լաւ վարկաւ անձն իմ
Լուսոյն հեռանալ,
Լինել ընդ խաւար. Տէր ողորմ

Խորհուրդըք չարին
Խաբեն զիս ամենայն.
Խորամանգ առնեն,
Ծածկեն անպընդօք,
Ծիծաղին գլորմամբս,
Ծանակ գիս առնեն. ահա ոչիրեմ
Կամաւ կորացայ
Կարկամեալս անձամբ,
Կանգնել ոչ կարեմ։
Շուր մեղաց կիզող
Չերգեհեաց որ չիս
Չոգևոր բարիս. ահա ոչիրեմ
Զարկեցայ մեղօք,
Զարկցին սեւոտք,
Զանձրացաւ հոգիս։
Վէրք գառնութեան
Վշտեալ ի սրտիս՝
Վամբար իմ չիշաւ. ահա ոչիրեմ
Ձաշակեմամբ մեղաց
Ձաշեցի զգինի,
Ձոխս ապրատացայ։
Մեռեալ եմ հոգւով,
Մոլորեալ միտօք, [ոչիրեմ
Միայն կամ մարմնով. ահա

Յորոգայթ մահու
Յորսողին անկայ,
Յաղթեցայ յախտից։
Նետից թըշնամւոյն
Նըշաւակ եղէ,
Նոր միշտ խոցոտիմ. տէր ողորմ։
Շուրջ պատեալ գինև
Շունք բազում եղեն,
Շաղախին արեամբս։
Ոյս եղէ չարին,
Ուրկանաւ մեղաց
Ողջացաւ զանձն իմ. տէր ողորմ։
Չարաչար վըշտօք
Չարչարի անձն իմ.
Չունիմ դադարումն։
Պարտապան գըտայ
Պարտուց յանցանաց
Պարտեալս ի մեղաց. տէր ողորմ։
Ջանամ զըղջանալ,
Ջերանիմ դարձեալ.
Ջեռնում հրով մեղաց։
Ռաբբի կոչեցայ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուք. տէր ողորմ։

Սիրով ցանկութեամբ,
Սաստիկ բարկութեամբ,
Սիրտ իմ խոցեալ է։
Վիրօք յանցանաց
Վըշտանայ հոգիս,
Վարանեալ չըրջիմ. տէր ողորմ։
Տիրեցին ինձ չարք,
Տարագիր հանին
Տիրական գըրկացն։
Րաբունւոյն բարւոյ
Րախճական ձայնին
Րոտինս ոչ լուայ. Տէր ողորմեա։
Ցանկութիւն չարեաց
Ցանկալի դիմօք
Ցաւեցոյց զաչս իմ։
Իւրաքանչիւրոց
Իւսմամբ խուռն ախտից
Իւծեալ է հոգիս. Տէր ողորմ։
Փութացիր անձն իմ
Փախչել ի չարեաց,
Փափաքել բարեաց։
Քեզ միշտ մերձ ծանիր
Քուն մահու եկեալ,
Քըննող դատաւոր. տէր ողորմ։

Աստուածածնին բարեխօսութեամբն, յիշեա Տէր և ողորմեա։

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

Հայոց կաթողիկոսի երգ աղօթական ի դէմս սրբոյ երիտրդութեան, և իւրաքանչիւրոյ դիմի երիտրդութեանն առաձնական։

Առաւօտ լուսոյ
Արեգակն արդար,
Ա՛ր իս լոյս ծագեա։
Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս։
Գանձդ ողորմութեան
Գանձիդ ծածկելոյ
Գլտող գիս արա։

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոց։
Երկեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։
Զարթիր Տէր յօգնել,
Զարթո ըզքեմբրեալս,
Զուարթնոց նըմանել։
Էդ Հայր անըսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի։
Ընկալ գիս գըթած,
Ընկալ ողորմած,
Ընկալ մարդասէր։
Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ ըզյանցանս։
Ժողովող բարեաց,
Ժողովեա և զիս
Ժողովս անդրանկաց։
Ի քէն տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժըշկութիւն։

Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս։
Խորհըրդոց գիտող,
Խաւարիս չնորհեա
Խորհուրդ լուսաւոր։
Ծընունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա լոյս փառաց։
Կենարար փըրկիչ,
Կեցո ըզմեռեալս,
Կանգնեա ըզգլորեալս։
Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով։
Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց չնորհեա։
Ղամբարմամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո։
Ձառագայթ փառաց,
Ձանապարհ ինձ ցոյց
Ձեմել ի յերկինս։

Միածինըդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։
Յորժամ գաս փառօք
Ցահագին աւուրն,
Յիշեա զիս Քրիստոս։
Նորոգող հնութեաց,
Նորոգեա և զիս,
Նորոգ զարդարեա։
Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն
Շնորհեա զթողութիւն։
Ուրախացո Տէր
Ոգւոյս փըրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ։
Զար մըշակողին
Զար սերմանցն որ յիս
Զորացո զպըտուղն։
Պարգևիչ բարեաց,
Պարգևեա իմոց
Պարտեացս թողութիւն։
Ջուր շնորհեա աչացս,
Ջերմ հեղուլ արտօսր՝
Ջընջել ըզյանցանս։

Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ,
Սէր անուն Ցիսուս,
Սիրով քով ճըմլեա,
Սիրտ իմ քարեղէն։
Վասըն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո։
Տենչալի տեսլեամբ
Տուր ինձ յագենալ
Տէր Ցիսուս Քրիստոս։
Րաբունդ երկնաւոր,
Րոտեա զաչակերտս
Րամից երկնայնոց։
Ցօղ արեան քոյ սէր
Ցօղեա ի հոգիս,
Ցընծասցէ անձն իմ։
Ւիւծեալըս մեղօք
Ւիւծեալ աղաչեմ՝
Ւիւսեա յիս բարիս։
Փըրկիչ բոլորից,
Փութա գիս փըրկել
Փորձութեանց մեղաց։

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզփառս։

Աստուածածնին բարեխօսութեամբն, յիշեա Տէր և ողորմեա։

ՄԱՂԹԱՆՔ

Ջօրաւորք ընդդէմ արհաւրաց գիշատչաց՝ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։

Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զաղաչանս։ Մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք։ Փարատեա ամենապարգև զամօթական տխրութիւնս։ Բարձ յինէն ողորմած զանբերելի ծանրութիւնս։ Անչրպետեա հնարաւոր զմահացու կրթութիւնս։ Աւարեա միշտ յաղթող զխաբողին հաճութիւնս։ Բացադրեա վերնային զմոլելոյն մառախուղ։ Կնքեա կեցուցիչ զկորուսչին ընթացմունս։ Ցրուեա ծածկատես, զըմբռնողին չար գտմունս։ Խոր-

տակեա անքնին զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս։ Պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս։ Գծագրեա քո արեամբ զմուտ սեմոց սենեկիս։ Կերպացո զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս։ Ամրացո քո աջովդ զհանգստեանս խշտի։ Մաքրեսցես ի հաղբից զծածկարան անկողնոյս։ Պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս։ Անխարդախ արասցես զքո չնորհեալ չունչ մարմնոյս։ Կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ։ Կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասու։ Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս բարեխօսութեամբ հայցուածոյ սրբոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս ի-

մաստից անզարհուրելի գետեղ-
մամբ՝ ի ծփական խռովութեանց
կենցաղական զբաղմանց, անըր-
ջական երազոց խօլականաց ցնո-
րից, յիշատակաւ քո յուսոյդ՝
անվնասելի պաշտպանեալ: Եւ
սթափեալ վերստին ի ննջմանէ
ծանրութեան ամենազգաստարթ-
նութեամբ, հոգենորոգ զուարթ-
թութեամբ ի քեզ արձանացեալ,
զայս ձայն մաղթանաց բուր-
մամբ հաւատոց քեզ ամենօրհ-
նեալ թագաւոր փառաց անճա-
ռից՝ փառաբանողաց երկնագու-
մար խմբից երգակցեալ յերկինս
առաքել: Զի դու փառաւորեալ
ես յամենայն արարածոց յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք զօրաւորք

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ:

Որդի Աստուծոյ կենդանւոյ
օրհնեալ յամենայնի, Հօրդ ա-
հաւորի անքնին ծնունդ: Որ տը-
կարանայ առ ի քէն և ոչինչ: Որ
ի ծագեալ անստուեր նշուլից ո-
ղորմութեան քոյ փառաց՝ հալին
մեղք, հալածին դևք, ջնջին յան-
ցանք, խզին կապանք, խորտա-
կին չղթայք, կենդանածնին մա-
հացեալք, բժշկին հարուածք,
ողջանան վէրք, բառնին ապա-
կանութիւնք, տեղի տան տխրու-
թիւնք, նահանջին հեծութիւնք
փախնու խաւարն, մեկնի մէգն,
մերժի մառախուղն, փարատի
մռայլն, սպառի աղջամուղջն,
վերանայ մութն, գնայ գիշերն,
տարագրի տագնապն, չքանան

չարիքն, հալածին յուսահատու-
թիւնք, և թագաւորէ ձեռն քո
ամենակար, քաւիչդ ամենայնի:
Որ ոչ եկիր կորուսանել զմարդ-
կան ոգիս, այլ կեցուցանել.
Թող ինձ զանթիւ չարիսն իմ՝
բազում ողորմութեամբդ. զի դու
միայն ես յերկրի անճառ և յերկ-
րի անգնին, ի տարր գոյի՝ յելս
ծագաց աշխարհի. սկիզբն ամե-
նայնի և յամենայնի, ամենայն
լրմամբ օրհնեալ ի բարձունս:
Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սըր-
բոյ փառք յաւիտեանս. ամէն:

Ա Ղ Օ Թ Ք

*Իբրաքանչիւր անձին հաւատա-
ցելոյ ի Քրիստոս, զոր արա-
րեալ է տեառն Ներսեսի Հայոց
կաթողիկոսի:*

Հաւատով խոստովանիմ և եր-
կիր պագանեմ քեզ Հայր և Որդի
և Սուրբ հոգի, անեղ և անմահ
բնութիւն, արարիչ հրեշտակաց
և մարդկան և ամենայն եղելոց.
ողորմեա քո արարածոց:

Հաւատով խոստովանիմ և եր-
կիր պագանեմ քեզ անբաժանե-
լի լոյս, միասնական սուրբ Եր-
րորդութիւն և մի աստուածու-
թիւն, արարիչ լուսոյ և հալա-
ծիչ խաւարի, հալածեա ի հոգ-
ւոյ իմմէ զխաւար մեղաց և ան-
գիտութեան, և լուսաւորեա զգ-

միաս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս և ընդունել ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր Աստուած ճըշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ ըզպատմուճանն առաջին, զոր մերկացայ մեղօք, և ողորմեա:

Որդի Աստուծոյ Աստուած ճըշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասըն մերոյ փրկութեան, խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց և համբարձար առ Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա:

Հոգի Աստուծոյ Աստուած ճըշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր գմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա:

Ճննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծնընդենէ աւազանին մինչև ցայսօր

մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարճնոյս. և ողորմեա։

Ամենահնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յարատ, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա ըզշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա։

Հուր կենդանի Քրիստոս, ըզհուր սիրոյ քոյ զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ,

և վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. և ողորմեա։

Ճշմարտութիւն Հօր Յիսուս, տուր ինձ ճշմարտութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց և ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմեա։

Կամեցող բարեաց Տէր կամաըար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա։

Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո զսիրտ իմ առնել զմեղս և սիրել զքեզ միայն և առնել զկամս քո. և ողորմեա։

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո զհոգի և ըզմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց և

ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա։

Պահապան ամենայնի Քրիստոս, աչք քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի՝ ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի ննջել և ի յառնել, զի մի երբէք սասանեցայց. և ողորմեա։

Աստուած իմ, որ բանաս ըզձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա ըզպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ, յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմեա։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. և բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն և զերկիւղ գեհենոյն և զսէր արքայութեանն. զի զղջացայց ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողորմեա։

Աղբիւր անմահութեան, աղբեւրացո ի սրտէ իմմէ արտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յաւաշ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա։

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողորմեա։

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս. քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որ են ի ներքոյ երկնից. և ողորմեա։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառացդ ի կոչման աւուրն, և հանգ-

չել յուսով բարեաց յօթեվանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. և ողորմեա:

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանելոցդ ձայնէդ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա:

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. չնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց. և դարձո ըզնոսա ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քումդ արժանի եղիցին. և ողորմեա:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա ի բարի զխնդրուածս իմ,

բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և Յովհաննու Մկրտչին և սրբոյն Ստեփանոսի նախավկային և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց առաքելոց և մարգարէից և վարդապետաց և մարտիրոսաց, և սրբոց հայրապետաց և ճգնաւորաց և կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք Մանասեի թագաւորին։

Տէր ամենակալ, Աստուած Աբրահամու, Իսահակայ Յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ Տէր, թող զմեղս իմ։

Որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն զարդ նոցա. ամենակալ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանաւ քո, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ։

Որ ամենայն ինչ սարսէ և դողայ յերեսաց ահի զօրութեան քոյ. ամենակալ։

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քոյ, և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքնին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ։

Դու Տէր բարձրեալ, զթած, երկայնամիտ, բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ։

Դու Աստուած, ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ։

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ։

Կորացեալ եմ ես ի բոնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ։

Բարկացուցի զսրտմտութիւն, և զչար առաջի քո արարի. կանգ-

նեցի պատկեր՝ և բազմացուցի զցաստումն քո. ամենակալ։

Եւ արդ Տէր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ։

Մեղայ Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն, թող ինձ Տէր, թող ինձ. և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ։

Մի յաւիտեան բարկանար ինձ, Տէր, և մի յիշեր զչարիսն իմ, և մի պարտաւորեր զիս ընդ իջեալս ի ներքոյ երկրի չարեօք. ամենակալ։

Զի դու Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես, և յիս ցոյց զբարերարութիւնդ քո, զի անարժան եմ. ամենակալ։

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամենակալ։

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն զուարթունք երկնից. և քո են փառք յաւիտեանս. ամէն։

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն, Տէր, թող ինձ զմեղս իմ։

Բազումողորմ Տէր, ողորմեա ինձ։

Աստուած, քաւեա զիս զմեղաւորս։

Արարիչ իմ և յոյս Աստուած, գթա յիս ի մեղուցեալ ծառայս, և ողորմեա ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ Սրբուհի՝ և միշտ կոյս Աստուածածին Մարիամ, բարեխօսեա առ Տէր վասն իմ մեղաւորիս։

Ամենայն սուրբք Աստուծոյ, բարեխօսեցէք առ Հայր յերկինս վասն մեր մեղաւորացս։

Քրիստոս Որդի Աստուծոյ ա-նախակալ, ընկալ զաղաչանս մեր,

զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթող զօրութեամբ սուրբ և կենդանարար և պատուական խաչիւ քով, Տէր, պահպանեա զմեզ։

Առաքեա, Տէր, զհրեշտակ խաղաղութեան քոյ, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ի տուէ և ի գիշերի։

Եւ մարդասիրութեամբ քո յիշեա զմեզ, Տէր, յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա մեզ։

ՏԵՏՐԱԿ

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԻՆ

ՈՐ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ ՊԱՏՈՒՈՅՆ ՀԱՄԱՐ

Կ՚ԸՍՈՒԻ։

Խորհրդածութիւն առնելասուրբ

Վարդանանց վրայ։

Վարդանանը՝ ուղղափառաց մէջ՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ պսակ մը կամ հոգևոր հիւսուածք մը, որ քաղուած է Աւետարանէն խորհրդաւոր խօսքեր՝ ինչպէս թէ վարդերէ կազմուած ըլլայ, զոր կը մատուցանենք կուսանաց կու-

սին՝ Աստուծոյ մօրը, որովհետև հիւսուածքը կամ պսակը յատուկ կերպով կոյսերուն գլուխը կը դրուի վարդի համար։ Արդ, վարդարանը կը հիւսուի հինգ անգամ տէրունական աղօթքը կըրկնելով, և յիսուն անգամ ալ հրեշտակին ողջունատուութիւնը կրկնելով։

Ուստի վարդարանը երեք անգամ կրկնուելով կը կազմէ հարիւր յիսուն ողջունատուութիւնները Դաւթի Սաղմոսներու թիւը. Դաւթի Սաղմոսներու թուոյ չափ. որոյ համար այս երեք անգամ վարդարանը՝ կոչեցին երանելի Կուսին Սաղմոսարանը։

Հինգ անգամ վարդարանին մէջ կը կրկնենք տէրունական աղօթքը, որպէս զի նորոգենք Քրիստոսի հինգ վիրաց յիշատակը։ Եւ հրեշտակին տասը ողջունատուութիւնը կը միացնենք ամէն մի Հայր մերին հետ, որ-

պէս զի յիշենք Աստուծոյ տասնաբանեայ պատգաւիները։ Իսկ բոլոր վարդարանին մէջ ողջոյնը՝ յիսուն անգամ կը կրկնենք որպէս զի Սուրբ Գրոց մէջ նշանակուած յոբելեան յիսուն թուովը, երանուհի Կուսին բարեխօսութեամբը, տէրունական չարչարանաց արդիւնքով՝ ընդունինք մեղաց լիակատար նեդումը։ Բայց որպէս զի աղօթրին միտքը ասոր պտուղը չկորսընցնէ, որովհետև դժուարին կ'երևի, որ առանց զբաղելու մտադիր ըլլայ՝ նոյն խօսքերուն այնչափ կրկնութիւններուն, բարեպաշտութեամբ որոշուեցաւ, որ ամէն մի վարդարան կատարուի հինգ խորհրդածութիւններուով, զոյս մտածելով միտքը զբաղի՝ երբոր բերանը բառերը կ'արտասանէ։

Առաջին վարդարանին համար՝ նշանակուած են ամենասուրբ

Տիրամօր հինգ ուրախութիւնները, հինգ անգամ տասերէ կազմուած, որով Քրիստոսի ուրախալի տնօրէնութեանց ժամանակ Եւանուհին լեցուեցաւ՝ որոնք ասոնք են։

Տէրունական մարդեղութեան Աւետումը.
Եղիսաբեթի այցելութիւնը.
Քրիստոսի ծնունդը.
Քրիստոսի ընծայումը տաճարին մէջ.
Յիսուս մանկան գտնուիլը վարդապետներու մէջ.

Երկրորդ վարդարանին մէջ Քրիստոսի չարչարանացը հինգ տնօրէնութեանը յիշատակը կ'ըլլայ, որ ասոնք են.

Յիսուսի աղօթք ընելը և բռնուիլը պարտիզին մէջ.
Յիսուսի ձաղկուիլը.

Քրիստոսի փշերով պսակումը.
Քրիստոսի խաչը վերցնելը.
Քրիստոսի խաչելութիւնը.

Երրորդ վարդարանին մէջ հինգ փառաւոր տնօրէնութիւնները առաջ կը բերուին, որ կատարուեցան Քրիստոսի մահուանէ վերջը, որ են ասոնք.

Յիսուսի յարութիւնը.
Յիսուսի երկինք համբարձումը.
Հոգւոյն Սրբոյ գալուստը Մարիամու և աշակերտաց վրայ.
Երանուհի Կուսին վերափոխումը.
Իրեն պսակումը։

Ասոնցմէ յայտնի է վարդարանին գործածութեան ամենամեծ օգուտը. այսինքն, որ ասով կը նորոգուի Քրիստոսի կեանաց ամէն տնօրէնութիւններուն և երանուհի Կուսին և հաւատոյ գլխաւոր մասերուն յիշատակը։

Ու այս համառօտ կրթութիւնը այնչափ աւելի օգտակար է ամենուն համար, որչափ որ աւելի դիւրին է ատոր գործածութիւնը քան գրոցը. որովհետև զայս գործածելը կարելի է նաև անոնց, որ կարդալ չեն գիտեր, կոյր են, կաւք և ձի կը հեծնեն, ու խաւարի մէջ կը նստին։

Բայց պէտք չէ, որ մէկը մոռանայ տնօրէնութիւնները, որոնց վրայ միտքը և ուշադրութիւնը պիտի զբաղի. թէ եւ սկզբան դժուարին պիտի երևի միշտ մտաց մէջը ունենալը զանոնք, բայց քիչ օրուան վարժութիւնը ամէն բան կը դիւրացնէ։ Այո՛, թեթև բան մ'է տասը անգամ կրկնութիւնը, բայց շատ մտաց պատճառ կ'ըլլայ ցնդման և ձանձրութեան, թէ որ ամէն մի տասնեակի տրնօրէնութիւններէն մին չձեռնարկէ։ Եւ թէ որ զանց ընես անոնց

խորհրդածութիւնները, Քրիստոսի և Մարիամու կենաց տնօրէնութիւններուն փրկարար և քաղցր յիշատակէն վերջացած պիտի ըլլաս։

Վարդապետը ըսելու դիւրին եղանակ

Որպէս զի բարեպաշտները կարող ըլլան դիւրին և զգուշագոյն կերպով պահել միտքերնին ներկայ խորհրդածութիւնները վարդարան ըսած ժամանակ, օրինակ մը դնենք այս տեղ շատ դիւրին և պատշաճաւոր։ Տասնեակ մը սկսելէն առաջ, ինչ տնօրէնութիւն որ պիտի մտածես անոր մէջ, համառօտ միտքդ բեր, որպէս զի յետոյ միտքդ բերես մինչև տասնեակին վեր-

ՀԸ։ Եւ դարձեալ երբ սկսիս տէ-
րունական աղօթքը համարէ ինչ-
պէս թէ կը կենաս Հօր Աստու-
ծոյ առաջ. և երբ կը սկսիս
հրեշտակական ողջոյնատուու-
թիւնը՝ ինչպէս Մօր՝ երանուհի
Կուսին առջևն ես, որպէս զի
խորհուրդդ անոնց վրայ զբաղե-
լով՝ չցրուի հոս ու հոն։ Կամ
մտածէ, թէ կը հրջիս այն տե-
ղերը, ուր կատարուեցան այն
տնօրէնութիւնները, և դիր թէ
հոն ես, ինչպէս թէ այդ բանե-
րը աչացդ առջև ըլլային։

Եւ այս դիւրին բան մ'է հո-
գւոյ և զգայութեան ախորժելով
ընել, ինչպէս երբեմն երբոր պա-
րապ կը գտնուինք, կը կարծենք
թէ կը պտտինք բոլոր Եւրոպա,
ու կը տեսնենք զարմանալիքներ,
կամ կը հրջինք Զմիւռնիա, Բիւ-
զանդիոն, Ամիթ, Բերիա կամ
ուրիշ հեռաւոր տեղեր, ուր մեր
միտքը կ'երթայ։

Իմաստուն ու բարեպաշտօն
մարդ մը, որ վաթսուն տարի-
ներէ աւելի սովոր էր ամէն օր
վարդարան ըսել, իրեն համար
կ'ըսէ թէ՝ ասկէ լաւագոյն եղա-
նակ չգտաւ՝ ինչ որ հիմակ ը-
սինք։ Որ ամէն տասնեկին լմնա-
լուն՝ ինչպէս թէ սրտին զուար-
թութենէն՝ բերկրութեան այս
խօսքերով կը լեցուէր։ Այսինքն՝
առաջին տասնեկին վերջանա-
լուն, կ'ըսէր, Տասը հազար աւե-
գամ գքեզ օրհնեմ ո'վ կոյս մայր,
վառաւորեալ Մարիամ, և այլն։
Երկրորդ տասնեկէն վերջը կ'ը-
սէր Քսան հազար անգամ ըզ-
քեզ օրհնեմ. և այլն։ Այնպէս
երրորդէն, չորրորդէն և հինգե-
րորդէն վերջն ալ կ'ըսէր, զոր
պիտի գտնես իւր կարգին մէջ՝
պատշաճ, վայելուչ, օգտակար և
ուրախալիր խօսքերով չինուած։

Խրատ սուրբ վարդապետաց ընելոյ կերպին համար։

Արդ սուրբ վարդապետը սկըսելէն առաջ, կը գրեմ գիս կարդացողաց համար՝ որ գիտնան, թէ ամէն ոք՝ որ սուրբ վարդապետի եղբայրակցութեանը գըրուած է՝ պէտք է ամէն օր սուրբ վարդապետը ըսէ. և թէ որ՝ ոչ ամբողջ հարիւր յիսունը, գոնէ պիտի ըսէ միայն յիսունը՝ ամէն օրուան խորհրդոյն և խրատուն համեմատ՝ զոր հիմակ պիտի գրեմ։ Իսկ եթէ մէկը ամէն օր չկարենայ ըսել, գոնէ ուրբաթ, շաբաթ և կիրակի պէտք է ըսէ, որովհետև գրուած է սուրբ վարդապետին ընկերակցութեան, որպէս զի չզրկուի անոր շահէն։

Եւ դարձեալ, վարդապետը ըսկըսելէն առաջ՝ պիտանի խրատ

մը պիտի ըսեմ աստր նկատմամբ՝ թէ ինչպէս պէտք է սուրբ վարդապետը ըսել։ Թէ որ ըսողները եղբայրներ ըլլան, և կամ քոյրեր, երկու դաս ըլլան։ Եւ յետոյ՝ ով որ խոհեմ կը համարուի և հմուտ պատրաստ գտնուած եղբայրներուն մէջ, նա՝ օրուան պատշաճին համեմատ՝ անոր խորհուրդը ըսէ, թէ ինչ իրաց վրայ պէտք է մտածել, և միւսները ջերմեռանդութեամբ թող խոկան անոր ըսած խօսից վրայ։ Եւ յետոյ թող սկսի խոհեմ եղբայրը իր դասակիցներով և ըսէ Հայր մեր որ յերկինս, մինչև այն տեղը, որ կ'ըսէ, որպէս յերկինս և յերկրի, և ապա միւս դասակիցներն ալ սկսին ըսել. Ջհաց մեր հանապազորդը, մինչև վերջը՝ ուր որ ամէնը կ'ըսուի։

Եւ յետոյ՝ ով որ Հայր մերը սկսաւ, թող սկսի նաև Ողջոյն

քեզ Մարիամը և ըսէ մինչև այն տեղը, որ կ'ըսէ, և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յիսուս։ Ու միւս կողմն ալ թող ըսեն. Սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ, մինչև վերջը, որ է՝ և ի ժամուս մահուան մերոյ, ամէն։ Ու այսպէս ըսելով այն տասը ողջոյնները լմնցնեն։ Եւ յետոյ սկսին երկրորդ տասնեակը, և ով որ առաջ խորհուրդը ըսաւ, կրկին՝ մտածելու խորհուրդը գուրցէ, բայց Հայր մերը թող նա ըսէ, որ առաջ Հիսց մերը ըսաւ։ Ու ողջոյնն ալ այն սկսի, որ, նախ Սրբուհիին ըսաւ։ Ու այսպէս դաս դաս ըսեն մինչև որ աւարտի վարդարանը։

Ապա թէ որ միայնակ է աղօթողը, այնպիսին՝ ինչպիսի մէկն ալ ըլլայ, պէտք է որ ամէն բան ինքը ըսէ։

Նաև դիւրագոյն կերպով մը-տածելու համար սուրբ խոր-

հուրդները, գիտուն և բարեպաշտ անձ մը՝ կը սորվեցնէ գերազանց եղանակ մը, զոր ՉԵրմեռանդ մէկը՝ եթէ կամենայ՝ կրնայ ընել. այսինքն ամէն տասը ողջոյններուն մէջ երբ օրհնեալ է պտուղ որովայնի քո՝ Յիսուս հասնի, թող մտածէ բաներ մը. զոր օրինակ՝ ուրախութեան խորհրդոյ մտածութեան մէջ առաջին տասնեկին ատեն՝ թող մտածէ այս զոր կոյսը յղացաւ։ Երկրորդին մէջ, զոր կոյսը գնաց։ Երրորդին մէջ, զոր կոյսը ծնաւ։ Չորրորդին մէջ. ի տաճարին ընծայեցաւ։ Հինգերորդին մէջ՝ զոր ի տաճարին գտաւ։

Նոյնպէս չարչարանաց խորհուրդը մտածելու ատեն՝ առաջին տասնեկին մէջ զայս խոկայ՝ որ վասն մեր գիշտուհւս արեան հոսեաց։ Երկրորդին մէջ, որ վասն մեր ձաղկեցաւ։ Երրորդին

մէջ, որ վասն մեր փշօք պսակեցաւ: Զորրորդին մէջ. որ վասն մեր գիսաչի եբաւծ: Հինգերորդին մէջ. որ վասն մեր խաչեցաւ:

Նոյնպէս փառաւորութեան խորհուրդը խորհելու ատեն՝ առաջին տասնեկին մէջ մտածէ զայս, որ յարեաւ ի մեռելոց: Երկրորդին մէջ, որ համբարձաւ յերկինս: Երրորդին մէջ, որ զհոգին Սուրբ առաքեաց: Զորրորդին մէջ, որ զքեզ վերափոխեաց: Հինգերորդին մէջ, որ զքեզ յերկինս պսակեաց:

ԱՂՕԹՔ

ՎԱՐԴԱՐԱՆԻՆ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Յաւուր Երկուշաբաթի,
Երեքշաբաթի և Շաբաթի:

Մի հայր մեր և տասն ողջոյն ասացուք զմտաւ ածելով զառաջին խորհուրդ ուրախութեան Սուրբ Աստուածածնին. զի յոր-

Մի հայր մեր և տասն ողջոյն ասացուք, զմտաւ ածելով զերկրորդ խորհուրդ ուրախութեան Սուրբ Աստուածածնին. զի իբրև լուաւ զբանս հրեշտակապետին և յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ, փութապէս գնաց ի քաղաքն Յուդայ, և եմուտ ի տունն Զաքարիայ և ետ ողջոյն Եղիսաբեթի։

Հայր մեր։

Ընդ քսան ողջունիցս բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն սուրբ նահապետք և մարգարէք,

ժամամենակալն Աստուած գթացեալ ի վերայ մեր՝ հաճեցաւ փրկել զմեզ, առաքեաց զհրեշտակապետն Գաբրիէլ առ ամենաստուրբ կոյսն, որ ողջունաբեր աւետեօքն յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ։

Հայր մեր։

Ընդ տասանց ողջունիցս բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն հրեշտակք և հրեշտակապետք և ամենայն հոգիք երկնաւորք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս։ — Ամէն։

անմեղ մանկունք, Մկրտիչն Յովհաննէս և ամենայն սուրբք հնոյ ուխտին. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս։ — Ամէն։

Մի հայր մեր և տասն ողջոյն աստուցուք, զմտաւ ածելով զերոցուդ խորհուրդ ուրախութեան Սուրբ Աստուածածնին, որ իբրև ծնաւ անճառաբար զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ի Բեթղեհեմ Հրէաստանի՝ ի քաղաք Դաւթի, ի մսուրն անբանից, հրեշտակք յերկնից իջեալ երգեցին՝ փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն։

Հայր մեր։

Ընդ երեսուն ողջունից՝ բիւրս մատուցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աս-

տուածածին Մարիամ, ամենայն սուրբ առաքեալք և աշակերտք Տեառն և աւետարանիչք և ամենայն լուսապսակ վկայիցն դասք. ընդ որս յուսամք տեսանել և վերօհնել զքեզ յերկինս։ — Ամէն։

Մի հայր մեր և տասն ողջոյն աստուցք, զմտաւ ածելով զչորրորդ խորհուրդ ուրախութեան Սուրբ Աստուածածնին. զի յորժամ Փրկիչն մեր եղև քառասնօրեայ, և լցան աւուրքն սրբութեան. ըստ օրինացն Մովսիսի էած զնա սուրբ կոյսն ի տաճարն՝ յանդիման առնել տեառն։ Եւ ծերունւոյն Սիմէոնի առեալ զնա ի գիրկս իւր՝ օրհնեաց զԱստուած ասելով. Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն։

Հայր մեր։

Ընդ քառասուն ողջունիցս բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն սուրբ խոստովանողք, հայրապետք, վարդապետք, միանձունք, անապատականք, կուսանք, այրիք և արամբիք, ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն աստծուք, զմտաւ ածելով ըզհինգերորդ խորհուրդ ուրախութեան Սուրբ Աստուածածնին. զի յորժամ փրկիչն մեր եղև երկոտասանամեայ, տարան զնա ծնողքն ի տաճարն, և կորուսին զմանուկն. և յետ երից աւուրց գտին զնա. զի ընդ վարդապետս բազմեալ խօսէր ընդ նոսա, լսէր ի նոցանէ, և ուսուցանէր նոցա զարքայութիւնն Աստուծոյ:

Հայր մեր:

Ընդ յիսուն ողջունիցս՝ բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս,

փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, սրբուհին Աննա մայր քո, և Մարիամանք ազգականք քո, Մագդաղենացին և Մարթա, սիրողք և սիրելիք քո, և ամենայն կուսանք, այրիք և արամբիք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել ըդքեզ յերկինս: — Ամէն:

Փառք Հօր: Այժմ և միշտ:



Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՉԱՐՉԱՐԱՆԱՑՆ ԿՐԻՍՏՈՍԻ

Յաւուր Չորեքշաբաթի և Ուրբաթու:

Քրիստոս լեալ հնազանդ վասն մեր մահու չափ և մահու խաչի:

Մի հայր մեր և տասն ողջոյն ասացուք, զմտաւ ածելով զառաջին խորհուրդ չարչարանացն Քրիստոսի, զի յոլժամ մերձե-



Մի հայր մեր և տասն ողջոյն ասացուք, զմտաւ ածելով զերկրորդ խորհուրդ չարչարանացն Քրիստոսի, զի յորժամ Քրիստոս ի պարտիզին աղօթէր, ՅուդասՄի հայր մեր և տասն ողջոյն ասացուք, զմտաւ ածելով զերկրորդ խորհուրդ չարչարանացն Քրիստոսի, զի յորժամ Քրիստոս ի պարտիզին աղօթէր, Յուդաս մի յերկոտասանից չոքաւ մատնեաց զնա Հրէից: Իսկ նոցա առեալ զգունդս ի քահանայապետից՝ սուսերօք և բրօք եկին կալան և կապեցին զՅիսուս, և տարան յատեան առաջի Պիղատոսի, խաչել զնա՝ վասն մեղաց մերոց:

Հայր մեր:

Ընդ քսան ողջունիցս՝ բիւրս

ցաւ ժամանակ չարչարանաց իւրոց՝ առեալ ընդ իւր զՊետրոս, զՅակովբոս և զՅովհաննէս՝ եւ ի լեառն Ձիթենեաց, և մեկուսի ի նոցանէ աղօթէր առ Հայր, ասելով. Հայր, եթէ հնար իցէ անցո՛ զբաժակս զայս յինէն:

Հայր մեր:

Ընդ տասանց ողջունիցս՝ բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն հրեշտակք և հրեշտակապետք և ամենայն հոգիք երկնաւորք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն ասասցուք, զմտաւ ածելով զերրորդ խորհուրդ չարչարանացն Քրիստոսի. զի յորժամ Քրիստոս եկաց յատեանն Պիղատոսի, յետ բազում հարցափորձութեանց՝ պսակ ի փշոց կազմեալ զինուորացն՝ եդին ի գլուխ նորա, և ի բոլորելն զայն՝ արիւն ընդ երեսն հոսէր, վասն մեղաց մերոց:

Հայր մեր:

Ընդ երեսուն ողջունիցս բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աս-

տուածածին Մարիամ, ամենայն սուրբ նահապետք և մարգարէք, անմեղ մանկունք, Մկրտիչն Յովհաննէս, և ամենայն սուրբք հնոյ ուխտին. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

տուածածին Մարիամ, աւետեան սուրբ առաքեալք և աշակերտք Տեառն և աւետարանիչք, և ամենայն լուսապսակ վկայիցն դասք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս։ — Ամէն։



Մի հայր մեր և տասն ողջոյն աստուցք զմտաւ ածելով զչորրորդ խորհուրդ չարչարանացն Քրիստոսի. զի յետ բազում գանից և ձաղանաց՝ բարձեալ ըզծանրաբեռն խաչափայտն յուս նորա՝ ածին զնա ի Գողգոթա, ի խաչ հանել վասն մեղաց մերոց։

Հայր մեր։

Ընդ քառասուն ողջունիցս՝ բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն սուրբ խոստովանողք, հայ-

թապետք, վարդապետք, միանձունք, անապատականք, կուսանք, այրիք և արամբիք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն ասացուք, զմտաւ ածելով զհինգերորդ խորհուրդ չարչարանացն Քրիստոսի, զի յորժամ զփրկիչն մեր ի վերայ խաչին տարածեալ՝ զձեռսն և զոտսն բեւեռեցին, և բարձրացուցեալ կանգնեցին զնա, յայնժամ խաւար եղև ի վերայ ամենայն երկրի. արեգակն և լուսին խաւարեցան, վէմք պատուեցան, գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. և յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի խաչին Աստուած իմ, Աստուած

իմ ընդէ՞ր թողեր զիս. և խո֊
նարհեցուցեալ զգլուխն՝ աւան֊
դեաց զհոգին առ Հայր. և իջու֊
ցեալ զմարմին նորա ի խաչէն՝
եդին ի գերեզմանի։

Հայր մեր։

Ընդ յիսուն ողջունիցս՝ բիւրս
մատուսցեն քեզ օրհնութիւնս,
փառաւորեալ սուրբ կոյս Աս֊
տուածածին Մարիամ, սրբուհին
Աննա մայր քո, և Մարիամանք
ազգականք քո, Մագդաղենացին
և Մարթա, սիրողք և սիրելիք
քո, և ամենայն կուսանք, այ֊
րիք և արամբիք. ընդ որս յու֊
սամք տեսանել և վերօրհնել ըզ֊
քեզ յերկինս։ — Ամէն.

Փառք հօր։ Այժմ և միշտ։

Ի ԽՈՐՀՈՒՐԴ

ՓԱՌԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յաւուր Կիւրակէի և Հինգշա֊
բաթու։

Աստուած, յօգնել ինձ նա֊
յեաց։ — Եւ Տէր, յընկերել ինձ
փութա։ Փառք Հօր։ Այժմ և
միշտ։

Մի հայր մեր և տասն ողջոյն
աստացուք, զմտաւ ածելով զա֊

Մի հայր մեր և տասն ողջոյն աստուած՝ զմտաւ ածելով զերկրորդ խորհուրդ փառաւորութեանն Քրիստոսի. զի յետ յարութեան իւրոյ զաւուրս քառասուն շրջեցաւ ի վերայ աշխարհի, և ապա իւրով աստուածային ամենակալ զօրութեամբ՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։

Հայր մեր։

Ընդ քսան ողջունիցս՝ բիւրս մատուցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն

առջին խորհուրդ փառաւորութեանն Քրիստոսի. զի յերրորդ աւուր թաղման իւրոյ՝ ընդ լուսանալ միաշաբաթին՝ իւրով աստուածային ամենակալ զօրութեամբն յարուցեալ ի մեռելոց, երևեցաւ Մարիամու, և ապա առաքելոցն ամենեցուն. և զրօքն փակելովք մտեալ առ աշակերտսըն. ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ։

Հայր մեր։

Ընդ տասանց ողջունիցս՝ բիւրըս մատուցենքեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն հրեշտակք և հրեշտակապետք և ամենայն հոգիք երկնաւորք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս։ — Ամէն։

սուրբ նահապետք և մարգարէք, անմեղ մանկունք, Մկրտիչն Յովհաննէս և ամենայն սուրբք հնոյ ուխտին. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն աստուցք, զմտաւ ածելով զերորդ խորհուրդ փառաւորութեանն Քրիստոսի, զի իբրև համբարձաւ յերկինս՝ առաքեաց ըզխոստացեալ Հոգին Սուրբ ի վերայ առաքելոցն, և նոցա լցեալ Հոգւովն Սրբով, երթեալ քարոզեցին ընդ ամենայն աշխարհ վասն արքայութեանն Աստուծոյ:

Հայր մեր:

Ընդ երեսուն ողջունիցս՝ բիւրս մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամենայն

սուր սոսկալի և աշխիւրք սեան և սեւսարիւք և սմենայն լուսատուկ միտքն դատ. քն որ յուսոյն սեան. նել և միտքնել զրեզ յերկին։
— Ամէն։

Ա՛ Հայր մեր և սուտ ոչխարն սոսկալ, զնու սեծով զջրպրտ խորհուրդ փառաւորսեան Քրիստոս, զի իբրև և հաս ժամանակ վախճանելոյ Քրիստոսն՝ սուրեալ գՈսրիել հրեշտակապետն բերել նմա լսպեանակ, հրաւիրելով զնա ի վերին սուգասուն, յոր վերսիրեալ հոխեցաւ նա յերկինս։

Հայր մեր։

Ընդ փառսուն ոչխարացն՝ բիւրս մասուցին քեզ օրհնութիւն, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, ամե-

նայն սուրբ խոստովանողք, հայրապետք, վարդապետք, միանձունք, անապատականք, կուսանք, այրիք և արամբիք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս։ — Ամէն։

Մի հայր մեր և տասն ողջոյն աստուած, գմտաւ ածելով զհինգերորդ խորհուրդ փառաւորութեանն Քրիստոսի, զի յորժամ սուրբ Կոյսն փոխեցաւ յերկինս՝ Հայրն ամենակալ և Որդին միածին և Սուրբ Հոգին Աստուած՝ պսակեալ զնա անմահական թագին՝ բազմեցուցին յաթոռն լուսեղէն. և եղև նա դշխոյ երկնի և երկրի, բարեխօս առ Տէր վասն մեր և վասն ամենայն ուղղափառ հաւատացելոց։

Հայր մեր։

Ընդ յիսուն ողջունիցս՝ բիւրս

մատուսցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, սրբուհին Աննա մայր քո, և Մարիամանք ազգականք քո, Մագդաղենացին և Մարթա, սիրողք և սիրելիք քո, և ամենայն կուսանք, այրիք և արամբիք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

Փառք Հօր, Այժմ,

Ա Ղ Օ Թ Ք

Առ սուրբ կոյսն Մարիամ.

Ողջ լեր թագուհի, մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն և յոյս մեր, ողջ լեր: Առ քեզ կարդամք վտարանդեալ որդիքս Եւայի. առ քեզ հառաչեմք միշտ հեծութեամբ և լալագին ի հովտէ աստի տրտմութեան և արտասուաց: Եւ արդ աղէ, ո՛վ բարեխօս մեր, դարձո առ մեզ ըզգորովագութ հայեցուածս աչաց քոց, և զՅիսուս զօրհնեալդ պտուղ որովայնի քո յետ աստանօր պանդխտութեանս ցոյց մեզ, ո՛վ բարեբարո՛յ, ո՛վ գթած, ո՛վ քաղցր և անոյշ կոյս Մարիամ: Լեր բարեխօս վասն մեր սուրբ

Աստուածածին, որպէս զի արժանաւորք եղիցուք խոստմանցն Քրիստոսի:

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո ապաւինիմք, սուրբ Աստուածածին, մի՛ անտես առներ զաղաչանս մեր ի կարիս մեր, այլ յամենայն վտանգէ ապրեցո զմեզ, մշտակոյս փառաւորեալ և օրհնեալ:

Ո՛վ տիրուհի մեր, ո՛վ միջնորդ մեր, ո՛վ բարեխօս մեր, ընդ որդւոյ քում հաշտ արա զմեզ, որդւոյ քում յանձն արա զմեզ, և տարեալ կացո զմեզ յանդիման որդւոյ քո:

Ա Ղ Օ Թ Ք

Առ սուրբ Դոմինիկոս.

Ով սուրբ Դոմինիկէ, յիշեսջիր զվաստակս քո առաջի Քրիստոսի, և աղաչեա զնա վասն թափուր ի բարեաց ժողովրդեան քո: — Ամէն:

Արժանի արա զմեզ փառաւորել զքեզ կոյս աւետնօրհեալ:

— Եւ տուր մեզ զօրութիւն ընդդէմ թշնամեաց քոց:

Բարեխօս լեր վասն մեր, ով երանելի Դոմինիկոս:

— Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Փրկեա, Տէր, զծառայս քո և զաղախնայս:

— Աստուած մեր, զյուսացեալքս ի քեզ:

Լեր մեզ, Տէր, աշտարակ հզօր:

— Վերնոց թշնամոյն,
Տէր լուր ազօթից մերոց,
— եւ ազատակ մեր առ քեզ եկեսցէ։

Զմարմնոյ ծառայից քոց, լուր, մարդասէր Տէր, որպէս զի ժողովելոց ի կատարել զյիշատակ Արդուհւոյ Աստուածածնի, նորին բարեխօսութեամբն ազատեսցուք ի հասեալ նեղութենէս։ — Ամէն։

Աստուած ամենակալ, խընդրեմք ի քէն, առ մեզ, զի որ ծանրացեալքս եմք մեղօք մերոց յընկրկել, բարեխօսութեամբ ետրանելոյ Հօրն մերոյ Գոմիտեկոսի խոստովանողին քո, և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, յաջողեալ կանգնեցուք։ — Ամէն։

Ամենակալ և անսկիզբ Աստուած, որ սէրդ ես ամենայն իշխանութեանց և պետութեանց, նայեա յոգնութիւն հաւատացելոց. զի ազգ անհաւատից և

հերձուածողաց՝ որք սպառնացեալ ի վերայ մեր խրոխտան, ընդ ամենազօր աջոյդ ընկճեսցին։ — Ամէն։

Նայեա, Տէր, յաղօթս մեր և ուղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան և փրկութեան, որպէս զի և յելս մեր յաստեաց՝ քեզ յերկնաչուս ճանապարհին պաշտպանեալ լիցուք։ — Ամէն։

Արձակեա, Տէր, զհոգիս ամենայն հաւատացեալ ննջեցելոց յամենայն կապանաց մեղաց, զի ընդ սուրբս քո յարուցեալ՝ զքեզ ծացեն ի յաւիտենական փառսն, Քրիստոս Յիսուս Տէրամբ մերով։ — Ամէն։

Օգնականութիւնն Աստուծոյ եղիցի ընդ մեզ հանապազ։ — Ամէն։

Ազջոյն ընդ քեզ Մարիամ, սիրուհի երկնաւորաց, մայր քաղաքին հրեշտակաց, ծաղիկ կու-

սանաց. որպէս զվարդ և ըզշուշան սփռեա զաղաչանս մեր առաջի որդւոյ քո վասն փրկութեան հաւատացելոցս: — Ամէն:

Օրհնեսցէ զմեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, հանդերձ բարեգութ որդւովն իւրով: — Ամէն:

Մաղթանք լորեաեան՝ Տէր ողորմեա տես 371:

ԵՐԵՓՕՐԵԱՑ

ԿԱՄ

ԻՆՆՕՐԵԱՑ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ

ԱՒՍ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ԼՈՒՐԴԻ

Աղօթք վասն հիւանդաց

Ո՛վ կոյս անարատ յղացեալ, ահաւասիկ ես խոնարհ ու ջերմեռանդ հոգւով քու սուրբ սեղանիդ ոտքը ինկած ինչպէս երբեմն Բեռնարդինէ՝ այրին առջեւը, ուր որ հաճեցար յայտնի կերպով երեւնալ անոր, որպէս զի քարոզես քու որդւոցդ ապաշխարութիւն ու մեղաց թողու-

թիւն, պատրաստ եմ ես կրելու իմ և եղբարցս մեղքերը քաւելու համար. ուստի և այս հիւանդս՝ որուն համար կ'աղօթեմ սիրով, յօժար է խմելու ապաշխարութեան դառն բաժակը. ու ես Աստուծոյ կը յանձնեմ, որ հաճի քու ամենազօրաւոր միջնորդութեամբդ, պահելով անոր հոգւոյ առողջութիւնը, պարգևէ նաև մարմնոյ առողջութիւնը:

Ո՛վ Կոյս Մարիամ, գիտենք որ ամենազօրաւոր է քու բարեխօսութիւնդ երկինքը. արդ ո՛վ կրնայ ուրեմն քեզմէ աւելի զօրաւոր միջնորդ ըլլալ Աստուծոյ առջև. դու ես պաշտպան խեղճերուն, դու ես օգնական տկարներուն, դու ես որ կը բժշկես հիւանդները, դու ես որ կը մխիթարես տրտմեալները, դու ես որ կու տաս շնորհք, և այնչափ աւելի առատ, որչափ անոնք աւելի խեղճ են ու զուրկ մարդկային

ամէն օգնութենէ: Ո՛վ Կոյս Մարիամ, դու ես մեր հովանին և պաշտպանը՝ Աստուծոյ բարկութեան դէմ, դու ես մեր լոյսը՝ մեղաց խաւարի մէջ. դու առաջնորդէ մեզի, դու տար զմեզ Հօր երկնաւորի ծոցը: Դու ես իմաստութիւն տգէտին, քաջալերութիւն տկարին, խաղաղութիւն տարակուսելոյն. դու ես աղբիւր անապատի մէջ, ապաւէն ալէկոծութեան մէջ. դու ես հանգիստ մեր, դու ես օդ, արիւն, սիրտ, ջերմութիւն ու կեանք մեզի պէս խեղճերուն: Մի՛թէ դուն չէի՞ր, ո՛վ Կոյս Մարիամ, որ Լուրդ և ուրիշ տեղեր քու փառաւոր անունդ կանչելով, և խմցընելով այրին հրաշագործ ջուրը, առողջութիւն տուիր այնչափ հիւանդաց մեծամեծ հրաշքներ գործելով: Արդ, չեմ տարակուսիր, ո՛վ Կոյս Մարիամ, որ կը լսես հիւանդիս հառա-

չանքները, որ ինքզինքը քեզի յանձնած է, կը լսես անտարա-
կոյս իրեն բարեկամաց ու ազ-
գականաց աղաչանքները, կը
լսես քահանայից սուրբ աղօթ-
քը, որոնք ամէնքն ալ կը յու-
սան քու գթութենէդ և մէկ բե-
րան կ'աղաղակեն օգնութիւն ու
մխիթարութիւն: Ո՛վ կոյս Մա-
րիամ, արտասուօք կ'աղաչեմ,
մի՛ թողուր ունայն ու պարապ
մի՛ հաներ հիւանդիս յոյսը, ո-
րով քեզի կը դիմէ, քու մայ-
րական գթութեանդ ապաւինած.
տո՛ւր կ'աղաչեմ, կատարեալ ա-
ռողջութիւն, որով շուտով դառ-
նամ այս սուրբ սեղանիդ առ-
ջևը չնորհակալութեան աղօթքս
մատուցանելու, ու յաւիտեանս
յաւիտենից օրհնելու ու բարե-
բանելու զքեզ. Ամէն:

(Երեք ողջոյն զուարճ. Մաղթանք
և ապա հետևի աղօթքներն
ալ կատարէ:)

ՄԱՂԹԱՆՔ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԼՈՒՐԴԻ

Տէր ողորմեաց:
Քրիստոս ողորմեաց:
Տէր ողորմեաց:
Քրիստոս լուր մեզ:
Հայր երկնաւոր Աստուած. ողոր-
մեա մեզ:
Որդի փրկիչ աշխարհի Աստուած.
ողորմեա մեզ:
Հոգի սուրբ Աստուած. ողորմեա մեզ:
Սուրբ Երրորդութիւն մի Աս-
տուած. ողորմեա մեզ:
Սուրբ Աստուածածին Լուրդի,
Մայր Աստուծոյ, աղաչեա վասն
մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ հաճեցար երևել մինչ ութ տասն անգամ, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ ասացեր՝ Ես եմ անարատ յղութիւն, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ ընտրեցեր մանուկ մի անշուք, որպէս զի և մեք ուսցուք լինել պարզամիտ և անմեղ, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ ընտրեցեր զլերինս, զի յորդորեսցես զմեզ մերձենալ յերկինս, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ հաճեցար ընտրել զերկիր Գաղղիացւոց, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ երևեցար յայրի միում իբրև զաղաւնին խորհրդական ի ծերպս վիմին, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ ժպտեցար՝ զի հրաւիրեսցես զմեզ ի յոյս ակնկալութեան. աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ կրէիր ի գօտւոջ քում ըզվարդարան սուրբ, զի յորդորեսցես զմեզ յաղօթս, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ ունելով ամբարձեալ զաչսըդ յերկինս, խրատէիր զմեզ ուղղել զսիրտս մեր ի բարձունս, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ կրէիր վարդս ի վերայ ոտից քոց, զի ուսուսցես մեզ՝ թէ եղբայրսիրութեան պարտէ ուղղել զընթացս մեր, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ խրատեցեր զմեզ ապաշխարել, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի,

որ խնդրեցեր աղօթս վասն մեղաւորաց, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ բղխեցուցեր աղբիւր ըմպանչելի, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որ յաղթող եղեր ամենայն հակառակութեանց անհաւատից և ամբարշտաց, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, որոյ այցելութիւն առ մեզ նշան է՝ թէ չէ զմեզ Աստուծոյ ի սպառ լքեալ, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, քաղցր ակնկալութիւն պանդըխտաց, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, բժիշկ ամենայն ախտից, աղաչեա վասն մեր։

Սուրբ Աստուածածին Լուրդի, միխիթար վշտացելոց, աղաչեա վասն մեր։

Խնդրեմք ի քէն կատարել ի մեզ զնպատակ տեսլեանց քոց. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ։

Տուր յաղթութիւն Ս. Եկեղեցւոյ. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ։

Պաշտպան լեր Սրբոյ Աթոռոյն, որ հռչակեաց զքեզ անարատ յղացեալ. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ։

Մի հանդուրժեր զի դադարեցէ հայրենիքս մեր լինել քո աշխարհ սիրելի. Ս. Աստուածածին Լուրդի, լուր մեզ։

Տուր մեզ զհաւատս և զմեծամեծ առաքինութիւնս. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ։

Ջնջեա զոգի ապստամբութեան և զապերասան ցանկութիւն զբօսանաց, որք են վիշտք ժամանակիս. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ։

Ունկնդիր լեր հեծութեան ամե-

նեցուն որ կարդան առ քեզ. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ:

Սրբեա և չեռո զսիրտս մեր, զի առաւելագոյն արժանի լիցուք լինել լսելի. Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ:

Վասն ծնողաց մերոց աղաչեմք, Ս. Աստուածածին Լուրդի, լուր մեզ:

Վասն բարեկամաց մերոց և թշնամեաց աղաչեմք, Ս. Աստուածածին Լուրդի լուր մեզ:

Վասն անհաւատից և հերձուածողաց աղաչեմք. Ս. Աստուածածին Լուրդի, լուր մեզ:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, խնայեա ի մեզ Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, լուր մեզ Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս

զմեղս աշխարհի, ողորմեաց մեզ Տէր:

Քրիստոս լուր մեզ, Քրիստոս անսա մեզ:

Լեր բիւրից բարեբանեալ, ով Ս. Կոյս Մարիամ, վասն ա-նարատ յղութեան քո:

Ա Ղ Օ Թ Ք

Ո՛վ Կոյտ անարատ յղացեալ, մայր մեր, դու որ արժանի ըրիր անծանօթ ու խեղճ աղջիկ մը քու հրաշալի տեսութեանդ, տուր կ'ապաղաչենք մեզի չնորհք, որով ապրինք այս անցաւոր աշխարհիս մէջ խոնարհութեամբ ու պարզութեամբ սրբոց նման, և այնպէս երկնային փառքին արժանանանք։ Տո՛ւր, կ'աղաչենք չնորհքը, որ կարենանք ապաշխարել մեր անցեալ մեղքերը, ու ապրինք այսուհետև հետու ամէն տեսակ մեղքէ, որով միշտ քրիստոնէական առաքինութեամբ զարդարուելով, քու քաղցրագութ սիրտը բացուի միշտ մեր վրայ, ու կաթեցնէ մեր մեղօք մեռած սրտերու մէջ՝ այն տուրբ արիւնը՝ որ կը կենդանացնէ ու կը

բորբոքէ աստուածային սիրով, արժանի ընելով յաւիտենական արքայութեան. Ամէն։

Ա Ղ Օ Թ Ք

որ և իցէ շնորհք խնդրելու։

Ո՛վ Կոյս անարատ յղացեալ, ահա քու սիրելի պատկերիդ առջեւը կուգամ ամենայն ջերմեռանդութեամբ ինկած, որ թէպէտ և չունիմ ես այն գեղեցիկ բաղդը, որով կարենամ տեսնել քու կենդանի ու լուսաւոր դէմքդ, ինչպէս որ բաղդ ունեցաւ քու սիրելի աղախինդ Բեռնարդինէ, որ զմայլած քու գեղեցկութեանդ լուսէն, յափշտակուած էր ամենաքաղցր սիրով, բայց ես ալ կը զգամ, որ ինձի մօտ ես, ո՛վ Կոյս Մարիամ. վասն զի ուր որ դառնամ՝ կը տեսնեմ չնորհք, ու

անթիւ հրաշք, զոր կ'ընես խեղճ մարդկութեան, հիւանդնելու, ցաւագարնելու, որոնք ամէն կողմէն քեզի կը դիմեն հաւատքով։ Ո՜վ Ս. Աստուածածին, իմ հաւատքս ալ մեծ է ու կենդանի քու կարողութեանդ վրայ, որուն յայտնի ապացոյց կու տաս ամէն օր, ամէն վայրկեան։ Ուստի խոնարհաբար և լի սիրով կ'աղաչեմ ու կը պաղատիմ, ցուցուր քու հրաշագործութիւնդ այս իմ հիւանդիս վրայ, որուն համար կ'աղօթեմ քեզ։ Հա՜պա, ո՜վ Մայր սիրելի, մխիթարէ զինքը և պարգևէ այն չնորհքը, որուն մեծապէս կարօտ է։ Ո՜վ Սրբուհի Մարիամ, իրաւցընէ մայր ես Աստուծոյ, բայց միանգամայն մեր մայրն ալ ես. թագուհի ես բոլոր տիեզերաց, որպէս զի ցուցնես ամենուն վրայ քու իշխանութիւնդ ու գըթութիւնդ. ցուցուր ուրեմն, ո՜վ

կոյս ամենասիրելի, իմ հիւանդիս վրայ, այս խեղճիս վրայ, որ բոլորովին քեզի ապաւինած է՝ քու կարողութեանդ նոր հրաշք մ'ալ։ Ո՜վ Մարիամ, աստղ ծովային, և նաւահանգիստ նաւակոծելոց, մի՛ մերժեր զմեզ, որ ալէկոծութեան մէջ ենք ու քեզի կ'ապաւինինք. լսէ ուրեմն, ո՜վ Մայր սիրելի, ու մխիթարէ զմեզ, ո՜վ քաղցր, ո՜վ անույշ կոյս Մարիամ. Ամէն։

(Երեք Ողջոյնիս մաղթանք առա)։

Ա Ղ Օ Թ Ք

Հրաշագործ չուրը խմողին,
կամ չուրը հիւանդին տուողին։

Աստուած իմ, ես խեղճ ողորմելի մեղաւոր մ'եմ, անարժան ձայնս բարձրացնելու քեզի, և մօտենալու իսկ այս օրհնեալ և հրաշագործ Լրոյն։ Բայց այս իմ խեղճութեանս համար, ամենողորմ Աստուած, ողորմէ ինծի։ Աստուած իմ և Տէր, լի հաւատքով կը դիմեմ քեզի և ինքզինքս քեզի կը յանձնեմ բոլորովին. աւելի ապահով ըլլալու համար՝ միջնորդ կը բռնեմ քեզ զամենասուրբ Աստուածածին Մարիամ։ Ի խորոց սրտի իմոյ և հեծութեամբ, որուն մէջ ընկղմած եմ, քեզ կը բարձրացնեմ հառաչանքներս ու պաղատանքս, և ամենայն հաւատքով կը խմեմ այս

Լրէն, զոր Բեռնարդինէ աղախնոյդ հրամայելով, բղխեցուցիր հրաշափառապէս Լուրդի այրին ժայռերէն, որով այնչափ հրաշագործութիւններ կատարեցիր ու կը կատարես ամէն օր։

Մայր գթութեան, հասիր ինձ օգնութեան, ազատէ զիս իմ ցաւերէս, որով կը նեղուիմ ու կը տանջուիմ, ողորմէ ինծի ու պարգեւէ փափաքած չնորհքս։

Ո՛վ Մարիամ անարատ յղացեալ, աղաչեա վասն իմ որ քեզի կը դիմեմ։

(100 օրուան ներողութիւն ունի)։

Ա Ղ Օ Թ Ք

որ և իցէ չնորհք ընդունելէ վերջ։

Ո՛վ կոյս անարատ յղացեալ, որ ընտրուած ես Աստուծմէ ի յաւիտենից՝ մարդկան ազգի փրկութեան գործակից ըլլալու, աստուածային իմաստութեան խորհրդոց մէջ խորհրդակից ըլլալու, աստուածային չնորհաց գանձարան ու բաշխող ըլլալու, ահա եկեր եմ ես այսօր խոնարհաբար չնորհակալ ըլլալու առաջի այն աստուածային մեծ վայելչութեան աթոռոյն, յորում բարձրացուց գքեզ Հօր Աստուծոյ բարութիւնը՝ որուն ամենահնազանդ աղախին եղար. միածին Որդւոյն՝ որուն մարդկային բնութեան հաղորդեցիր. ու

Հոգւոյն Սրբոյ՝ որուն անխոնջ գործիք մ՚ես աստուածային սէր բաշխելու, ու կաթեցնելու ճըշմարիտ բարեպաշտից սրտերու մէջ։ Արդ, ո՛վ կրնայ հասկընալ քու գեղեցիկ սրտիդ փափկութիւնը, ո՛վ կոյս խոնարհ և փառաւորեալ, քանի որ Աստուած մը հաճեցաւ քեզի ու սիրեց։ Կ՚ուզեմ ու կը փափաքիմ ես ալ նմանելու քու այն հրաշալի աստղաւորութեան, զոր ունիս դու առ Աստուած. բայց ո՛վ կու տայ ինծի՝ սրտի այն փափուկ սէրը։ — Ա՛խ, Մարիամ մայր Աստուծոյ և մայր իմ, դարձուր մէկ մը քու գթած աչքերդ իմ վրաս, ինչպէս որ երբեմն դարձուցիր քու խոնարհ աղախնոյդ Բեռնարդինէին վրայ, զոր և արժանի ըրիր քու հրաշալի տեսութեանդ, որպէս զի ես ալ կարենամ միշտ Աստուծոյ առատ բարիքները ու օրհնութիւնները

ընդունել. տուր ուրեմն կ'աղաչեմ, որ ես ալ վառուիմ այն բոցով, որով կը բոլբոջքեր Բեռնարդինէ, ու կարենամ ամբողջ աշխարհի յայտնել քու չնորհքներդ ու հրաշքներդ։ Ահաւասիկ չատ աղէկ կը տեսնեմ, ով Մարիամ, որ քաղցր ու հաճոյ է քեզ կոչուիլ Մայր Աստուծոյ և Մայր գթած, Մայր մեր սիրելի, Մայր բարերար, որուն յայտնի ապացոյց տուիր ինծի։ Ահա երախտագէտ սրտիւ կը դիմեմ Աստուծոյ ու քեզի. եկեր եմ մեծ շընորհակալութիւնս մատուցանելու, լի սրտով ու զգացմամբ, այն մեծ չնորհքին համար, զոր քու հզօր միջնորդութեամբդ ընդունեցայ հիւանդս, որուն յոյսը պարապի չելաւ, ով Մարիամ կոյս։ Արդ, ի՞նչ կրնայ ընել նա այնքան մեծ բարիքիդ փոխարէն։ Նա սիրտ մը միայն ունի՝ որ կրնայ արժանաւոր ըլլալ քեզի,

և զայս քեզի կ'ընծայէ. սիրտ մը՝ որ չատ կը սիրէ զքեզ, ով կոյս Մարիամ. սիրտ մը որ Յիսուսի ու քեզի երդմամբ չափ կը խոստանայ հաւատարիմ և երախտագէտ մնալու մինչև ցմահ։ Արդ, ով կոյս ամենագթած, մի՛ դադարիր տալու մեզի քու պարգևներդ. որպէս զի բոլբոջի մեր սիրտը՝ դեռ աւելի երախտագիտութեամբ ու սիրով դէպի քեզ, և քու հրաշալի սիրտդ ալ վառի բոլբոջի դեռ աւելի սիրով առ մեզ. Ամէն։

ՏԵՍԻԼՔ

ՍՐԲՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹԻ

ԵՒ

ՍՐԲՈՒՀԻ ԲՐԻՃԻՏԱՑԻ

Սրբուհիքն Եղիսաբեթ և Բրիճիտա փափաքելով իմանալ Քրիստոսի Տեառն մերոյ չարչարանքները, շատ կերպ չերևեռանդուհի և չերևեռանդական աղօթքներ ըրին։ Որ մը գրաղով անոնց վրայ Յիսուս իրենց երևնալով՝ ըսաւ. «Ո՛վ իմ սիրելիքս, որովհետև այդչափ կը փափաքիք իմանալ իմ չարչարանքս, ահա ես կը պատմեմ ձեզի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հրեայք երբ բռնեցին զիս պարտիզին մէջ, հարիւր քսան և երկու անգամ զարկին գաւազանով, և երեսուն անգամ երեսիս զարկին ձեռքով։ Պարտիզէն մինչև որ տարին Աննայի և Կայիափայի տունը՝ եօթն անգամ գետին ինկայ, և զիս գետնէն վերցուցին. վերցուցած ատենին, երկու հարիւր հինգ բռունց զարկին գլխուս, և քսան և երկու անգամ ոտներուս զարկին գաւազանով. մէջքիս ու կռնակիս զարկին քսան և ութ անգամ։

Զուանով գետնին վրայ քաշեցին երեսուն անգամ. ան ընելով՝ հառաչեցի հարիւր հինգ անգամ։

Մօրուքէս բռնեցին, գետնին վրայ քաշեցին երեսուն անգամ։

Սեանը կապեցին զիս ու զարկին հազար վեց հարիւր վաթ-

սունևհինգ բուռնց, գաւազան ու խարազան. և զիս սեանը կապած ատեննին՝ հրեցին զարկին գլխուս հազար անգամ։

Երբ խաչը կռնակս դրին՝ երեք անգամ անխնայ գետինը ձգեցին զիս՝ մեռցնելու համար։

Շատ անգամ երեսս թքին՝ զիս բռնող և չարչարող դահիճները, որ էին հինգ հարիւր հոգի։

Մարմնոյս վրայ շատ տեղ վէրքեր բացուեցան, և բոլոր մարմինէս վազած արիւնին կաթիլները 17002 կաթիլ է։

Ուստի, նախ, թէ որ մէկը մինչև տասներկու տարի ըսէ օրը եօթն Հայր մեր և եօթն Ողջոյն, որ է իմ այս թափած արեան կաթիլներուս թիւն, կ'ընդունի լիակատար ներողութիւն, թէ որ խոստովանի ու սրբութիւն առնու, մաքրուելով մեղքերէն։ — Երկրորդ, կ'ազատեմ գինքը քաւարանէն։ — Երրորդ,

թէ որ տասներկու տարին չլմնցուցած՝ մեռնի, այս Չերմեռանդութիւնը ամբողջապէս կատարած կը համարուի։ — Չորրորդ, իմ անուանս համար արիւն թափող մարտիրոսաց վարձքը կ'ընդունի։ — Հինգերորդ, մեռնելու ժամանակն ես կու գամ կ'առնում իր հոգին, և որչափ որ քաւարանին մէջ ազգական ունի՝ մէկտեղ կ'առնեմ Արքայութիւն կը տանիմ։ — Վեցերորդ, ո՛ր տան մէջ որ գտնուի այս Չերմեռանդութիւնս ընողն, այն տանը մէջ ամենևին սատանայական փորձութիւն չըլլար, և գիշեր ատեն գէշ երազներ չի տեսներ։ — Եօթներորդ, յանկարծական մահուամբ չի մեռնիր՝ այս աղօթքս Չերմեռանդութեամբ ընողն։ — Ութերորդ, այս աղօթքը ընող կըննիկ մարդիկ առանց վտանգի կը ծնանին իրենց զաւակները։

— Իններորդ, ամենևին սատանայական կախարդութիւններ չի անցնիր այս Ջերմեռանդութիւնս ընողին վրայ։

Այս աղօթքս Ջերմեռանդութեամբ կատարողն՝ թող խնդրէ Աստուածմէ չնորհք և բարեխօսութիւն Մօր Տեառն, որ միշտ գըթութիւն անպակաս ընելով՝ Ջերմեռանդութիւնն աւելցնէ, վառէ միշտ սիրտը սիրով և չհեռանայ Ջերմեռանդութիւնէ։

Ա Ղ Օ Թ Ք

Քեզ կ'աղաչեմ, Յիսուս Քրիկիչ, և գքեզ կը գովեմ ամենաստեղծիչ, ողորմէ ամենայն Քրիստոնէից և բովանդակ աշխարհի։

Ով գթած Յիսուս, կ'աղաչեմ քեզ, աւելցուր իմ Ջերմեռանդութիւնս, որ կարենամ միւս աշխարհի հանգստութիւնը գըտնել յաւիտենից. Ամէն։



ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ՕԺՏՈՒԱԾ ՍԼԱՔԱԿԱՆ ԱՂՕՔՔՆԵՐ

Աղօթքին վերջը դրուած թիւը կը ցուցնէ Ներողութեան օրերը։

Ա

ԱՒ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն։

50 օրուան Ներողութիւն կ'ունենայ՝ ով որ պարզապէս կը խաչակնքէ ինքզինքը — 100 օր Ներ. օրհնած Ջրով խաչակնքողին։

Աստուածդ իմ, կը հաւատամ քեզի, վասնզի դու ինքն ես ճըշմարտութիւն։

Աստուածդ իմ, կը յուսամ քու վրադ, որովհետև հաւատարիմ ես։

Աստուածդ իմ, բոլոր սրտովս կը սիրեմ զքեզ, վասնզի դու գեր ի վերոյ սիրելի ես, և կը սիրեմ ընկերս իմ անձիս պէս՝ քու սիրոյդ համար։

7 տարի, 7 քառաս. — Լիակատար, ամիս մը՝ ամէն օր ըսողին։

Աստուածդ իմ, հաւատքիդ մէջ պահէ զմեզ։ 100

Աստուածդ իմ և ամեն ինչ։ 50

Օրհնեալ ըլլայ Աստուածդ։ 50

Ո՛վ Աստուածդ իմ, տուր որ սիրեմ զքեզ, և իմ սիրոյս փոխադարձ վարձատրութիւնն ըլլայ՝ միշտ դեռ աւելի սիրել զքեզ։ 100

Ամէն բանի մէջ կատարուի՛, գովուի՛ և փառաւորուի՛ միշտ՝ Աստուծոյ ամենարդար, ամենասուրբ և ամենասիրելի կամքը։ 100

Բ

ԱՒ ՀԱՅՐՆ ԱՍՏՈՒԱԾ

Հայր յաւիտենական, քեզ կը նուիրեմ Յիսուսի Քրիստոսի անգին Արիւնը՝ իմ մեղքերուս քաւութեան և սուրբ Եկեղեցւոյ պիտոյից համար։ 100

Ամիս մը ամէն օր ըսողին՝ լիակատար ներողութիւն։

Հայր յաւիտենական, Յիսուսի Քրիստոսի անգին Արեամբը փառաւորէ՛ իր ամենասուրբ Անունը, համաձայն դիտաւորութեան և ըղձից Իր աստուածային Սրտին։ 300

Գ

ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ո՛վ Յիսուս: 25
Տէր իմ Յիսուս, ողորմեա՛: 300
Յիսո՜ւս, Աստուածդ իմ, ամէն բանէ վեր զքեզ կը սիրեմ: 100

Ո՛վ ամենաբարեգութ Յիսուս, մի՛ դատեր, այլ փրկէ զիս: 50

Յիսո՜ւս, Որդի Դաւթի, ողորմեա՛ ինձ: 100

Ամենաքաղցր Յիսուս, աճեցուր իմ մէջս հաւատք, յոյս և սէր, և տո՛ւր ինծի զղջացեալ և խոնարհ սիրտ մը: 100

Գ

ԱՌ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ո՛վ Յիսուս՝ որ Սուրբ Հաղորդութեան մէջ ես, ողորմէ՛ մեզի: 300

Յիսո՜ւս, Աստուածդ իմ, կը պաշտեմ զքեզ՝ որ ներկայ ես սուրբ սիրոյդ խորհուրդին մէջ:

100 Իւրաքանչիւր անգամ Ս. Տապանակին առջև ծնրադրելուն:
300 Ով որ երկու ծունկով երկրպագութիւն կ'ընէ Ս. Հաղորդութեան՝ երբ ի բազմոցի դրուած է:

Տէր իմ և Աստուա՛ծ իմ:

7 տարի և քառաս. ո՛վ որ հաւատ-

քով կը նայի և կ'երկրպագէ Պատարագի «ի սուրբ, ի սուրբ» աղօթքին և ի բազմոցի դրուած աթեն, — Լիակատար. շաբաթ մը ամէն օր ըսողին։

Գովութիւն և չնորհակալութիւն միշտ և հանապազ ամենասուրբ և աստուածային խորհրդոյն։

100. — Լիակատար ամիս մը ամէն օր ըսողին։

Ե

ԱՌ Ս. ՍԻՐՏՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Օրհնեա՛լ ըլլայ ամենասուրբ Սիրան Յիսուսի Հաղորդութեան խորհրդոյն մէջ։ 300

Գովութիւն, երկրպագութիւն, սէր և չնորհակալութիւն մատու-

ցուի միշտ ամենասուրբ Սրտին Յիսուսի՝ որ Հաղորդութեան խորհրդոյն մէջ է երկրագունիս բոլոր տապանակներուն մէջ՝ մինչև աշխարհիս վերջը. Ամէն։ 100

Պաշտենք, չնորհակալ ըլլանք, աղերսենք և մխիթարենք, Անարատ Յղացեալ Մարիամու հետ, Յիսուսի ամենասուրբ և ամենասիրելի սիրտը՝ Սուրբ Հաղորդութեան մէջ։ 200

Ո՛վ բարեգութ Սիրտ Յիսուսի ամենասուրբ խորհրդոյն մէջ,

Օրհնեա՛լ Սիրտ Յիսուսի ամենասուրբ Հաղորդութեան մէջ, օրինակ քահանայական սրտի, գթա՛ մեզի։ 300

Զ

ԱՒ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Ամենասուրբ Սիրտ Յիսուսի՝ կը հաւատամ ինծի ունեցած սիրոյդ։ 300

Ամենասուրբ Սիրտ Յիսուսի՝ բոլոր յոյս քու վրադ դրած եմ։ 309

Ի՛սկատար ամիս մը ամէն օր ըսողին։

Ամենասուրբ Սիրտ Յիսուսի՝ թո՛ղ հասնի չուտով Արքայութիւնդ։ 300

Ամենասուրբ Սիրտ Յիսուսի, ողորմէ՛ մեզի։ 300

Սիրտ Յիսուսի, աղբիւր ամենայն մաքրութեան, գթա՛ մեզի։ 100

Ամէն ինչ քեզի համար ըլլայ, ով Ամենասուրբ Սիրտ Յիսուսի։ 300

Քաղցրագութ Սիրտ Յիսուսիս, եղի՛ր իմ սէրս։ 300

Ո՛վ Սիրտ սիրոյ, քու վրադ կը հաստատեմ իմ բոլոր վստահութիւնս, վասնզի ես ամէն բանէ կը վախեմ տկարութեանս համար, սակայն քու բարութիւններէդ ամենայն ինչ կը յուսամ։ 300

Ո՛վ քաղցրագութ Սիրտ Յիսուսիս, տո՛ւր որ միշտ դեռ աւելի սիրեմ զքեզ։ 300

Ի՛սկատար, ամիս մը ամէն օր ըսողին։

Յիսո՛ւս, որ քաղցր և խոնարհ ես սրտով, իմ սիրտս ալ նման ըրէ քու սրտիդ։ 100

Սիրեցեա՛լ ըլլայ ամէն տեղ՝ ամենասուրբ Սիրտն Յիսուսի։ 100

Փառք, Սէր, և Շնորհակալութիւն առ ամենասուրբ Սիրտն Յիսուսի։ 300

Սի՛րտ Յիսուսի օրհասական, գթա՛ մահամերձ հոգիներուն։ 300

Աստուածային Սի՛րտ Յիսուսի, դարձ տուր մեղաւորաց, փրկէ՛ մահամերձ եղողները, ազատէ՛ Քաւարանի սուրբ հոգիները։ 300

Է

ԱՌ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Ե՛կ, Սուրբ Հոգի, լեցուր զիս՝ նորհքներովդ և վառէ՛ հաւատացեալոցդ սրտին մէջ՝ Քու սիրոյդ հուրը։ 300

Ը

ԱՌ ՅԻՍՈՒՍ ԵՒ ԱՌ ՄԱՐԻԱՄ

Յիսո՛ւս, Մարիա՛մ։ 300, նոյն իսկ անձայն՝ սրտով ըսողին։

Քրիստոնեից Ողջոյնը. — Օրհնեա՛լ ըլլան Յիսուս և Մարիամ։ — Այժմ և միշտ և յաւիտեան։ 100

Թ

ԱՌ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ

Օրհնեա՛լ ըլլայ սուրբ և անարատ Յղութիւնը՝ գերահրաշ Կուսին Մարիամու Աստուածածնի։ 300

Ո՛վ Մարիամ, Անարատ Յղացեալ, մեզի համար՝ որ Քեզի կ'ապաւինինք: 100

Մարիամ, կոյս Անարատ Մայր Աստուծոյ և Մայր մեր, աղօթէ՛ առ Յիսուս մեզի համար: 300

Անուշակ Սիրտ Մարիամու, իմ փրկութիւնս եղիր: 300

Լիակատար, ամէն մը ամէն օր ըսողին:

Մարիամ, յոյս մեր, գթած մեզի: 300

Տիրամայր սուրբ Սրտին, աղերսէ՛ մեզի համար: 100

Տիրամայր Լուրտի, աղերսէ՛ մեզի համար: 300

Ո՛վ Տիրուհիս, ո՛վ Մայր իմ, յիշէ՛ որ ես Քեզի կը պատկանիմ. պահէ՛ և պաշտպանէ զիս՝ իբրև քու ինչքդ և ստացուածքդ: 40

Սրբուհի՛ Մարիամ, ազատէ զմեզ սատանային մեղքերէն: 100

Սրբուհի՛ Մարիամ, Ազատարար, աղօթէ՛ մեզի և քաւարանի հոգիներուն համար: 100

Ո՛վ Տիրուհի մեր, օգնական մշտնջենաւոր, մեզի համար:

ԱՌ Ս. ՅՈՎՍԷՓ

Ո՛վ Ս. Յովսէփ, տիպար և պաշտպան Յիսուսի. Ս. Սրտի բարեկամութեուն, աղօթէ՛ մեզի համար: 100

Սո՛ւրբ Յովսէփ, հայրագիր մեր Փրկչին Յիսուսի և ճշմարիտ փեսայ Կուսին Մարիամու, աղօթէ՛ մեզի համար: 300

Ո՜վ Ս. Յովսէփ, չնորհէ՛ մեզի որ սրբութեամբ անցնենք կեանքերնիս։

— Քու հովանւոյդ տակ ապահով և անվտանգ ապրինք։ 300

ԺԱ

ԱՒ ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔ

Յիսո՛ւս, Մարիա՛մ և Ս. Յովսէփ.

7 տարի և 7 քառասունք. — Լիակատար ամէն օր՝ ամիս մը ըսողին։

Յիսուս, Մարիամ և Ս. Յովսէփ, ձեզի կը նուիրեմ սիրտս, հոգիս և կեանքս։

— Յիսուս, Մարիամ և Ս. Յովսէփ, ներկայ եղէ՛ք և օգնեցէ՛ք ինծի հոգեվարքիս ատեն։

— Յիսուս, Մարիամ և Ս.

Յովսէփ, արժանի ըրէ՛ք զիս խաղաղութեամբ մեռնելու՝ զձեզ ընկեր ունենալով։ 300

ԺԲ

ԱՒ ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿԱՑ

Ո՜վ հրեշտակդ Աստուծոյ, դու որ իմ պահապանս ես, և աստուածային բարութիւնը զիս քու խնամոցդ յանձնած է, լուսաւորէ՛, պահպանէ՛, պաշտպանէ՛ և ուղղէ՛ զիս։ 100

Ո՜վ սուրբ Միքայէլ Հրեշտակապետ, պաշտպանէ՛ զմեզ կեանքի պատերազմին մէջ, որպէս զի դատաստանին սոսկալի օրուան մէջ չդատապարտուինք։ 100

ԺԳ

ՋԱՆԱՋԱՆ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ

ԱՂՕԹՔՆԵՐ

Տէր Յիսուս, Քու աստուածային սրտիդ պաշտպանութեան տակն այս Քահանայապետը՝ մեր Սրբազան Հայրը. եղիր իրեն լոյս, զօրութիւն, և միխիթարութիւն: 300

Աստուած իմ, ճշմարտութեան մէջ հոգիներու միութիւն պարգևէ և եղբայրական սիրոյ մէջ՝ սրտերու միացում: 300

Մարիամ ցաւագին, Մայր ամենայն քրիստոնէից, աղաչէ՛ մեզի համար: 300

Աստուած իմ, այսօր աշխարհիս վրայ մատուցուած բոլոր Պատարագները փեզի կը նուիրեմ, այն ամէն մեղաւորներուն դարձին համար՝ որոնք հոգեվարքի մէջ են և այսօր պիտի մեռնին: Քո՛ղ Յիսուսի պատուական ս. արիւնը անոնց համար գթութիւն ստանայ: 300

Պարգևէ, Տէր, յաւիտենական հանգիստ, և մշտնջենաւոր լոյսդ ծագէ՛ անոնց: — Տո՛ւր որ հանգչին անոնք խաղաղութեան մէջ. Ամէն: 300

Օրհնեա՛լ ըլլայ Աստուած:

Օրհնեա՛լ ըլլայ իր սուրբ Անունը:

Օրհնեա՛լ ըլլայ Յիսուս Քրիստոս, ճշմարիտ Աստուած և ճշմարիտ մարդ:

Օրհնեա՛լ ըլլայ Յիսուսի սուրբ անունը:

Օրհնեա՛լ ըլլայ Յիսուսի սուրբ սիրտը։

Օրհնեա՛լ ըլլայ Յիսուս, Ամենասուրբ Հաղորդութեան Խորհուրդին մէջ։

Օրհնեա՛լ ըլլայ մեծափառ Մայրն Աստուծոյ, Ամենասուրբ Կոյս Մարիամ։

Օրհնեա՛լ ըլլայ Մարիամու սուրբ և Անարատ Յղութիւնը։

Օրհնեա՛լ ըլլայ Մարիամու Անունը, Կոյս և Մայր։ —

Օրհնեա՛լ ըլլայ սուրբն Յովսէփ, պաշտպան՝ Տիեզերական Եկեղեցւոյ։

Օրհնեա՛լ ըլլայ Աստուած իր Հրեշտակաց և Սուրբերուն մէջ։

Տարի մը ներողութիւն մէկ անգամ ըսողին։

Որքան անգամ որ ըսուի՝ այնքան տարի ներողութիւն։

Աղօթք վասն դարձի և կարողիկեայ միութեան ազգիս։

Հաշտարար ընծայ Հօր ազգի մարդկան, Քրիստոս Աստուած, զեկեղեցի քո հաստատեա խընդրուածովք նահատակաց ի քէն ընտրելոց, բարերար Փրկիչ, միայն մարդասէր։

Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց, զեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեա՛ յուխտութիւն, զվարատեալս տըրտմութեամբ և արտաստուաց յորդահոս բղխմամբ, փրկութեան մերոյ պարգևաց բաշխող։

Սրբազան քահանայապետն Լևոն ԺԳ շնորհէ 200 օրուան ներողութիւն, օրն մի՝ անգամ ո՛վ որ այս աղօթքս գրուցելու լինի։

Յամի Տեառն 1889, յունուար 29։

ՅԱՆԿ

Խրատք քրիստոնէական կենաց. 3
Աղօթք առաւօտեան 11
Մտածութիւնք վասն աւուրց եօթնեկի 17
Յիսուսի չարչարանաց վրայ շաբթական մտածականներ . 56
Աղօթք Պատարագի 105
Աղօթք խոստովանութեան և հաղորդութեան 124
Աղօթք առաջի խաչելութեան . 153
Աղօթք այցելութեան առ ամենասուրբ Հաղորդութիւնն . 155
Ներգործութիւն հոգևորական հաղորդութեան 159
Այցելութիւն առ սուրբ Աստուածածնին. 161
Աղօթք աստուածպաշտութեան և հաւատոց աճման համար . 182
Աղօթք առ սուրբ Կոյան թագուհի առաքելոց. 184
Ջերմեռանդական դիտաւորութիւնք 186
Աղօթք առ սուրբ Երրորդութիւն. 188
Աղօթք ի վոխարէն մարդկանց մեղքերուն 190
Աղօթք վշտաց և նեղութեանց միջոց 192
Ճանապարհ խաչի. 194
Կրթութիւն ջերմեռանդութեան սրտին Յիսուսի 219
Եօթն նուէրք Քրիստոսի անգին արեանը 226
Աղօթք առ սուրբ Հոգին· . . 230
Կրթութիւն ի պատիւ ցաւագին սրտին Մարիամու . . . 232
Աղօթք առ սուրբ Կոյան. . . 236
Աղօթք առ Մխիթայէլ հրեշտակապետն 241
Աղօթք առ պահապան հրեշտակն. 242
Ցաւք և ուրախութիւնք Ս. Յովսեփայ. 243
Աղօթք առ Ս. Առաքեալս Պետրոս և Պօղոս. 249
Աղօթք առ Ս. Ստանիսլաւոս . 250
Աղօթք առ Ս. Լուիճի Կոնձակա. 255
Խորհուրդք Վարդարանի. . . 257
Պաղատանք առ Ս. Կոյան . . 262
Աղօթք բարի մահ ունենալու համար 268

Համառօտ Քրիստոնէական Վարդապետութիւն 274
Իղձք առ Մարիամ կոյս անարատ 285
Տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի ողբերգութիւն անձին զղջացելոյ, և բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար . . . . .
Տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի երգ ազօթական ի դէմս սրբոյ Երրորդութեան, և իւրաքանչիւրոյ դիմի Երրորդութեան առանձնակի . 292
Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւրաց գիշերայնոց՝ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ . . 298
Ազօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ . . . 301
Ազօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ՝ ի Քրիստոս, զոր արարեալ է Տեառն Ներսես Հայոց կաթողիկոսի . 303
Ազօթք Մանասէի թագաւորին . 312
Տեարակ սուրբ Վարդարանի. որ ամենասուրբ Աստուածածնայ պատուոյն համար կ'ըսուի. 317

Խորհրդածութիւն սուրբ Վարդարանին 317
Վարդարանը ըսելու դիւրին եղանակ 323
Իրատ սուրբ Վարդարանը ըսելու կերպին համար . . . 326
Ազօթք Վարդարանին ի խորհուրդ ուրախութեան սուրբ Աստուածածնի 330
Յաւուր Երկուշաբաթի, Երեքշաբաթի և Շաբաթու . . —
Ի խորհուրդ չարչարանացն Քրիստոսի 341
Յաւուր Չորեքշաբաթի և Ուրբաթու. . . . . —
Ի խորհուրդ փառաւորութեան Քրիստոսի 351
Յաւուր Կիւրակէի և Հինգշաբաթու . . . . . —
Ազօթք առ սուրբ կոյսն Մարիամ 361
Ազօթք առ սուրբ Դոմինիկոս . 363
Երեքօրեայ կամ իննօրեայ Յերմեռանդութիւն առ Ս. Աստուածածին Լուրդի. . . 367
Ազօթք վասն հիւանդաց . . . —
Մաղթանք Ս. Աստուածածնի Լուրդի 371

15/10

Աղօթք որ և իցէ շնորհք խնդրե-
լու. 379
Աղօթք հրաշագործ Ջուրը խմողին
կամ Ջուրը հիւանդին տուո-
ղին 382
Աղօթք շնորհակալութեան որ և
իցէ շնորհք ընդունելէ վերջը 384
Տեսիլք սրբուհի Եղիսաբեթի և
սրբուհի Բրիճիտայի . . 388
Ներողութիւններով օժտուած սը-
ւաքական աղօթքներ . . 393

ՄԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ՀՍՍՌ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՍՆ

1889

00458

2013

2001

<< Ազգային գրադարան

NL0015329